ԲԱԳԻՆ

Pakine

ԾԴ. տարի, թիւ 4

Հոկտեմբեր / Նոյեմբեր / Դեկտեմբեր 2015

Գրականութիւն - Արուեստ - Իմացական Աշխարհ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ՕԳՆԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ
Նորա Բարսեղեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Մովսէս Հերկելեան (Լիբանան)
Շուշիկ Տասնապետեան (Լիբանան)
Յակոբ Տէր Ղուկասեան (Լիբանան)
Զաքար Քէշիշեան (Լիբանան)
Անուշ Թրուանց (Հայաստան)
Արքմենիկ Նիկողոսեան (Հայաստան)
Հրանդ Մարգարեան (Մ. Նահանգներ)
Աւետիս Հաճեան (Մ. Նահանգներ)
Յարութիւն Պէրպէրեան (Գանատա)

Հասցէ՝
Պուրճ Համուտ
Շաղզոյեան կեդրոն
Բ. յարկ
E mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961 1 241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան»
տպարանի

Ցրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղզոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռ. (01) 241263/4
Ֆաքս. (01)260329
Փոստարկղ. 80 1096 Պ. Համուտ
E-mail: imphamaz@inco.com.lh

Հրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան

ԲԱԳԻՆ

Հոկտեմբեր / Նոյեմբեր / Դեկտեմբեր 2015

ԾԴ. ՏԱՐԻ, ԹԻՒ 4

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

■ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ԵՒ ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԵՔՍԻԵՒԻՉ ՄԵՆԱՏԻՐԱԿԱՆ ԽԱՒԱՐԻ ՀՈԳԵԽՈՅԷՆ ՓՐԿՈՒԵԼՈՒ ՓՈՐՁ — 1

■ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ
Ո՞Վ ՍՊԱՆՆԵՑ ԻՄ ՊԱՊԻՆ - Լեռ Կամսար — 4
ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՒՆ ՎԵՐՋԸ ԿԱՄ ՊԱՏՐԱՆԱԹԱՓՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ - Սվետլանա Ալեքսիեւիչ — 25
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՓՐԹԱԾ ՁՐՀԵՂԵՂԸ ԱՆԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ - Սուրէն Դանիէլեան — 47
ԱՒԻԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ* ՅՈՒՇ, ԿԵԱՆՔ ԵՒ ԱՆՑԵԱԼ ԿԸ ԳՐԱԿԱՆԱՑՆԷ - Յակոբ Պալեան — 52
ՀԻՆԳ ՆԱՄԱԿՆԵՐ ԹԷՈԴԻԿԷՆ - Վարդան Մատթէոսեան — 68
ԵՐԳԻԾԱՆՔԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄԸ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ - Լիանա Սանթրեան — 81
ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ. ԳԻՒՂԻ ՀԵՔԻԱԹԸ - Մարինէ Ղազարեան — 85

■ ԱՐՁԱԿ
ԱՖՏՈՆ Հրաչ Բեգլարեան — 38

■ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ
ԱՐԴ ԱՒԵՐՈՒՈՂ ՄԵՌՆՈՂ ՅՈՒՇԱՐՁԱՆ Է - Աւետիք Իսահակեան — 59
ԲՆՈՒԹԵԱՆ ՉՈՐՍ ՏԱՐՐԵՐԸ - Էդուարդ Իսահակեան — 63
ԲԱՌԵՐՍ ՄՏԵՐԻՄ - Յակոբ Պալեան — 66
ԴՈՒՆ ԳԻՏԵՍ - Խաչիկ Տէտէեան — 67

■ ԱՐՈՒԵԱՏ
ՍԻՐՈՒՆ ԵՐԷՑԵԱՆ՝ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԵՐՈՒ ԳՈՅՆԻ ՔՐՄՈՒՀԻ - ԲԱԳԻՆ — 90

■ ՄԵՐ ԿՈՐՈՒԱՏՆԵՐԸ
Զարեհ Խրախունի - Լեւոն Մութաֆեան — 96



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER

«Բագին» ամսագրի գլխաւոր խմբագիր Յակոբ Պալեան
Յարգարժան պարոն Պալեան

Շնորհաւորում եմ Ձեզ եւ Ձեր ղեկավարած խմբագրակազմին Սուրբ Ծննդեան եւ Ամանորի փօսների կապակցութեամբ:

Մենք բարձր ենք գնահատում Ձեր գործունէութիւնը, մասնաւորապէս Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները պատշաճ մակարդակով լուսաբանելու, Հայ դպրը եւ Հայոց պահանջատիրութեան խնդիրները անաչառ ձեւով համաշխարհային հանրութեանը ներկայացնելու համար:

2016 թուականը՝ Հայոց պետականութեան վերակերտման 25-ամեակի տարին, նոր ու աւելի պատասխանատու տարի է հայրենական եւ սփիւռքեան ԶԼՄ-ների համար: Այն Ձեզ համար թող լինի հնարաւորութիւնների եւ դրանց իրագործման բացառիկ, արգասաբեր տարի:

Թող Տիրոջ Աջը հովանի եւ զօրակից լինի բոլորիդ ազգանուէր ձեռնարկներում եւ թող Սուրբ Ծննդեան Լոյսն առաջնորդի աշխարհասփիւռ հայ ժողովրդին՝ ի բարօրութիւն Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի:

Հարգանքով՝
ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Կողքի նկար՝ Պատկերազարդ ինքնանկար
Եաեւի կողքի նկար՝ Ֆետայիներ
Գործ՝ Սիրուն Երէցեանի

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ԵՒ ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԵՔՍԻԵՒԻՉ ՄԵՆԱՏԻՐԱԿԱՆ ԽԱՒԱՐԻ ՀՈԳԵԽՈՅԷՆ ՓՐԿՈՒԵԼՈՒ ՓՈՐՁ

Ես պարտաճանաչ կոլխոզնիկի նման յանձնել եմ իմ «պետպարտաւորութիւնը» ստալինեան դարաշրջանին: Տաժանակրութեան եմ գնացել ամբողջ 20 տարի: 20 տարի քայլել եմ, երկու կողմս ունենալով երկու սուինաւոր պահակներ: Եւ ազատուելուց յետոյ էլ, դեռ երկար չկարողանալով ազատուել այդ մղձաւանջից, քայլել եմ նրանց ուրուականների հսկողութեամբ, ինքնակալանաւորման ենթարկելով ինքս ինձ:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ, անտիպ, տե՛ս «ԲԱԳԻՆ»ի այս թիւով, էջ 5
Շաբաթ, 23 յունիս 1961թ.

Ստալինը իր ղեկավարութեան ժամանակ ամենայն անկեղծութեամբ յայտարարում էր.- Ես արիւնարբու գազան եմ ու մարդ եմ սպանում: Ինձ համար մարդն ու ճանճը միեւնոյն արժէքն ունեն:

Եւ մարդը ժողովրդից համակրանք չէր սպասում:

Բայց Խրուշչովը ներկայիս կամենում է երկու ձմերուկ բռնել իր մէկ ձեռքով: Ուզում է եւ ժողովրդի համակրանքը վաստակի, եւ մարդ սպաննի: Այսպէս՝ նա ցերեկը մարդասէր է, գիշերը՝ մարդասպան:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ, «Կարմիր օրեր» օրագիր,
անտիպ, տե՛ս «ԲԱԳԻՆ»ի այս թիւով, էջ 21

Դու մի ասի, Չեկան, մագնիտոֆոնը միացրած, մեզ լսում է իր թաքստոցից...

Մտածելով, որ Ամերիկա վերադարձին Կիլոն կարող է այս բոլորը պատմել աշխարհի հայութեանը, եւ գաղտնիքը բացուի, նոյն գիշերը խեղդում է հիւրանո-

ցում իր «հիւրին» եւ յայտարարում «յանկարծամահ»...

Ու ես հիմա այսքան արդարացուք չեմ ճարում ողբալու այդ անմեղ մարդու կորուստը, որ մեռաւ իմ պատճառով:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ, նոյն տեղը, տե՛ս «ԲԱԳԻՆ» էջ 21

.....

Ներկայիս աշխարհը այլեւս չէ բաժնուած բանտ մնացածներու եւ զիրենք հոն դրկածներու միջեւ, կամ անոնց միջեւ, որոնք Սոլժենիցին կարդացած են կամ չեն կարդացած, այլ անոնց, որոնք կրնան գնել եւ այդ չեն կրնար ընել:

.....

Ստալինէն եւրք, մեր մօտ, մահը նոյն ձեւով չենք տեսներ... Կը յիշենք եղբայրներ, որոնք իրենց եղբայրները կը սպաննէին... Մարդիկ զանգուածային մահապարտիժի կ'ենթարկուէին եւ չէին գիտեր, թէ ինչու զիրենք կը սպաննէին... Այդ մեր մէջ մնացած է, այդ միշտ ներկայ է մեր կեանքին մէջ: Մենք մեծցանք դահիճներու եւ զոհերու մէջ... Մեզի համար բնական է միասին ապրիլ: Սահման չկայ խաղաղութեան վիճակի եւ պատերազմական վիճակի միջեւ: Երբ հեռատեսիլը կը միացնենք, ամէն ոք կը խօսի յելուզակներու լեզուն. քաղաքական մարդիկ, գործարարներ, եւ... նախագահը: Կաշառել, նուէրներով գնել, ձեռաձիր տալ (պաքշիշ)... մարդկային կեանքը նապաստակի փուք մը անգամ չ'արժեր: Ինչպէս աքսորավայրերու ճամբարներու մէջ...

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԵՔՍԻԵՎԻՉ,
«Կարմիր մարդուն վերջը կամ պատրանաթափութեան ժամանակը», տե՛ս՝ էջ 25

Լեռ Կամսարի գրականութիւնը մեր ներազգային վանդակէն դուրս չ'ելլեր, չէ ելած: Ինչպէ՛ս ելլէր: Սվետլանա Ալեքսիեւիչ համաշխարհային լսարան ունի: Երկու գրողներն ալ նոյն ցաւերը կը պատմեն, նոյն մղձաւանջը:

Պէտք չէ հեռանալ պարզ իմաստութենէն. բաղդատելին պէտք է բաղդատել: Երբ անով չենք առաջնորդուիր կեանքի մէջ, ընկերային, քաղաքական, մշակութային, եւ մեր եսին հետ, ընդառաջ կ'երթանք բացասականութիւններու, կը զարգանան փառասիրութիւններ, չարաշահումներ:

Երկու անուններու ներկայութիւնը նոյն խորագիրին տակ զարմացնող կրնայ թուիլ: Լեռ Կամսար հայ մըն է, Հայաստան ապաստանած վանեցի մը, որուն կեանքին տասնեակ տարիները մաշած են «կարմիր» աքսորին մէջ: Ան ծանօթ է ներազգային սահմաններու մէջ: Սվետլանա Ալեքսիեւիչ խորհրդային այլախոհ մըն է, լրագրող, գրող, որ դուրս եկած է ներխորհրդային սահմաններէն, իր խօսքը համամարդկային կշիռ ստացած է: Զոյգ վկայութիւններ՝ փլուզուած բռնատիրական կայսրութիւն-աշխարհի մը մասին: Մին համաշխարհային տարածում ունի, միւսը մեր ժողովուրդի ներսը հազիւ կը յիշուի:

Լեռ Կամսարի խօսքը կրնա՞ր համամարդկային դառնալ, պզտիկ Հայաստանի եւ համրանքի կշիռ չունեցող հայ ժողովուրդի վանդակէն դուրս գալ:

Հարցումները աւելի կարեւոր են, քան անոնց տրուած պատասխանները, կ'ըսէր մեծն Սոկրատ:

Բռնատիրութեան անկումէն եւրք, ո՛չ նախկին հանրապետութիւններու մէջ, եւ ոչ ալ

այսպէս կոչուած միջազգային կազմակերպութիւններու կողմէ մարդիկ դատի կանչուեցան: Փղոսկրեայ Ափի նախագահ Լորան Կպակոն պիտի դատուի... Սերպիոյ նախագահն ալ Լա Հէյի մէջ դատեցին: Հայաստան պատասխանատուութեան կանչուողներ չեղան: Լեռ Կամսարի «Դիմում»ը եւ թոռան՝ Վանուհի Թովմասեանի ընդվզումը անարձագանգ մնացած են օրին եւ այդպէ՞ս պիտի մնան (տե՛ս այս թիւով էջ 4): Խորհրդային Միութեան մէջ տեղի ունեցած ոճիրներու մասին կը խօսի Սվետլանա Ալեքսիեւիչ, զոհերու մասին, բայց ոչ ինք եւ ոչ ալ ուրիշներ կը խօսին յանցաւորները դատարան տանելու մասին, նախկին Խ. Միութեան ժողովուրդները եւ միջազգային համայնքը: Ինչո՞ւ դատեցին Արժանթինի զօրավարները, Չիլիի Փինոշէն եւ դատ չկայ Խ. Միութեան իշխանութեան օրերու պետական մակարդակով գործուած ոճիրներուն՝ հրաժարելով անորոշ ընդհանրութիւններէ:

Սվետլանա Ալեքսիեւիչի գրականութիւնը խաւարի մէջ մնացած ոճիրներու աշխարհի թատրոնն է: Բեմը սպալինեան շրջանէն կը տարածուի մինչեւ Կորպաչեւ եւ մինչեւ մեր օրերը, ուր կան չեչէններ, ազրպէյճանցիներ, հայեր, ուքրանացիներ, պելոռուսներ, տաճիկներ, ռուսեր... Չերնոպիլը, Աֆղանիստանի պատերազմը, զինկէ դագաղներուն մէջ հոնկէ եկած երիտասարդները եւ հաշմուածները:

Համեմատութիւնները պահելով հանդերձ, եթէ գրականութիւն մշակուէր Լեռ Կամսարի հետքերով, առանց քամակ ծռելու, հայկական հարցերը գրական-մշակութային այլ արձագանգ կ'ունենային, ոչ միայն զբօսաշրջային: «Արմէնիա» պանդոկին մէջ, կասկածելի պայմաններու մէջ ամերիկահայ «Կիւլոյի մահը» սոսկ լրագրական տեղեկութեան կամ օրագիրի սահմաններէն անդին կ'անցնէր, եթէ գրական մշակման ենթարկուէր (տե՛ս՝ էջ 2): Հայաստանի գրողներէն շատեր ծանօթ են պատմութեան, ժամանակակից եղած են, քայլ պահած, տառապած:

Հայաստանի մէջ արխիւները չեն բացուիր: Օրին, ներքին գործոց նախարար մը ըսաւ, որ Հայաստան պզտիկ տեղ է, մէկը միւսը կը ճանչնայ, եւ մեծ խնդիրներ կրնան ծագիլ: Սվետլանա Ալեքսիեւիչի պատմած մատնութիւնները եղած են նաեւ Հայաստանի մէջ: Վանուհի Թովմասեանի այրող հարցումը կը մնայ օդէն կախուած. «Ո՞վ սպաննեց իմ պապին»:

Ընդարձակ գրականութիւն ունի Լեռ Կամսար: Կարելի՞ չէ «հատընտիր» մը կազմել եւ թարգմանել: Այդ պարագային լեզուական անհարթութիւնները կ'անհետանան, եւ կ'ունենանք «աքսորի գրականութիւնը»:

Ծովը նետուած շիշի մը մէջ դրուած ցանկութիւն՝ որ խօսուի անհատներու եւ հաւաքականութիւններու ճակատագիրին մասին, գացող չվերադարձողներուն:

Հայաստան կը խօսին «գենէֆոնդ»ի մասին:

Ի՞նչ պատահեցաւ մեր ֆիզիքական եւ հոգեկան «գենեֆոնդ»ին: Խօսիլ առանց սեթեւեթի: Թերեւս կը բացատրուի Հայաստանը դատարկած եւ դատարկող զանգուածային արտագաղթը՝ միլիոններով, Քալիֆորնիա կամ Մոսկուա, մեզ այլասերած եւ այլասերող օտարախօսութիւնն ու օտարագրութիւնը:

«Դուրս»էն չի բացուիր այս թղթածրարը: Ինչո՛ւ չյիշեցնել պետական այրերուն, որ պէտք է բանալ արխիւները անցեալին հետ մեր հաշիւները մաքրելու համար, եւ մտաւորականութեան, որ այդ շրջանը դրուագէ մարդկային յիշողութեան որպէս էջ:

Սփիւռքը սոսկ հանդիսատես չէր եւ պէտք չէ ըլլայ:

«ԲԱԳԻՆ»

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

ՈՐՎ ՍՊԱՆՆԵՑ ԻՄ ՊԱՊԻՆ

Վանուհի Թովմասեան՝ Լեռ Կամսարի թոռնուհին, անոր ժառանգութեան պահակն է: Տէր արխիւին: Կը հրատարակէ գործերը: Մեզի տրամադրած է անտիպներ: Ափսոս, որ Լեռ Կամսարի գործերու հատընտիր մը գիտական եւ որակաւոր թարգմանութիւններով չի հրատարկուիր՝ որպէս երգիծական գրականութիւն եւ ժամանակաշրջանի մը վկայութիւն: Գրական բծախնդրութեամբ թարգմանութիւն մը՝ անհետացնելով լեզուական անհարթութիւնները, հայ գրականութիւնը կրնան միջազգային բեմ հանել՝ այժմէականութիւն ներկայացնող գործերով:

«Բ.»

ԲԱՑ ՆԱՄԱԿ
ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ

Յարգելի՛ պարոն Վարդանեան,

Մէկ տարի առաջ ես էլ չիմացայ թէ ինչպէ՛ս, ի՞նչ մղումով ոտքերս կանգնեցրին ինձ ձեր տան դրան առջեւ: Գուցէ ենթագիտակցաբար մէջս ամբարուած բազում հարցադրումներիս գոնէ որեւէ մէկի պատասխանն էի փնտռում: Չէ՞ որ տարիներ շարունակ Դուք էիք տնօրինում մեր գրողի եւ գրականութեան բախտը:

Միշտ փորձել ու չեմ ըմբռնել, թէ ինչո՞ւ այսքան անարդար հարսծուել է մի գրական մշակ, ով աշխարհ էր եկել միայն ուրախացնելու իր ժողովրդին:

Դուք ինձ հաւաստիացրիք, որ Լեռ Կամսարի հետ առնչութիւն ունենալ չէիք կարող, քանի որ Կենտկոմի գաղափարական բաժնի վարիչ եղել էք 1964-1965 թուերին:

Եթէ մինչ այդ պահը մտածում էի, թէ ինչո՞ւ եմ եկել եւ ի՞նչ եմ ուզում այս ծերունազարդ ու հիւանդ մարդուց, 65թ-ը լսելուց յետոյ կարկամեցի եւ հասկացայ, որ դա նախախնամութեան ձեռքի գործն էր մեզ հանդիպեցնելը:

Արդ, Դուք վերջակէտ կը դնէք իմ հոգու

պուայպանքներին...

Ահա այն դիմումի պատճէնը, որ Լեռ Կամսարը ուղղել է Ձեզ:

ՀԿՊ Կենտկոմի գաղափարական բաժնի վարիչ՝
ընկ. Ս. Վարդանեանին՝
Ձգրող Լեռ Կամսարից

Դ Ի Մ Ո Ւ Մ

Յարգելի ընկ. Վարդանեան

Ես Ձեզ անձամբ ճանաչելու բախտ չունեմ: Չգիտեմ կտրուկ մարդ էք, թէ տատանուող: Ուստի գրում եմ Ձեզ խարխափելով:

Եթէ Դուք լինէիք հասակաւոր եւ հեռեւած լինէիք իմ 35 տարուայ գրական գործունէութեանը, դիմումս կը լինէր կարճ: Բայց իմանալով, որ Դուք երիտասարդ էք, թոյլ եմ տալիս Ձեզ հետ մի փոքր երկար խօսել:

Ես պարտաճանաչ կոլխոզնիկի նման յանձնել եմ իմ «պետպարտաւորութիւնը» ստալինեան դարաշրջանին: Տաժանակրութեան եմ գնացել ամբողջ 20 տարի: 20 տարի քայլել եմ, երկու կողմս ունենալով երկու սուինաւոր պահակներ: Եւ ազատուելուց յետոյ էլ, դեռ երկար չկարողանալով ազատուել այդ մղձաւանջից, քայլել եմ նրանց ուրուականների հսկողութեամբ, ինքնակալանաւորման ենթարկելով ինքս ինձ:

Ազատուեցի վերջապէս: Գերագոյն դատարանը չեղեալ համարեց չգործածս յանցանքը եւ վերադարձրեց իմ ազատութիւնը, մոռանալով, սակայն, վերադարձնել նաեւ իմ 20 տարուայ գրական բեղուն կեանքը:

Ինչեւէ: Ազատուեցի ու դրանում համոզուած լինելու համար շարժեցի մարմինս, ձեռներս երկու կողմերս տարածեցի, աջ տարայ, ձախ տարայ, քայլեցի մէկ-երկու, մէկ-երկու՝ տեսայ, որ իրօք ազատ եմ:

Իսկ գրող մարդը, որ ազատուի, ինչ պիտի անի: Բնական է, պիտի վերցնի գրիչը եւ շարունակի իր ընդհատուած աշխատանքը:

Բայց աւաղ...

Գրիչս նոր էի թաթախել, ուզում էի գրել, մէկ էլ յանկարծ յայտնուեցին երկու նոր սուինաւոր պահակներ եւ գրիչս կալանքի վերցրին:

- Չգրես, եթէ ոչ... - սպառնաց մամուլը մի կողմից:

- Ինչքան ուզում ես գրիր, միեւնոյնն է քեզ տպագրող չկայ,- ասաց միւս կողմից կանգնած Պետհրատը, եւ ես գրիչս վայր դրի:

- Միայն «Ոգնին» տօն օրերին հագնելու համար գրիչը ձեռքս էր տալիս, որ մի ֆելիետոն գրեմ, յետոյ էլ գրիչը վերցնում էր ձեռքիցս ու կախում պատից:

Պարզ դարձաւ ինձ, որ հիմա էլ հոգիս է բռնելու փաժանակրութեան ճանապարհը...

Ո՛վ երկինք... մարդ գրելիք ունենայ եւ թոյլ չտան գրելու: Այն էլ ինձ նման գրողի...

Ընկեր Վարդանեան, Դուք որովհետեւ տարիքով երիտասարդ էք, գուցէ հարց տաք ինձ.

- Ինչո՞ւ, դու ի՞նչ տեսակ գրող ես, որ քեզ չի կարելի լռեցնել:

Այստեղ արդէն ես ստիպուած եմ ինձ գովել, եւ գովել ոչ իմ բերանով, այլ ինձնից աւելի հեղինակաւոր մարդկանց բերանով:

Ես պիտի գովեմ, որպէսզի դրանով մեծացնեմ մամուլի եւ Պետհրատի իմ հանդէպ գործած սխալը:

Օհ, սկսում եմ գովել ինձ:

1910 թուականին Վանում տպուած իմ անդրանիկ ֆելիետոնը բունտ հանեց ողջ քաղաքը եւ քաղաքացիք երկար ժամանակ չէին կարող դադարեցնել իրենց քրքիջը:

1915 թուի գաղթին, երբ Կովկաս եկայ, ընդամէնը մի տարի թերթերին աշխատակցելուց յետոյ, Պաքուի «Արեւ» թերթի տեսաբանը գրեց. «Մեր բոլոր թերթերն ունեն իրենց ֆելիետոնիստը, բայց դրանցից միակ օժտուածը Լեռ Կամսարն է» (այսինքն ես):

Մի ժամանակ «Խորհրդային Հայաստան» թերթի խմբագիր Ս. Լուկաշինը օրը-օրի տպագրում էր իմ գրածները:

1921 թուականին, երբ Սովետական կառավարութիւնը հաստատուեց Հայաստանում եւ ուզում էր իր թերթը հրատարակել, այնքան կարիք զգաց ինձ, որ իմ փախած տեղից՝ Թաւրիզից, Հայաստան հրաւիրեց եւ ամէն տեսակ ազատութիւն խոստանալով լծեց իր թերթին, ուր ես եղայ իր միակ ֆելիետոնիստը ամբողջ 15 տարի:

Երեսնական թուականներին Աւետիք Իսահակեանը գրում էր Փարիզից.

«Դու արտասահմանում միակ կարդացուող հեղինակն ես: «Խորհրդային Հայաստանում» քո տպուած ֆելիետոններն արտատպւում են արտասահմանեան հայ թերթերի մեջ եւ ձեռքից-ձեռք անցնում»:

Ամերիկահայ ժուռնալիստ Սիմէոն Կիլոն, ամբողջ տարիներ, աշխարհի չորս կողմերն է դիմել իմանալու համար, ո՞ղջ եմ, թէ՞ մեռած: Ու երբ պատահմամբ իմացաւ, որ կենդանի եմ, ինձ գրեց.

- Գալիս եմ քեզ տեսնելու, նոր մեռնելու:

Եւ իրօք էլ եկաւ ինձ տեսաւ ու անմիջապես, յանկարծամահ եղաւ...

Նա Պոսթոնում հրատարակուող «Ծիրանի գօտիում» յօդուածաշարք ունի գրած իմ մասին, որի մեծ վերնագիրն է «Պահպանենք մեր հանճարները», իսկ փոքր վերնագիրը «Լեռ Կամսարը ապրող մեծագոյն հայ երգիծաբանն է»:

Այնտեղ նա, հակառակ Գուրգէն Մահարու կարծիքին, ինձ հանճարեղ երգիծաբան է անուանում եւ մեղադրում Հայաստանի ղեկավարութեանը՝ ասելով.

- Կարծես յատուկ ճիգ մը կը գործադրուի, զայն ստուերի մէջ պահելու համար:

Յետոյ ցաւում, որ ամբողջ 20 տարի հայութիւնը զրկուեց իմ պատճառած պոռթկուն ծիծաղի հաճոյքը վայելելուց:

Նոյն ափսոսանքը, նոյն բառերով յայտնում է նաեւ մեր քննադատ Թամրազեանը իմ գրքի առթիւ գրած իր ռեցենզիայում (*գրախօսական - «Բ.»*), գրում եւ աւելացնում՝ «Ինչպէս կարելի է այսպիսի գրողին 20 տարի լռութեան դատապարտել»:

Եթէ շարունակեմ այսպէս ինքզինքս գովել, դա հատորներ կարող է կազմել: Ուստի վերջացնում եմ այն, հարց տալով մամուլին ու Պետհրատին.

- Ի՞նչ պատասխան պիտի տաք հայ գրականութեան պատմութեանը, այսպէս կալանք դնելով նրա ընդամէնը երեք երգիծաբաններից մէկի գրչի վրայ: Ո՞ր փաստաբանը պիտի կարողանայ փրկել ձեզ պատմութեան դատաստանից:

Բայց պատասխանի համար ներկայ Պեստիրատի դիրեկտորները չեն էլ մտածում: Նրանք խօսելիս իրենց բերանը բաց են անում, եւ սպասում, որ մի ուրիշը խօսի իրենց բերանով:

Երրորդ տարին է ես յիսուն մամուլ գործ եմ ներկայացրել Պեստիրատին տպագրելու համար, իսկ նա ոչ տպում է, ոչ չի տպում: Անատամ ծերունու նման այս խնդիրը գցել է բերանը լմլմում է, ոչ դուրս է թքում, ոչ էլ կուլ տալիս, սպիպելով ինձ՝ 76-ամեայ ծերունուս անվերջ գնալ-գալ ու տանջուել: Մի հոգեկան տանջանք, որն իր բնոյթով գերազանցում է սպալինեան տանջանքներին: Այնտեղ սրի մի հարուածով էին լուծւում հարցերը, իսկ այստեղ ծամծմւում: Պեստիրատի վրայ ժողովուրդը առած է յօրինել. գրելու համար տաղանդ է հարկաւոր, իսկ Պեստիրատում տպուելու համար հանճար:

Ընկեր Վարդանեան, ուզում եմ Ձեզ հաւաստել, որ ես այն մարդը չեմ, որ արժանի լինեմ այս ոչ մարդկային վերաբերմունքին:

Ես՝ որպէս գրող, սովետական իշխանութեանն արել եմ այն, ինչ չեն արել այժմ անվերջ տպուող մի շարք գրողներ:

Իշխանութեան ծննդեան առաջին օրից աշխատանքի լծուելով՝ իմ հատու գրչով հարուածել եմ սովետական իշխանութեան բոլոր գաղափարական հակառակորդներին:

Ես՝ ի ծնէ անկուսակցականս, ոչ մի քաղաքական կուսակցութեան հետ այնքան ընդհանուր բան չեմ ունեցել, ինչպէս կոմունիստական կուսակցութեան հետ, որը հնարաւորութիւն է տուել ինձ ամբողջ 15 տարի աշխատակցել նրա կենտրոնական օրգանին:

Եւ այսպիսի նուիրուած բարեկամի վեր կենալ 20 տարի մարմնապէս տանջել, ցմահ՝ հոգեպէս:

Գիտէք ի՞նչ է ասում ինձ Պեստիրատը: Մեզ տրուած է այսքան մամուլի իրաւունք, այն բաժանել ենք բոլոր գրողներին, քեզ հասել է ընդամէնը 10 մամուլ...

Սա պատասխա՞ն է:

Այսպէս պատասխանում է սոցապ մինիստրութիւնը իրեն ձեռք կարկառած կարօտեալներին:

Եւ կարօտեալները թոշակն ստանալուց յետոյ մաղթում են մինիստրութեանը երկար կեանք, իսկ մահուանից յետոյ էլ արքայութիւն:

Պեստիրատը չլինի՞ ուզում է արքայութիւն գնալ...

Թող իմացած լինի Պեստիրատը, որ ես տասը մամուլի համար ոչ թէ արքայութիւն կը մաղթեմ նրան, այլ դժոխք...

Նա ինձ՝ վերոյիշեալ գովուած Լեռ Կամսարիս, դնում է այն գրողների շարքին, որոնց վէպերը, ինչպէս ասում է Խրուշչովը, կարդալիս պէտք է ասեղով ծակել իրեն, չքնելու համար:

Այն գրողների շարքին, որոնց վէպերը տպարանից դեռ գլուխը դուրս չհանած խփուում են մեր քննադատներից եւ գնում Պեստիրատի պահեստում մեռնելու... առանց յիշատակի:

Տպել գիրք, որ չի ծախւում, չտպել գիրք, որ անմիջապէս սպառում է: Սա՞ է Պեստիրատի պրակտիկան հիմա:

Լաւ, այս բոլորը թողնենք մի կողմ:

Հիմա մի ուրիշ բան:

Ես թէեւ ծեր եմ, բայց չգիտես ինչու չեմ մեռնում եւ ունեմ դեռեւս աշխատելու մեծ կորով:

Ի՞նչ անեմ այդ կորովը:

Եթէ երիտասարդ լինէի, գլուխս մէկ

կողմ կը նեպէի եւ ինքզինքս ֆութպոլի կը պայի:

Գլխի փոխարէն ոտք:

Այդ էլ չեմ կարող:

Բաւական է: Շատ գրեցի: Դուք կարդալով ձանձրացաք, ես՝ գրելով: Հիմա խօսքի կարճը:

Ընկեր Վարդանեան, կարո՞ղ էք ներշընչել Պեպիրատին, որ առանց ծուատելու ամբողջութեամբ տպագրի իմ իրեն ներկայացրած 50 մամուլ երկերիս ժողովածուն:

Այդ ժողովածուն կարդացել եւ նրա պատասխանատուութիւնը գրական ու քաղաքական տեսակէտից երաշխաւորել է ռեցենզիստ Ադօ Ադոյեանը:

Այս հարցը, ընկեր Վարդանեան, դնում եմ Ձեր առջեւ եւ սպասում պատասխանի:

Ցանկալի էր, որ այդ պատասխանը լինէր գրաւոր, որ ես այն կցելով ներկայ գրութեանս պատճէնին, թողնէի պատմութեան դատաստանին:

Յարգանքներով՝ ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

Հասցէս՝ Թումանեան 15
5. 10. 64թ., Երեւան

Այս դիմումի գրաւոր պատասխանը այդպէս էլ չեղաւ, պարոն Վարդանեան: Բայց այնուհանդերձ 10 մամուլը դարձաւ՝ 20: Չգիտեմ կա՞ր արդեօք Ձեր միջամտութիւնը:

1965-ին, երբ պատրաստ էր 20 մամուլանոց «Մարդը տանու շորերով» գրքի ամբողջ տպաքանակը եւ հեղինակը սրտատրոփ սպասում էր ազդանշանային օրինակին, «Հայաստան» հրատարակչութիւնից աւելեցին, որ գիրքը կալանքի տակ է: Պապիս բէզարած սիրտը այլեւս չդիմացաւ, եւ Լեռ Կամսարը սրտի կաթուածից մահացաւ: (*Տե՛ս «Ազգ», 12 Նոյեմբեր 2005թ.):*

Մինչ տպարանը կը հասցնէր ստանալ արգելանքի որոշումը, արդէն հասցրել էր մի փոքրիկ մաս ուղարկել գրադարաններին եւ թերթի կրպակներին: Բաւականաչափ էլ օգտուեց տպարանի պահեստապետը՝ 59 կոպեկանոց գիրքը 3 ռուբլով վաճառելով: Պահեստապետը որքան էլ ճարպիկ գտնուէր, չէր սպառի ամբողջ տպաքանակը:

Արդ, պարոն Վարդանեան, տարիների հեռաւորութիւնից ես կը փափաքէի իմանալ՝

1. Ի՞նչ եղաւ 10.000 տպաքանակի ճակատագիրը (տարբերակներ՝ այրեցին, թափօնի վերածեցին, այլ տարբերակ),

2. Ի՞նչն էր գրքի կալանաւորման պատճառը (միակ տարբերակը՝ «Թատրոնի դիրեկտորը» ֆելիետոնը. (տե՛ս, «Մարդը տանու շորերով» գիրքը, 1965թ., էջ 85). քաղաքական մոտիւները բացառւում են, որովհետեւ Գլաւլիտը հաւէսով էր աշխատել),

3. Ո՞վ էր գլխաւոր պատուիրատուն՝ (միակ տարբերակը՝ Սունդուկեանի թատրոնի դիրեկտոր Ղազար Ղազարեան եւ տեղակալ Սուրէն Բաղալեան),

4. Ինչպէ՞ս դա կազմակերպուեց (տարբերակներ՝ զանգ վերեւից, զանգ ընկերոջը, խաշի սեղանի շուրջ կամ այլ տարբերակ),

5. Եւ ամենագլխաւորը՝ ո՞ւմ «թեթեւ» ձեռքով է որոշումը կայացուել՝ վերջապէս ես որպէս թոռ իրաւունք ունեմ իմանալու, թէ ո՞վ է ստորագրել պապիս մահուան դատավճիռը...

Յարգանքներով՝
Վանուհի Թովմասեան

22, Յունիս 2006թ.,
Թումանեան 30/36 հեռ. 541846

Յ.Գ. Խնդրում եմ միայն նորից չասել, որ Լեռ Կամսարին չգիտէիք, թէ չէ կը մտածեմ, որ Ձեր պաշտօնում լաւ չէք աշխատել:

Երկար նամակ Լեռ Կամսարից
(պարապ ժամանակ կարդալու համար)

Լեռ Կամսարի գրական արխիւում կը գտնէք բազում անպատասխան նամակներ եւ դիմումներ՝ ուղղուած երկնային եւ երկրային բազմապիսի ասպուածներին:

Կարդալով դրանք՝ չգիտես լա՞ն ոտնահարուած մարդկային պարզագոյն իրաւունքների համար, թէ՞ խնդաս երգիծական անզուգական հնարանքների վրայ:

Երկրային ասպուածներից դիմում չի յղել միայն Ստալինին:

«Ես շատ վաղուց է ուզում եմ Ասպծուն մի դիմում գրել, բայց յարմար տիտղոս չգտնելու համար յետաձգում եմ անվերջ»,- տարակուսում է երգիծաբանը:

Չգիտեմ ինչպէս դիմեմ: Ապրում եմ մի սոցիալիստական երկրում, ուր «պարոն» չի թոյլատրուած, իսկ «ընկեր» չեմ ուզում ասել:

Ես իսկի Ստալինին էլ «ընկեր» չեմ ասել: Բանտում եղած ժամանակ բոլորը Ստալինին դիմում տուին ազատուեցին, ես որպէսզի «ընկեր» չանուանեմ նրան, դիմում չտուի ու 20 տարի տառապեցի:

Ինչո՞ւ: Որովհետեւ Ստալինի նման համաշխարհային ոճրագործի «ընկեր» ասել նշանակում է նրա կատարած ոճիրների կէսը վերցնել իմ վրայ:

Այդ բանը անել չէի կարող՝ «ես անմեղ բանտարկեալ էի»:

Հօ՞ չէք զարմանայ, եթէ ասեմ, որ նամակների հասցէատէրերից ամենադեմոկրատը Վանի թուրք վալին էր:

Ուզում էք զարմացէք: Ես միայն փաստն եմ արձանագրում: Լեռ Կամսարի ուղերձից յետոյ վալին տեսնելով նոր թաթուխ երգիծաբանին, ասում է.

- Աֆարի՛ն, Կամսար, դու մեծ մարդ կը դառնաս:

Ընթերցողներին սիրով ներկայացնում եմ եւս մէկ անպատասխան դիմում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կոմունիստական
ՊԱՐՏԻԱՅԻ ԿԵՆՏԿՈՄԻ
Ա. Քարտուղար
ԸՆԿԵՐ ՋԱՐՈԲԵԱՆԻՆ

Երկար նամակ Լեռ Կամսարից
(պարապ ժամանակ կարդալու համար)

Առաջին ծանօթութիւն

Յարգելի ընկե՛ր Զարոբեան, որպէս նորընտիր քարտուղար, ձեր մասին լաւ են խօսում՝ թուելով ձեր բարեմասնութիւնները:

Ու ես էլ որովհետեւ մի լաւ մարդու էի ման գալիս, որ հեգը մի քիչ խօսեմ՝ շտապում եմ գրել ձեզ, քանի չէք «վատացել»...

Ըստ ընկալեալ սովորութեան, առանց բացառութեան, նոր ընտրուելիս քարտուղարները միշտ «լաւ» են լինում՝ յետոյ «վատանում»:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ նրան այնքան շատ պահանջներ են ներկայացնում, որոնց ի վիճակի չլինելով բաւարարելու, առաջ է գալիս մասսայական դժգոհութիւն, եւ մէկ էլ տեսաք հեռախօսը վերցնելով ձեր ընտրողները ձայնեցին.

- Ատբոյ տուէք, դուք մեր ուզած մարդը չէք...

Ես օրինակ, բնաւ չէի ցանկանայ ձեր տեղը լինել:

Դաշնակցութեան ժամանակ ինձ կամեցան մտցնել պառլամենտ, որպէս չէզոք պատգամաւորների լիդէր, ես մերժեցի՝ գրականութիւնը վեր դասելով պառլամենտից:

...Ի՞նչ գործս է. ինչո՞ւ բարձրանամ՝ ին-

չո՞ւ իջնեմ:

Ընկե՛ր Զարոբեան, թէեւ վարչական տեսակէտից դուք բարձր էք ինձանից, բայց ես կամենում եմ ձեզ հետ խօսել ինչպէս մարդը՝ մարդու հետ:

Չեկայում իմ քննիչը ինձ հետ խօսում էր շատ մեղմ, քաղաքավարի ու շատ սիրալիր, բայց միեւնոյն ժամանակ չէր մոռանում մէկ-մէկ աչք ածել իր կողքից կապած ատրճանակի վրայ...

Խնդրում եմ ձեզ, մեր յարաբերութեան մէջ այդ չպատահի:

Մենք բոլորս հաւասար մարդիկ ենք, միեւնոյն ճիչով ծնւում ենք մեր մայրերից, միեւնոյն հառաչանքով գերեզման մտնում: Արժէ՞ արդեօք, որ մեր կարճ կեանքում մարդիկ իրարից անսահման հեռաւորութիւն ունենան:

Ո՛չ:

Այս նախապատրաստութիւնից յետոյ՝ անցնէք առաջ:

Մի մկան պատմութիւն

Այս Նոր տարուն Գուրգէն Մահարին «Լեռ» բերեց, խմբագիրը «Կամսար» դրեց վրան ու երկուսը միասին «Լեռ Կամսարից» «մուկ» ծնեցրին «Երեւան» թերթում:

Լաւ էր, վերջում Մահարին զղջաց եւ իր կէս «մուկը» եր վերցրեց, բայց թերթի խմբագիրը իր կէսը չի վերցրել, եւ մինչեւ օրս էլ ես շարունակում եմ կէս «մուկ» ծնել «Երեւանում»...

Ասում եմ, ա՛յ խմբագիր, ե՞րբ դուք ինձ տեղ տուեցիք, որ «առիւծ» ծնէի: Ֆելիետոնս բերում եմ քեզ՝ չես տպում քո թերթում, «Սովետական Հայաստանին» եմ տանում՝ չի տպում, բա ես ի՞նչ հող տամ գլխիս:

Յիսուսն էլի մի մսուր ճարեց Բեթղեհէմ քաղաքում ծնւելու համար. ախր ես այդ «մսուրից» էլ զուրկ եմ: Պէտք է մտնել վերջապէս այն «մօր» դրութեան մէջ, որ տառապում է երկունքի ցաւով ու տեղ չի գտնում ծնելու համար...

Ասում եմ՝ նման պայմաններում ձեր «կէս մուկն» էլ շատ է, ես ամենայն իրաւամբ կարող էի այդ էլ չծնել: Ես այդ ձեր խաթրին ծնեցի...

- Ինչո՞ւ,- ասում է,- «Ոգնին» քեզ տպում է:

- Ճիշդ է,- ասում եմ,- «Ոգնին» տպում է տարին մէկ կամ երկու հատ, բայց ահ ու դողով: Գիտէ՞ք, որ Գէորգ Հայրեանը իմանայ ինչ կ'անի նրան: Այնտեղ ես յաճախ երեւան եմ գալիս ծպտուած, մի կեղծանուան վրայ մի այլ կեղծանուն հագած: Եւ տպուել ու փախչելս մէկ է լինում: Չի՛ թողնում, սիրելիս, Հայրեանը չի թողնում գրեմ: Բոլոր թերթերում թակարդ է դրել, ու ես վախենում եմ մի գեղեցիկ օր ձեր «կէս մուկն» էլ ընկնի նրա թակարդը ու դուք մնաք անմուկ...

Լուկաշին

Իմ ողջ սովետական կեանքում ես մի մարդ միայն սիրեցի՝ եւ այդ Լուկաշինն էր:

Դա մարդ չէր, այլ ոգի:

Եթէ նա քառասուն տարի մնար իշխանութեան գլուխ, ես հիմա քառասուն հատոր գիրք կ'ունենայի տպուած:

Կրնկակոխ ինձ էր հետեւում եւ չէր թողնում, որ մի տողէ գրիչս վայր դնէի հանգստանալու համար:

Երբ գժտուելով ժամանակի «Խորհրդային Հայաստանի» խմբագիր Մռաւեանի հետ եւ չուզելով աշխատակցել նրան՝ գնացել էի Լուկաշինից գործ խնդրելու, նա մռնչաց վրաս.

- Իիի՛նչ, դու գրելը թողած այլ գործ որոնե՞ս...

- Ախր Մռաւեանը չի տպում, ֆելիետոններս տասնեակներով է վերադարձ-

նում ինձ,- վախեցած ասում եմ ես:

- Բե՛ր այդ ֆելիեփոնները ինձ:

Տանում եմ, կարդում ու Մռաւեանին անմիջապէս հեռախօսով կանչում է իր մօտ:

Գալիս է: Ու ինչպէս ուսուցիչն աշակերտին՝ չտպուած ֆելիեփոններս տալիս է իրեն ու հրամայում:

- Բոլորը կը տպես անխտիր եւ 100 ռ. ֆեքս հոնորար կը նշանակես Լեռ Կամսարին, որ ապրուստի մասին չմտածելով միայն գրի:

Ա՛խ, ա՛խ... եարաբ էլ այդպիսի մարդ պիտի պատահի՞ ինձ կեանքումս, թէ ոչ: Գերեզմանի տեղն էլ չգիտեմ, որ ծունկի իջած վրան խունկ ծխեմ...

Գէորգ Հայրեան

Այս մարդու հետ ես ծանօթանալ կամեցայ այն ժամանակ, երբ նա «Պրաւդայի» թղթակից էր:

Մօտենալով իրեն տուի անունս եւ հարցրի, թէ երբեւիցէ լսե՞լ է իմ անունը:

Նա այն թոնով ասաց «լսել եմ», որ հաւասար էր՝ «չեմ լսել եւ լսել անգամ չեմ ուզումի»:

Մի վերաբերմունք, որ ինձ ապշեցրեց: Որովհետեւ սովորաբար, երբ մի անծանօթի մօտ տալիս եմ իմ անունը՝ նա ասում է.

- Ես շատ էի լսել ձեր մասին եւ հիմա բախտ ունեցայ ձեզ տեսնել վերջապէս:

Մի քիչ անքաղաքավարիները գրկում են ինձ եւ քամակս տփտփացնելով ասում.

- Ա՛խ, քո ֆելիեփոնները մի անգամ էլ կարդայինք նոր մեռնէինք...

Երբ Հայրեանի այս վերաբերմունքը տեսայ՝ ասացի.

- Չէ՛, սրանից վատ բան դուրս կը գայ, եթէ երբեւիցէ սա մի ղեկավար պաշտօնի անցնի՝ ինձ կը վնասի:

Հետագայում, դժբախտաբար նա բարձր պաշտօնի անցաւ եւ իրօք սկսեց ինձ «վնասել»՝ կամենալով իմ յիշատակը ջնջել աշխարհի երեսից:

Այդ նպատակով ինձ «գռեհիկ» անուանեց «Սովետական Հայաստանում» եւ բոլոր թերթերի դռները փակեց վրաս: Այնպէս որ խմբագիրները բանալու ծակից են հիմա խօսում ինձ հետ:

Այս առաջին:

Երկրորդ՝ իմ յիսուն տարուայ գրական ողջ վաստակը Պետհրատից վերցրեց ու իր աշխատակից Վազգէն Ամիրբէկեանի ձեռքով «հնակարկատի աղբարկղը» նետեց:

Երրորդ՝ կանչեց «Ոգնու» խմբագրութեանը եւ պատուիրեց ինձ չտպել այլեւս՝ ինձ ու Պարոնեանին համարելով հնացած երգիծաբաններ, որոնցից այլեւս չի կարելի օգտուել:

Այս առիթով ես «Ոգնու» խմբագրին խնդրեցի ասել Հայրեանին, որ նախ նոր շապիկ առ՝ յետոյ հինն աղքատին տուր՝ այլապէս կը մնաս տկլոր:

Այսպիսով Հայրեանը ինձ որպէս գրող ի սպառ բնաջնջեց:

Բայց ես իմ դարդը չեմ, ես խեղճ Պարոնեանի մասին եմ մտածում, որ իմ պատճառով այսպիսի աղէտալի վախճան ունեցաւ...

Նայելով գործին նման տեսանկիւնից՝ ժամանակը չէ՞ արդեօք մէկ-մէկ գերեզմանից դուրս կանչել մեր բոլոր կլասիկներին եւ երկրորդ անգամ մեռցնելով իրենց տեղերը ուղարկել՝ այլեւս չյիշուելու համար:

Այս առիթով ես մի նամակ Սուրէն Թովմասեանին գրեցի.

«Քանի իր պոստում կը մնայ Հայրեանը՝ մեր գրականութիւնը կը փետրաթափուի հետզհետէ: Ռուսաստանը գերեզմանից դուրս է կանչում իր Գոգոլներին ու Շչեդրիններին, մինչդեռ Հայաս-

պանը յանձինս Հայրեանի՝ գերեզման է ուղարկում իր Գոգոլ- Շչեդրիններին:

Եղա՛ւ»:

Նարեկացի

Մենք այսօր Նարեկացի չէինք ունենայ, եթէ Ասպուած լսելով նրա պաղատանքները՝ սրբէր նրա մեղքերը եւ անմիջապէս նրա հոգին առնելով՝ արքայութիւն տանէր:

Մենք հիմա Նարեկացի ունենք նրա համար, որ Ասպուած չուզեց լսել նրա աղաչանքները, որի հեպեւանքով իր ամբողջ կեանքում աղաչեց, պաղատեց Ասպծուն եւ այդ աղաչանքները հատորներ կազմելով մեզ հասան, որ այսօր մենք հպարտանանք նրանցով:

Եթէ Թովմասեանը մի քիչ էլ յարատեւեր իր պոստում՝ ես հիմա երկրորդ Նարեկացին էի դարձել:

Թովմասեանն էլ Ասպծու նման իմ բազմաթիւ դիմումներից ոչ մէկին չպատասխանեց: Միայն, հեպեւելով Ասպծուն, Մովսէսի նման ինձ մի անգամ «Սինա լեռը» կանչեց իր «կրունկը» ցոյց տալու համար...

Եւ սա աշխարհաբար լեզուով կոչւում է «դեմոկրատիզմ»:

Այսպիսի դեմոկրատ էր նաեւ Ջաւէն

Գրիգորեանը, երբ կենտկոմի երկրորդ քարտուղար էր: Անչափ խնդրեցի ինձ ընդունել՝ չընդունեց: Ես էլ մահս աչքս առնելով, մի օր յարձակուեցի նրա աւտոյի վրայ, տեսայ ու փախայ: Երբ յիշում եմ այս դէպքը սարսափը տալիս է վրաս: Չէ՞ որ կարող էին բռնել ու դպտել որպէս...տեռորիստ:

Երանի երկուսի հոգուն էլ: Լաւ մարդիկ էին...

Ծանր մղձաւանջ

Այս ամառ Երեւանի Աօկս-ի թղթատարը մի նամակ բերեց ինձ:

Ամերիկայի Պոսթոն քաղաքում ապրող ոմն Սիմէոն Կիւլօ գրում է Աօկս-ի նախագահ Բերսաբի Գրիգորեանին հետեւեալը.

- Շատ խնդրում եմ, շատ աղաչում՝ մի լուր տուէք Լեռ Կամսարից: Արդեօք նա ո՞ղջ է, թէ՞ մեռած: Հակասական լուրեր ունենք իր մասին: Կիպրոսից եւ Պէյրութից մեզ հասած լուրերը ասում են, որ նա մեռած է: Հայաստանից եկած էքսկուրսանտներից մէկն ասում է ողջ է, միւսը՝ մեռած: Ասացէք, եթէ ողջ է՝ ո՞րն է նրա հասցէն, ես մի խոշոր ուսումնասիրութիւն եմ գրում իր մասին եւ ինձ որոշ տուեալներ են պէտք:

Այս նամակին ինքս անձամբ պատասխանեցի, որ ողջ եմ:

Ստանալով իմ ողջութեան լուրը, ուրախութիւնից չի կարող ինքզինքը պահել եւ որոշել է գալիք Մայիսին անպայման Հայաստան գալ ինձ տեսնելու եւ լինելու իմ տանը որպէս հիւր:

Լսելով այս որոշումը՝ սարսափեցի: Իմ տանը նրան ընդունելու ոչ մի յարմարութիւն չունեմ: Ինն անձ ընտանիքով ապրում ենք 40 քառակուսի մետր տարածութիւն ունեցող կաւաշէն, կաւածածկ ու կաւածեփ նախապատմական շրջանից մնացած մի խարխուլ խրճիթում՝ չորս կողմից արտաքնոցի բուդկաներով շրջապատուած: Իրար վրայ թափուած խեղդըւում ենք: Քնելու համար մահճակալի տեղ չունենք: Թոռներս քնում են մէկը սեղանի վրայ, միւսը՝ տակը, հասակաւորներից մի քանիսը յատակին, իսկ ես մեր միակ տիւանի վրայ:

Մեր շնչելու օդը չի բաւականացնում անգամ, եթէ մենք, ի տես մեր թշուառութեանը մի փոքր լիաթոք հառաչենք:

Եթէ Ամերիկայից եկող Սիմէոն Կիւլոն բարակ-մարակ մէկը լինէր՝ ոչինչ, միասին իմ տիւանի վրայ կը լուսացնէինք գիշերները: Բայց նրա ուղարկած լուսանկարից երեւում է, որ շատ չաղ մարդ է ու իմ տիւանի վրայ չի պարտկուի:

Գիշերը յանկարծ գլորուի յատակին, ես ի՞նչ պատասխան տամ ամերիկեան կառավարութեանը...

Պիտի գայ, լուսանկարի իմ խրճիթը, արտասահմանում հրապարակութեան տայ եւ տակը գրի.

- Ահա տեսէք, ի՞նչ բնակարանում է ապրում Հայաստանում մի գրող, որ ամբողջ կէս դար աշխատել է հայ գրական անդաստանում...

Սարսափելի է, չէ՞:

Դրա համար անմիջապէս վազեցի արտասահմանի հետ կուլտուրական կապի նախագահի մօտ եւ ասացի.

- Միջոցներ ձեռք առէք, որ ինձ ներկայանալի բնակարան յատկացուի. այլապէս եթէ Սիմէոնն եկաւ եւ իմ ներկայ բնակարանը տեսաւ՝ ձեր կուլտուրական կապերը կը խզուեն արտասահմանի հետ:

Ասաց.

- Գրողների միութիւնը տուն շինեց, ինչո՞ւ չստացար:

- Թօփչեանը չտուեց: Ամբողջ բնակարանները բաժանեց իր եւ իւրայինների մէջ, իսկ ինձ «յետ գրութեան» յատկացրեց Քրիստափոր Թափալցեանի հին

բնակարանը իր բոլոր անյարմարութիւններով, մինչեւ սրտիս խորքը վիրաւորելով ինձ:

- Եթէ բնակարան բաժանելու օրն ասէիք, գուցէ հնար լինէր մի բան անել, իսկ հիմա...

Չէ՛, ընկեր Զարոբեան, մենք բոլորս աղէտի առջեւ ենք կանգնած:

Երանի չգրէի թէ ողջ եմ: Եթէ գրէի մեռած եմ՝ կը գար եւ ինձ հիւր կը լինէր գերեզմանոցում: Իսկ մեր գերեզմանոցում ինչպէս գիտէք, կապարեալ հաւասարութիւն է, ոչ մի պատասխանատու աշխատող երկու գերեզման չի զբաղեցնում, միւս կողմից էլ անբնակարան մեռել էլ չես ճարի:

Այստեղ ես նիւթիցս մի քիչ շեղուելով պիտի նկատեմ:

Մեզ մօտ, առհասարակ, դէպի մեռածներն աւելի ուշադիր վերաբերմունք է ցուցաբերւում, քան կենդանիների:

Տասնհինգ տարով Քաղսովետից բնակարան ուզողներ կան՝ չեն բաւարարւում, իսկ մեռելներն անմիջապէս բնակարանով բաւարարւում են թաղման բիւրոյում:

Այդ իրենց ո՞ր առաւելութեան համար:

Ո՛չ: Ժամանակն է, որ սրանից յետոյ դրա ճիշդ հակառակը լինի: Պէտք է քաղսովետի նախագահն ու թաղման բիւրոյի Շահապունին իրենց պոստերը փոխանակեն: Շահապունին քաղսովետում բնակարանային դիմումների վրայ ըստ իր սովորութեան մակագրի «բաւարարել», իսկ քաղսովետի նախագահը գրի «մերժել»:

Թող մի փոքր էլ մեռելները հերթի սպասեն, չեն մեռնի: Սրա օգուտն էլ կարող է լինել նաեւ այն, որ իրենց առջեւ այդպիսի անյաղթահարելի արգելք տեսնելով... հրաժարուեն մեռնելուց:

Նշեմ նաեւ, որ վերաբերմունքի այս խստրականութիւնը շարունակւում է նաեւ գերեզմանոցից դուրս:

Մեր կօօպերատիւ խանութները օր ու մէջ կողպէք են կախում դռներից՝ ազդարարելով. «Ստուգման պատճառով խանութը փակ է»:

Իսկ դրա հակառակը պատահե՞լ է, որ մի մեռել գերեզմանոց գնալիս՝ դրան վրայ կարդայ. «Ստուգման պատճառով գերեզմանոցը փակ է»:

Ո՛չ:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ
15-ը Յունուարի,1961թ

Բնականաբար կառավարութիւնը գոնէ ժամանակաւոր ներկայանալի բնակարան չտրամադրեց ամերիկացի լրագրողին ընդունելու համար: Կիլոյի հանդիպումը այլախոհ երգիծաբանի հետ մեծ գլխացաւանք կը պատճառէր սովետների երկրին: Աւելի դիւրին էր մէկ հարուածով ազատուել գլխից էլ գլխացաւանքից էլ:

Խեղճ Լեռ Կամսարն ի՞նչ իմանար, որ իրական «Ծանր մղձաւանջը» լինելու էր ընդամէնը մի քանի ամսից, երբ Հայաստան կը ժամանէր Սիմէոն Կիլոն եւ դաւադրաբար կը սպաննուէր «Արմէնիա» հիւրանոցի իր համարում...

Վանուհի Թովմասեան

1. «Երեւան» թերթի 1961թ. Նոյ. 1-ում Գուրգէն Մահարին իր «Նոր տարուայ բառարանում» գրել էր՝ «Լեռ.- պատահել է, որ մուկ է ծնել»: Թերթի խմբագրութիւնը տպել էր «Լեռ կամսար - պատահել է, որ մուկ է ծնել»: «Գրական թերթի» 2-դ համարում Մահարին հերքել է՝ «Իսկականի հետ ճիշդ չէ» յօդուածով:

Ակամայ ոճրագործութիւնս ինչպէ՞ս հաշտեցնեմ խղճիս հետ

Ես չգիտեմ, երբեւէ կը բացուե՞ն ՊԱԿ-ի արխիւները, արդեօ՞ք լոյս աշ-

խարի դուրս կ'ելնեն բոլոր մութ ու զազիր գործերը:

Չգիտեմ նաեւ ո՞վ է կրում կամ ո՞վ պիտի քաւի Սիմէոն Կիւլոյի անմեղ արեան մեղքը: Ամէն դէպքում ես իմ բարոյական պարտքն եմ համարում հասարակութեան դատին յանձնել այս նիւթերը, որով գուցէ կը մեղմեմ մեղքի զգացումի իմ բաժինը, քանի որ այս ոճրագործութիւնը կատարուել է ակամայից մի ազնիւ մարդու պատճառով, ում ժառանգորդն եմ ես:

...Սփիւռքը մեծ հետաքրքրութիւն եւ շահագրգռուածութիւն էր ցուցաբերում Լեռ Կամսարի գրական ժառանգութեան նկատմամբ: Սիմոն Վրացեանը տարիներ շարունակ համոզում էր երգիծաբանին գրական արխիւը արտասահման անցկացնել: Այդ նպատակով բանակցում էին նաեւ ռամկավարներ Արտակ Դարբինեանը եւ Յարութիւն Վարդապետեանը:

Երկար տարիներ հեղինակը չէր համաձայնւում Հայաստանից դուրս հանել ձեռագրերը: Արխիւը արդէն երկու անգամ բռնագրաւուել էր ՊԱԿի կողմից, եւ նա վախենում էր, որ կարող է լրիւ զրկուել գրական վաստակից: Բացի դրանից, կը վտանգուէր նաեւ իր ժառանգների ապահովութիւնը:

Սակայն հալոցքի տարիներին, երբ թւում էր, թէ կայ որոշ ազատութիւն, եւ տեսնելով, որ հայրենիքում ոչ մի կերպ չի կարողանում լոյս ընծայել իր քաղաքական սատիրան, նա վերջապէս տեղի է տալիս եւ 1961թ. որոշում է որոշ նիւթեր տրամադրել պոսթոնաբնակ լրագրող, «Ծիրանի գօտի» հանդէսի գլխաւոր խմբագիր Սիմէոն Կիւլոյին:

Այդ աղէտալի մտայղացման պատճառով տաղանդաշատ լրագրողը վճարում է իր կեանքով, իսկ արդէն յանձնուած նիւթերը անհետանում են...

Թող այս էջը տուրք լինի Սիմէոն Կիւլոյի լուսաւոր յիշատակին եւ որոշ չափով ինչ-որ տեղ թեթեւացնի Լեռ Կամսարի հոգու տառապանքը...

Վանուհի Թովմասեան

Յ.Գ. Բռնադատուած գրողների եւ մտաւորականների արխիւային նիւթերը ՊԱԿը յանձնել է Պետական արխիւի պահպանութեան, բացի Լեռ Կամսարի արխիւից: Տեսնես, ինչո՞ւ... ... Ասենք, գլխի եմ ընկնում...

Սիմէոն Կիւլօ
Պոսթոն,1960թ

Ինձի համար շահեկան դարձաւ Լեռ Կամսարի ինքնութիւնը ճշդելու հարցը՝ մասնաւորաբար վերջին հնգէն վեց տարիներու ընթացքին, երբ իմ հարց ու փորձիս մէջ՝ նկատեցի զիրար հակասող տեղեկութիւններ, տրուած ինձի՝ պատասխանատու անձերու կողմէ:

Պէյրութեն, շատ կարեւոր անձ մը, /Վահէ Վահեան/, որ երկու անգամ Հայաստան գացած էր, կը գրէր ինձի թէ Լեռ Կամսարը մեռած էր 1938-ին տարագրութեան ճամբին, շատ յառաջացած տարիքին մէջ: Ամիսներ վերջ, երբ օր մը կարդացի Սիմոնեանի մէկ յօդուածը, որուն մէջ կը յիշէր, թէ Լեռ Կամսարը Երեւանի մէջ էր, եւ «Ոգնի» շաբաթաթերթը կը խմբագրէր, վերոյիշեալ անձին ուշադրութեան յանձնեցի այս պարագան, ստուգութեան համար: Շատ քաղաքավարի նամակ մը ստացայ իրմէն, ըսելով՝ թէ նորէն Հայաստան հրաւիրուած է ինք, եւ այս անգամ «ամէն ինչ կը ստուգեմ եւ կը գրեմ քեզի»: Մինչեւ այս տողերս գրելը դեռ ստացած չեմ որեւէ լուր իրմէ:

Դիպուածով հանդիպեցայ բանաստեղծ Կ. Սիրպլին, որ Պոսթոն եկած էր խօսելու Ա. Իսահակեանի 80-ամեակին

առթիւ: Երբ վերսպին հարցուցի Լեռ Կամսարի մասին, եւ վերոյիշեալ տեղեկութիւնը յիշեցի, ան սրբագրեց զայն, ըսելով.

- «Ոգնի» թերթին խմբագիրը Լեռ Կամսարը չէ, այլ Էդ. Խոճիկը: Մեղուաբուծութիւն կ'ընէ Լեռ Կամսարը:

- Դուն զինքը տեսա՞ր:

- Ո՛չ: Գրական ժողով ունէինք, բայց եկած չէր: Եւ երեք ամիս կեցայ, սակայն առիթ չեղաւ զինքը տեսնելու:

- Ըսել է, թէ մեր հանճարեղ երգիծաբա՞նը... գրիչը լքած՝ մեղուներու հետ կ'անցունէ իր ժամանակը... Ողբալի կացութիւն է այս...

Հարցուցի իր մասին՝ Հայաստանէն նոր վերադարձած բանաստեղծ Յակոբ Գույումճեանին: Ան ալ կը կարծէր, թէ Լեռ Կամսարը մեռած էր:

Կիպրոսէն ուսուցիչ մը /Ն. Յովհաննէսեան/ կը թղթակցէր հետս: Երբ գրեցի իրեն այս մասին, պատասխանեց, թէ ինքը շատ մտերիմ կերպով կը ճանչնար Լեռ Կամսարը, որը մեռած էր 1938-ի տարագրութեան ճամբին: «Ուրիշ բանի չի հաւատաս»:

Ամէնէն վերջ, Մարտիրոս Ճաւեանի յուղարկաւորութեան օրը՝ Նիւ Եորքէն քաղաքս ժամանած Օգսէն Սարեանին դիմեցի նոյն հարցումով: Նոր էր Հայաստանէն վերադարձեր:

Ես տեսայ զինքը, պատասխանեց: Ուզեց «Լրաբերին» աշխատակցել...

Մինչեւ հիմա ստացածս տեղեկութիւններուն մէջ՝ ամէնէն ցնցիչը այս էր: Անհաւատալի թուալու աստիճան: Հետս կապա՞կ կ'ընէր արդեօք: Սկեպտիկի մը թոնով հարցուցի դարձեալ.

- Վստա՞հ ես, թէ հետդ խօսողը Լեռ Կամսարն էր... Դուն զինքը կը ճանչնա՞ս, եթէ դէմդ ելնէ:

- Եղբայր, մարդը ինծի ուսուցիչ էր Վանի մէջ. ինչպէ՞ս չճանչնամ... Ո՞ր մէկ գրագէտի մասին կ'ուզես՝ հարցուր, բոլորն ալ կը ճանչնամ...

Դժբախտաբար, առանձին չէինք Օգսէնին հետ. յուղարկաւորներով շրջապատուած էինք: Շուրջինները տպաւորելո՞ւ համար այդպէս կ'ըսէր, չհասկցայ:

Ճարահատ՝ նստեցայ նամակ մը գրեցի Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապի հայկական ընկերութեան նախագահ Բերսաբէ Գրիգորեանին, թէ Լեռ Կամսարի մասին ուսումնասիրութիւն մը կ'ուզեմ գրել, անհրաժեշտ է հետեւեալ երեք հարցերու ճշդումը: 1. Ո՞վ է Լեռ Կամսարը: 2. Կ'ապրի՞ ներկայիս, ո՞ղջ է: 3. Ի՞նչ է իր հասցէն:

Բերսաբէ Գրիգորեանը փոխանակ նամակիս պատասխանելու, պատշաճ տեսած էր նամակս ուղղակի յանձնել... Լեռ Կամսարին:

Շուտով իրմէն ստացայ հետեւեալ նամակը, որ գերագոյն հաճոյք պատճառեց ինծի, վերջ դնելով փնտռտուքիս:

30 Մայիսի,1960թ.

Յարգելի ընկեր Սիմէոն Կիւլօ,

Դուք Պոսթոնից գրած ձեր նամակով Հայաստանի Աօքս-ից ուզում էք իմանալ երեք բան իմ մասին.

1. Ի՞նչ է իսկական «կնքուած» անունս:

2. Ներկայիս ապրո՞ւմ եմ, թէ մահացած եմ:

3. Եթէ ողջ եմ՝ իմ հասցէն:

Երեք շատ բարդ եւ դժուարին հարցեր, որոնց ես ինքս անգամ դժուարանում եմ պատասխանել:

Բայց փորձենք:

Սկսում եմ իմ իսկական անունից:

Ես 1888 թուին աշխարհ գալուց ի վեր կոչուել եմ Արամ Թովմաղեան: 1921

թուին, երբ փաստաթղթերս ներկայացրի վարչութիւն անձնագիր ստանալու՝ այնտեղ սխալմամբ Թովմասեան էին նշանակել, եւ ես այս քառասուն տարի է ապրում եմ որպէս «վրիպակ» անձ:

Հետագային, տեսնելով, որ սխալ անունով էլ կարելի է շիտակ ապրել, հետեւեալ հարցը ծագեց գլխումս:

Արդեո՞ք ճիշդ պէտք է համարել այն, որ մարդիկ իրենց ողջ կեանքում մի անունով ապրեն: Եթէ անունը նրա համար է դրւում մարդկանց վրայ, որ մէկը միւսից զանազանենք՝ չէ՞ որ անհատ մարդն էլ իր կեանքի ընթացքին տարբեր սկզբունքներ է դաւանում եւ որպէս բարոյական դէմք տարբեր անուններ էլ պիտի կրի:

Քրիստոսի առաքեալներից Պօղոսը, օրինակ, քանի քրիստոնէութիւնը հալածւում էր՝ Սօղոս էր կոչւում: Իսկ երբ ինքն էլ հաւատացեալ դարձաւ՝ իր Սօղոս անունը Պօղոսի փոխեց ամենայն իրաւամբ:

Հաւատացեալն ու անհաւատը ինչպէ՞ս կարող են միեւնոյն անունը կրել:

Ես ինքս մինչեւ 1935 թիւը երբ գրում էի՝ Լեռ Կամսար էի, բայց դրանից յետոյ, երբ դադարեցի գրելուց՝ դարձայ Լուռ Կամսար:

Բնական է: Անունը պէտք է համապատասխանի կրողի բովանդակութեանը, այլապէս կ'ասեն՝ «անունը կայ, ամանում չկայ»...

Մշտական անուն պէտք է դնել մարդու վրայ նրա մեռնելուց յետոյ միայն, եւ այդ պրակտիկան արդէն կիրառւում է մեզանում:

Առաջները մեր պետական գործիչներին անմահացնելու համար կենդանեօք նրանց անունները դրւում էին քաղաքների, գիւղերի եւ կոլխոզ խանութների վրայ: Բայց երբ յանկարծ փոխւում էին նրանց քաղաքական համոզմունքները՝ փոխւում էին նաեւ նրանց անուններով կոչւող քաղաքների անունները՝ առաջացնելով մեծ տեխնիկական անյարմարութիւններ: Այդ պատճառով էլ մեր կառավարութիւնը ընդունեց մի որոշում, ըստ որի մարդիկ անմահանալ կարող են իրենց մահուանից յետոյ միայն...

Ընկեր Սիմէոն, համոզուեցի՞ք, որ իմ իսկական անուան մասին Հայաստանի Աօկս-ը ձեզ ոչինչ ասել չէր կարող:

Հիմա գանք իմ կենդանի կամ մեռած լինելու հարցին:

Մեռա՞ծ եմ ես, թէ կենդանի: Ահա ձեզ մի հարց, որին դժուարանում եմ պատասխանել:

Եւ այդ գրողը չի իմանայ, եւ ինչ էլ ասեն՝ նրանց խօսքին մի՛ հաւատացէք:

Շատ գրողներ ինքզինքնին կենդանի են յայտարարում, բայց իրապէս մեռած են... ընթերցող չունենալու պատճառով:

Այդ մասին հասարակութիւնը պիտի դատի՝ գրողն ի՞նչ իմանայ:

Մոսկուայում ձմեռ ժամանակ անցորդը չի զգում, թէ իր ականջները սառել են, դէմից եկող անցորդն է զգուշացնում.

- Է՛յ, ընկեր, ականջներդ սառել են...

Գալով ձեր երրորդ հարցին՝ հասցէս, դա էլ շատ սերտ կապուած է իմ կենդանի կամ մեռած լինելուս հետ:

Եթէ մեռած եմ՝ հասցէս կը լինի Երեւանի գերեզմանատուն, իսկ եթէ կենդանի եմ՝ Երեւան, Լենինի պողոտայ, համար 15:

Այս երկուսից ընտրէք, որը կ'ուզէք:

Ընկեր Սիմէոն, եթէ որոշել էք ուսումնասիրութիւն գրել իմ մասին, ցանկալի էր, որ ինձ մեռած համարէիք. որովհետեւ կենդանի հեղինակները երբեք չեն արժանանում այն փառքին, ինչի արժանանում են մեռածները:

Խորին յարգանքներով՝
ԼԵՌ ԿԱՄՍԱՐ
Երեւան

Սիմէոն Կիւլոյին՝ Պոսթոն
1960թ., Երեւան

Դուք ձեր նամակում գրում էք՝ «Կիպրոսից, Սիրիայից հասնող լուրերը ասում են, որ դուք մեռած էք: Հայաստան այցելող էքսկուրսանտներն էլ հակասական տեղեկութիւններ են տալիս ձեր մասին. մէկն ասում է մեռած է, միւսը՝ կենդանի: Սրանով խնդրում եմ անկեղծութեամբ ինձ յայտնել. «Դուք մեռա՞ծ էք, թէ կենդանի՝ ինչո՞ւ չէք երեւում մամուլում»:

Դրան ի պատասխան գրում եմ:

Ես կենդանի եմ, բայց այդ ապացուցելու համար ոչ մի «իրեղէն ապացոյց» չունեմ: Իմանալով, որ կեանքումս սուտ խօսած չունեմ՝ պիտի հաւատաք իմ բանաւոր հաւաստիացումներին:

Ես մամուլում երեւալ չեմ կարող, որովհետեւ մամուլի տեսուչ Գէորգ Հայրեանը չի թողնում: Որսկանի նման եղեւիցս ման է գալիս, որ թերթում երեւամ՝ իսկոյն խփում է: Մի անգամ ինձ «գրական թերթում» բռնեց, ականջիցս քաշելով տարաւ կենտրոնական օրաթերթ «Սովետական Հայաստան», այնտեղ ինձ բոլորի առջեւ «զռեհիկ» անուանեց ու խփեց: Գրողների միութեանն էլ հրամայեց ծունկի գալ ու ներողութիւն խնդրել, իրենց օրգանում իմ ֆելիետոնը տպագրած լինելու համար:

Որ թերթին մօտենում եմ, խմբագիրները սարսափով իրենց թերթի դուռը փակում են երեսիս եւ բանալու ծակից իմ հեռանալուն են սպասում:

Միայն «Ոզնի» երգիծական հանդէսը իր դրան փակից մի անցք է թողել, երբ Գէորգ Հայրեանը ուրիշ կողմ է նայում՝ գաղտագողի այդ անցքից ներս եմ սողում, մի ֆելիեթոն փպում ու դուրս գալիս փախչում: Որ տեսաւ, սեւս կը տայ:

Այսպէս ես հանդէս եմ գալիս ծպտուած, Արա Մասեան անուան տակ: Ընթերցողներս կարդում եւ ասում են.

- Սա Արա Մասեանը որքա՜ն նման է Լեռ Կամսարին, կարծես նա լինի: Եւ ես չեմ կարող դուրս գալ իմ թաքստոցից, փաթաթուել իմ ընթերցողին եւ ասել.

- Գրկի՛ր ինձ, հէնց ես Լեռ Կամսարն եմ...

Այսպիսի զուլում մարդ է այդ Գէորգ Հայրեանը:

Դուք երեւի տեսած կը լինէք նրան. այս ամառ նա Ամերիկա եկաւ պտոյտի:

Վերադարձին թերթում գրեց իր ճամբորդական տպաւորութիւնները, որոնք ջրիկ լինելու համար ոչ ոք չկարդաց:

Այս «յաջողութիւնից» խրախուսուած նա առանձին գրքով հրատարակեց այն, որ էլ աւելի չկարդան:

Ամբողջ Հայաստանի գրողների բախտը այդ մարդն է տնօրինում: Յիսուն տարուայ սիրուած գրողին կարող է փոշիացնել, իսկ փոշուց յիսուն տարուայ սիրուած հեղինակ ստեղծել:

Յարգելի Սիմէոն, ինչո՞ւ մի անգամ Հայաստան չէք գալիս պտոյտի: Եթէ գաք՝ կը տեսնէք, մեռա՞ծ եմ, թէ կենդանի:

Գրում էք՝ թէ ուզում եմ ձեր մասին մի ուսումնասիրութիւն գրել: Շնորհակալ եմ: Եթէ նոր բնակարան ստացած լինէի, այնպէ՛ս կ'ուզենայի ձեզ իմ տանը հիւրասիրել: Կենտկոմի առաջին քարտուղարը սա չորս տարի է խոստանում է, բայց ոչ բնակարան է տալիս, ոչ էլ իմ դիմումին է պատասխանում: Նրանից պատասխան ստանալու համար ուզում եմ դիմել Մոսկուա:

Եթէ Մոսկուան էլ չպատասխանեց՝ ուզեմ-չուզեմ ձեր միջոցով պիտի դիմեմ ՄԱԿին: Իմ հարցը շատ նման է այնտեղ նստած Չան Կայ Շիին, երկուսս էլ կորցրել ենք մեր ոտների տակի հողը:

Նա Չինաստան չունի, ես՝ բնակարան:

Յարգանքներով՝ **ԼԵՌ ԿԱՄՍԱՐ**

Սիրելի Սիմէոն Կիւլօ,
Իմ պոսթոնաբնակ բարեկամ.

24. 12. 1960թ.

Իր ժամանակին ստացել եմ Նոյ. 1-ի նամակը եւ պատասխանել եմ իր ժամանակին:

Այսօր գրում եմ մի երկրորդ նամակ այնպէս, ինչպէս որսորդը որսին նշան բռնելիս կրակում է միաժամանակ երկու գնդակ՝ մէկնումէկը նպատակին հասցնելու համար:

Բայց քանի որ որոշել ես մայիսին անպայման այցելել ինձ անձամբ՝ նամակներս նպատակին չհասնեն էլ, շատ չեմ մտահոգուի՝ ինչու որ մի քանի ամսից «որսը» իր ոտովը կը գայ իմ դուռը...

Իմ նամակները շատ նման են Նոյի բաց թողած թռչուններին. ոմանք դուրս են գալիս «աղաւնիներ» եւ պատասխան են բերում, ոմանք էլ «ագռաւների» նման ինձ թողնում են անպատասխան:

Այնուհետեւ կ'ուզենայի շնորհաւորել ձեր Նոր տարին, եթէ հաստատ իմանայի, թէ Ամերիկայում Նոր տարի գոյութիւն ունի, եւ մարդիկ առհասարակ ուրախանալու սովորութիւն ունեն: Մեզ սովորեցրել են, որ կապիտալիստական երկրներում մարդիկ միայն դժբախտ են:

Քո գալու լուրն առնելով, անմիջապէս Աօքս-ի նախագահ Բերսաբէին գնացի եւ խնդրեցի միջամտել ուր որ հարկն է՝ ինձ մի ներկայանալի բնակարան տրամադրելու համար: Ներկայ բնակարանում ամաչում եմ քեզ ընդունել: Դա ոչ թէ բնակարան, այլ կաւաշէն, կաւածեփ, կաւածածկ մի որջ է, որին առընթեր նախապատմական մարդու քարայրն անգամ կարող է պալատ համարուել: Իմ բնակարանային պայմաններով թէպէտեւ չեմ հասել տակաւին «քարի դարին», բայց դժգոհ չեմ: Դիոգինէսն ապրում էր մի տակառի մէջ շատ երջանիկ:

Մեր երկուսիս դժուարութիւնը սկսւում է միայն մեռնելիս: Օրինակի համար, Դիոգինէսն ինչպէ՛ս պարզի իր ոտքը մի նեղ տակառի մեջ: Իսկ պզգած մեռնելը հնարաւոր չէ:

Գալով ինձ, իմ ցաւն էլ այն է, որ վախճանուելիս ես ոչ մի կերպ չպիտի կարողանամ համոզել ինձ, որ ես իրօք մեռել եմ, քանի որ բնակարանիս եւ գերեզմանիս մէջ ոչ մի էական տարբերութիւն չկայ: Երկուսն էլ կառուցուած են միեւնոյն հողից:

Սիրելի Սիմէոն, դու իմ աչքին մի շատ խստապահանջ մարդ կ'երեւիս: Այդ պատճառով քեզ նամակ գրելիս վախիցս տասն անգամ մտքերս չափում, ձեւում, նոր միայն գրում եմ: Պատահում էլ է, որ չափում, ձեւում ու չեմ գրում: Ու չգրած մտքերս աւելի շատ են լինում քան գրածներս: Այդ է ահաւասիկ պատճառը, որ քեզ նամակ գրելիս աւելի շատ կչկչում եմ, քան «ձու» ածում:

Կարօտում եմ քեզ շատ: Երբեմն ուզում եմ երազումս տեսնել քեզ, բայց աւա՜ղ, դա հնարաւոր չի՝ երկու տարբեր կիսագնդերում ապրած լինելու համար: Միաժամանակ չենք պառկում ու միաժամանակ վեր չենք կենում: Երբ ես քնած եմ՝ դու արթուն ես, եւ ընդհակառակը, երբ ես արթուն եմ՝ դու քնած:

Ձայն ունե՞ս, Սիմէոն, երգո՞ւմ ես: Ես երկու տող երգեմ, եթե այն քեզ դուր գայ՝ գրիր շարունակեմ:

«Ամ,'իմ ճամբէն մոլոր գնաց,
Անտակ ծովին դէմ առաւ...»

Գրիր գաղութահայ կեանքից: Դու «յառաջադիմակա՞ն» կուսակցութեանն ես պատկանում, թէ՞ «յետադիմական»: Այդտեղ կուսակցութեան պատկանելը կամաւո՞ր է լինում՝ թէ՞ բռնի: Եթէ կամաւոր՝ ինչո՞ւ պատահում են մարդիկ, որոնք «յառաջադիմականը» թողած, «յետադիմականին» են պատկանում:

Ինձ որ հարցնես՝ ես «եպեւի» եւ «առաջի» միջեւ խտրութիւն չեմ դնում: «Եպեւը»՝ դա մարդու անցեալն է, պատմութիւնը, իսկ «առջեւը»՝ ապագան, գալիքը: Արժէ՞ սրոյգ, արդէն պատահած անցեալը զոհել անսրոյգ գալիքին: Մանաւանդ հիմա, որ աշխարհն ապրում է ատոմային պատերազմի սարսափներն ու երկրագունդը վիճակախաղի է դրուած:

Ոչ՝ երկուսից, ես «եպեւը» կը նախընտրեմ «առջեւից»:

Եպեւում եմ թողել իմ ոսկէ մանկութիւնը, իմ կորուսեալ հայրենիքը, որոնց մասին ունեցած իմ յուշերի մի մասնիկը չեմ փոխի հազար անորոշ գալիքի հետ:

Իսկ եթէ խօսենք «մարդակազմութեան» լեզուով, պիտի ասենք, որ մարդուն իր «եպեւը» նոյնքան անհրաժեշտ է, ինչքան «առջեւը», ու մէկն առանց միւսի գոյութիւն ունենալ չի կարող:

Ճակատամարտում նահանջելն էլ յարձակման չափ հմտութիւն է պահանջում:

Համաձա՞յն ես: Եթէ այո՝ ցտեսութիւն:

Քո՝
ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

«Կարմիր օրեր» անտիպ օրագրից

Շաբաթ 23, Յունիս, 1961թ.

Ստալինը իր ղեկավարութեան ժամանակ ամենայն անկեղծութեամբ յայտարարում էր.

- Ես արիւնարբու գազան եմ ու մարդ եմ սպաննում: Ինձ համար մարդն ու ճանճը միեւնոյն արժէքն ունեն:

Եւ մարդը ժողովրդից համակրանք չէր սպասում:

Բայց Խրուշչովը ներկայիս կամենում է երկու ձմերուկ բռնել իր մէկ ձեռքով: Ուզում է եւ՛ ժողովրդի համակրանքը վաստակի, եւ՛ մարդ սպաննի:

Այսպէս՝ նա ցերեկը մարդասէր է, գիշերը՝ մարդասպան:

Օ՜հ, լեզուս չի զօրում պատմել այն ոճիրը, որ կատարուեց հէնց այսօր աչքիս առջեւ:

Բայց պատմեմ ամէն ինչ սկզբից:

Ամերիկայի Պոսթոն քաղաքում ապրում էր մի ժուռնալիստ՝ Սիմէոն Կիւլօ անունով: Նա մտադրուած է լինում մի ուսումնասիրութիւն գրել իմ գրական գործունէութեան մասին: /Սեւ լինէր այն օրը, երբ մտադրուեց/:

Բայց չի իմացել ո՞ղջ եմ, թէ մեռած: Դիմել է Հայաստան եկող տուրիստներին, դիմել է Սիրիա, Կիպրոս եւ աշխարհի այն բոլոր տեղանքը, ուր հայութիւն կայ՝ իմանալու տեղեկութիւն իմ ողջութեան մասին, բայց չի յաջողուել: Մեծ մասամբ պատասխանել են, թէ ես, իբր թէ, մեռել եմ աքսորի ճանապարհին, 1938 թուին: /Տեսէք «երկաթեայ վարագոյրի» թանձրութիւնը.../

Հա, վերջում այդ մարդը դիմում է Հայաստանի արտասահմանի հետ կուլտուրական կապի միութեան վարչութեանը, աղերսելով պատասխանել՝ ո՞ղջ եմ ես, թէ՞ մեռած:

Վարչութիւնը նամակը յանձնեց ինձ՝ անձամբ պատասխանելու համար:

Մեծ դժուարութեամբ պատասխանեցի այդ նամակին, որովհետեւ ես էլ ստոյգ չգիտէի՝ ողջ եմ, թէ՞ մեռած:

Ճարահատ, այդ բանն ստուգելու համար, մեծ ծախսեր կատարելով, ինքը՝ Սիմէոն Կիւլոն է վեր կենում Հայաստան գալիս:

Մենք պատահում ենք իրար «Արմենիա» հիւրանոցում, եւ ես սկսում եմ պատմել իմ գլխին եկած դժբախտութիւնները մէկ առ մէկ, քսան տարուայ աքսորս, անպատմելի խոշտանգումներս եւ այլն, եւ այլն:

Դու մի ասի, Չեկան, մագնիտոֆոնը միացրած, մեզ լսում է իր թաքստոցից...

Մտածելով, որ Ամերիկա վերադարձին Կիւլոն կարող է այս բոլորը պատմել աշխարհի հայութեանը, եւ գաղտնիքը բացուի, նոյն գիշերը խեղդում է հիւրանոցում իր «հիւրին» եւ յայտարարում «յանկարծամահ»...

Ու ես հիմա այսքան արտասուք չեմ ճարում ողբալու այդ անմեղ մարդու կորուստը, որ մեռաւ իմ պատճառով:

Մազերս փետտելով ման եմ գալիս հիմա ու նզովում եմ ինձ էլ, իմ «տաղանդն» էլ միաժամանակ, որ պատճառ դարձաւ այս ահաւոր, տմարդի ոճիրին:

Օ՜հ, օդ տուէք ինձ, խեղդւում եմ...

Չորեքշաբթի, 6 Յուլիս 1961թ.

Թաղեցի իմ անմոռանալի ընկեր Սիմէոն Կիւլոյին եւ հիմա իմ կեանքի մասին եմ մտածում: Ինչպէ՛ս պիտի վարուի ինձ հետ կառավարութիւնը, չէ՞ որ ես էլ

նրա գործած յանցանքի մասնակիցն եմ:

Արդեո՞ք ինձ էլ խեղդամահ կ'անի մի գիշեր: Բայց ես հիւրանոցում չեմ քնում: Տանն էլ հարեւաններս կ'իմանան:

Ոչ, ինձ կը կանչի Չեկա, կը հարցաքննի, թէ ինչո՞ւ ես ասել եմ նրան, որ քսան տարով աքսորուել եմ եւ ինչո՞ւ չեմ ասել, որ քսան տարով չեմ աքսորուել եւ ընդհակառակը, շատ երջանիկ եմ զգացել ինքզինքս՝ այն էլ ոչ թէ քսան, այլ երեսուն տարով:

Արդարացում չունեմ, պարզում եմ վիզս եւ «խեղդիր» ասում եմ: Չեկան խեղդում է, ու, որպէսզի թաքցնի իր ոճիրը, տանում է մի հեռաւոր փողոց ու դիակս աւտոյի տակ գցելով տափակացնում է եւ ասում.

- Ցիմար մարդ, ինչո՞ւ փողոցում զգոյշ չես քայլում... /ինչպէս Կիւլոյին մեղադրեցին դէպքից մի շաբաթ առաջ խմած մի բաժակ կոնեակի մէջ/:

Բայց ինչո՞ւ եմ զուր տեղը գլուխս պայթեցնում՝ իմանալու համար, թէ ինչ մահով պիտի մեռցնի ինձ կառավարութիւնը: Հա՛մ մտածեմ, հա՛մ մեռնե՞մ...

Իրենք գիտեն, ինչ մահով կ'ուզեն, թող մեռցնեն:

Բայց, այնուամենայնիւ, խեղդուել կ'ուզեմ ես, ինչպէս իմ ընկեր Սիմէոնը, որպէսզի հանդերձեալ կեանքում, որպէս միատեսակ մահով մահացածներ՝ միասին լինենք:

Ի՞նչ իմանամ, միգուցէ այն աշխարհում մարդիկ տեսակագրւում են ըստ իրենց մեռելածեւի՝ մանաւանդ Սովետական իշխանութիւնից յետոյ:

Առաջները բոլոր մարդիկ մեռնում էին բնական մահով, բայց բոլշեւիկները մահուան այնպիսի ձեւեր բերին աշխարհը, որ մարդ չի իմանում, թէ որով մեռնի: Ի՞նչ կը լինէր, եթէ մահուան այսպիսի բազմաթիւ ձեւերի հետ գէթ մի ձեւ էլ կեանքի մասին մտածէին:

Չէ՞ որ մեռնելու համար պէտք է, որ մարդ մի քանի տոկոսով ապրած լինի...

Հինգշաբթի 14, Յուլիս, 1961թ.

Որովհետեւ այս տարի դեղատները ճանճասպան թուղթ չեն ստացել, այդ պատճառով մարդիկ սպանում են ճանճերին պարտիզանական յարձակումներով: Իսկ դա գազանակերպ է լինում:

Բարեկամներիցս մէկը սեղանի մէջտեղը քաղցրութիւն էր դրել եւ յատուկ դրա համար պատրաստուած մի ռետինէ թերթիկով խփում եւ ջարդում էր այն բոլոր ճանճերին, որոնք, թառած քաղցրութեան վրայ, ծծում էին այն:

Այս տեսնելիս, մի նմանութիւն ընկաւ միտքս, եւ դրանից սարսռաց ողջ էութիւնս:

- Ուլան,- ասում եմ ինքս ինձ,- այս նոյն եղանակով մեր կառավարութիւնն է սպանում արտասահմանեան հիւրերին, այն էլ իմ միջոցով:

Ինձ որպէս քաղցրութիւն դրել է մէջտեղ եւ արտասահմանից հիւր է ընդունում: Այս հիւրերից էլ ինձ մօտ գալիս են նրանք միայն, որոնք դէմ են սոցիալիզմին, եւ եկել են միայն նրա վատ կողմերը տեսնելու:

Եւ ահա շրրըփ, խփում է ու սպանում նրանց:

Այսպէս սպաննեց Սիմէոն Կիւլոյին, այսպէս պիտի սպաննի նրա կնոջը, որ մտադիր է Հայաստան գալ իր ամուսնու գերեզմանին այցելութեան, պիտի սպաննի «Ծիրանի գօտու» խմբագրին, որ ուզում է գալ ինձ այցելութեան:

Ուրեմն, ես այն խայծն եմ սովետների ձեռքում, որով ձուկ են բռնում: Ու-

րեմն իմ պատճառով այսուհետեւ էլ բազմաթիւ արտասահմանեան հիւրեր պիտի մեռնեն, ուրեմն ես խաղում եմ կին ու երեխայ ունեցող մարդկանց կեանքի հետ:

Բայց ի՞նչ կարող եմ անել: Կարո՞ղ եմ գրել նրանց՝ մի՛ գաք Հայաստան, որովհետեւ ձեզ կը սպաննեն: Եթէ գրեմ էլ, փոստը վայր կը դնի իմ նամակը եւ չի ուղարկի:

Ի՞նչ անեմ, ասէք, ի՞նչ անեմ:

Հազար անգամ կ'ուզէի «տաղանդաւոր երգիծաբան» չլինել, որ մարդիկ չգային եւ իմ պատճառով չզոհուէին:

Այս ակամայ ոճրագործութիւնս ես ինչպէս հաշտեցնեմ խղճիս հետ: Ես կը մեռնեմ, ի հարկէ, եթէ իմանամ՝ այս անգամ էլ չեն գայ շիրիմիս այցելութեան...

ՈՂԲԵՐԳ

ՍԻՄԷՈՆ Կիլոյ, իմ սիրելի հայրենակից,

Իմ թանկագին բարեկամ,

Իմ մտերիմ ընկեր,

Դու այդ ի՞նչ արիր...

Հեռուից հեռու, ովկիանոսի այն ափից սիրեցիր ինձ:

Ամբողջ վեց տարի ելար ինձ փնտռելու կենդանիների եւ մեռածների մէջ: Ու երբ յայտնաբերեցիր կենդանի՝ գրեցիր ինձ Պոսթոնից.

- Գալիս եմ քեզ հիւր, պատրաստ կաց:

Ու ես իմ տան դուռը բաց թողած պառկեցի գիշերները, որ դու, եթէ գիշերով անգամ գաս, դուռս բաց գտնես առջեւդ:

Ու ելար արեւմտեան կիսագնդից արեւելեան կիսագունդ եկար ինձ տեսնելու:

Տեսանք իրար ու ողջագուրուեցինք:

Բայց ինչո՞ւ այդքան կարճ:

Ինչո՞ւ դեռ ասելիքդ չվերջացրած յիշեցիր, որ մահկանացու ես, յանկարծ հեռացար աշխարհից:

Այնպէս շտապեցիր մահուան կարաւանին հասնել, որպէս թէ շատ էիր եկ մնացել...

Բայց ես չեմ կարող հաշտուել այդ դառն իրականութեան հետ, չեմ վաւերացնում կատարուածը, չեմ փակում իմ դուռը եւ առաջուայ նման անքուն կը սպասեմ, իմ ընկե՛ր:

Մենք ծնուել ենք միեւնոյն երկրում, մեր մանկութիւնը լուսաւորել է այն արեւը, որ Վարագայ սարի եզերքից դուրս է եկել ու սուզուել Վանայ ծովում: Մենք շնչել ենք նոյն օդը, խմել նոյն աղբիւրից:

Ու այսօր կորցրել ենք մեր մանկութեան օրրանը, մեր անմոռաց ծննդավայրը անդարձ: Նրա անհուն կարօտի մի ծայրը իր անհուն ծանրութեամբ իմ սիրտն է ճմլում, միւս ծայրը քոնը, եւ այդ կարօտի քուրայում մեր սրտերը իրար ձուլուեցին:

Գաղթից շատ առաջ, մի անշառ ու բարի օր, չար թուրքը քո հօր կարմիր արիւնով ներկեց Տոնեայ Գէալէի կակաչները, որ առանց այդ էլ շատ կարմիր էին...

Ու դու մանուկ հասակում փախար օտար աշխարհ այն զուլում երկրից, որի հողը բարի է, իսկ մարդիկ՝ չար:

Երկար դեգերումներիդ դատարկեցիր դառնութեան բաժակներ իրար եզերից: Կամեցար գրաշար դառնալ մի հայ տպարանատիրոջ մօտ, որ քեզ վռնտեց միայն նրա համար, որ նրան դիմելիս փոխանակ «էֆէնդի» ասելու՝ «պարոն» ասացիր:

Մի հայ, որ կամենում է թուրքերէն

մեծարուել:

Մի մարդ, որ պանը հայ է, դուրսը՝ թուրք...

Մի թուրք, որ մարդ է մորթում ոչ թէ սրով, այլ իր ոսկու քսակով:

Եւ դա աչքովդ տեսար, թէ ինչպէս բոլոր դրամատէրերը մի-մի «թուրք» են իրենց տպարաններում որպէս գրաշար աշխատող հայերի համար...

Իմ անմոռանալի Սիմէոն:

Դու իմ ունեցած առաւելութիւնների վրայ իմ չունեցածը աւելացնելով, մեծարեցիր ինձ մամուլում:

Բայց այդ մեծարումը ես չեմ նկատում անձնական:

Դու տարիներ շարունակ ապրելով հայրենիքից հեռու, անձամբ տեսնելով, թէ սփիւռքի հայերը ինչպէս են կամաց-կամաց ձուլւում օտարներին, հեռանում իրենց ազգութիւնից, քո արծուի հայեացքով փնտռեցիր եւ գտար հայ մշակոյթի ակնառու գործօններ, տնկեցիր որպէս պղնձէ օձ Սինա անապատում, որպէսզի գէթ մէկ ժամով ուշացնես հայ ազգի ջլատումը, նրա մի մասի օտարացումը:

Այդ իմաստով դու մեծարել ես ոչ միայն ինձ այլ շատ-շատերին նրանցից, որոնք իրենց ուժի չափով մի-մի քար են դրել հայ մշակոյթի բարձրացող պատերին:

Եւ այդ կատարել ես դու քո վարպետ գրչով, դու՝ մեռնող հայութեան կանթեղին ձէթ լցնող լուսարար:

Հայրենիքից դուրս, հեռաւոր Պոսթոնում, Հրանտ Ալեքիսեանը հայ մշակոյթի մի փոքրիկ օջախ կպցրեց «Ծիրանի Գօտի» անուանելով այն, ու դու ողջ եռանդով փուքս դարձար, փչեցիր, այդ մխացող օջախից բոց սպանալու, դրանով ջերմացնելու հայութիւնից սառող հոգիներին եւ յաջողեցիր՝ շնորհիւ քո ճարտար գրչի:

Բայց ինչո՞ւ եմ ասում այս բոլորը, երբ դու չկաս այլեւս, իմ Սիմէոն:

Իբրեւ վերջին խօսք, Սիմէոն, քեզ պիտի ասեմ հետեւեալը:

Դու աշխարհի մի ծայրից միւսը ճամբայ կտրեցիր, որ ինձ հիւր լինես:

Հիւր եկար կարճ ու ընդմիշտ հեռացար:

Հիմա էլ որպէս փոխայցելութիւն, ես եմ ճամբայ ընկել քեզ մօտ հիւր գալու: Դուռը բաց թող: Ու ես հիւր եմ գալիս քեզ մօտ ոչ թէ ժամանակաւոր, այլ յաւիտեանս չհեռանալու համար: Տեսնո՞ւմ ես, թէ ես որքան աւելի եմ սիրում քեզ, քան դու սիրեցիր ինձ:

Եօթանասուն տարի նաւելով կեանքիս ովկիանոսում, արդէն մօտ եմ ափերին ու պատրաստւում եմ նաւիս առագաստն իջեցնել:

Մօտ եմ քեզ շատ, իմ սիրելի ընկեր, համարեա ստորակէտով ենք բաժանուում մենք իրարից: Գուցէ եւ բութ պիտի լինի դնել...

Ու որովհետեւ այսքան մօտ ենք իրար, Սիմէոն, չեմ ասում քեզ «մնաս բարով», այլ քեզ կ'ասեմ՝ ցտեսութիւն...

Մնամ մեր տեսակցութեանն սպասող՝

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

1961թ. Յուլիս

1. Սիամիտ երգիծաբանը փորձում է տողատակով մի բան հասկացնի, որ փոստի «ցատուկ բաժնի» աշխատակիցները իրր թէ չհասկանան:

2. Նկատի ունի «Ծիրանի գօտի» հանդէսի հիմնադիր-տնօրէն Հրանտ Ալեքիսեանին:

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԼԵՔՍԻԵՒԻՉ

ԿԱՐՄԻՐ ՄԱՐԴՈՒՆ ՎԵՐՋԸ ԿԱՄ ՊԱՏՐԱՆԱՔԱՓՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

(La fin de l'homme rouge ou le temps du désenchantement ACTES SUD հրատարակչութիւն, 542 էջ)

Հատուած (էջ 111-129)

ՈՒՐ ԿԱՆ ՇՇՈՒՆՋՆԵՐ ԵՒ ՃԻՉԵՐ... ԵՒ ԽԱՆԴԱՎԱՌՈՒԹԻՒՆ

Մարգարիտա Փոկրէպիցքայա, բժիշկ, 57 տարեկան

Իմ փօնս, ինծի յատուկ, 7 Նոյեմբերն[1] է... Մեծ օր մը, լուսաւոր օր մը: Իմ մանկութեանս ամէնէն գեղեցիկ յուշը, Կարմիր Հրապարակի վրայ զինուորական տողանցքը:

Հօրս ուսերուն վրայ եմ եւ կարմիր փուչիկ մը ունիմ դասպակիս կապուած: Երկինքին մէջ, տողանցող զօրասիւններէն վեր, հսկայ դիմանկարները Լենինի եւ Ստալինի... Մարքսի... Դրասանգներ եւ ողկոյզներ կարմիր, կապոյտ, դեղին փուչիկներու... Կարմիրը իմ նախասիրած գոյնս է: Յեղափոխութեան գոյնը, անոր համար հեղուած արեան գոյնը... Հոկտեմբերեան մեծ Յեղափոխութիւնը: Այսօր կ'ըսեն՝ «պետական հարուածը», «բոլշեւիկեան դաւադրութիւնը»... «ռուսական աղէտը»... Լենին գերմանական գործակալ

մըն էր, եւ յեղափոխութիւնը կապարուած էր դասալիքներով եւ գինով նաւասպիներով... Ականջներս կը խցեմ, չե՛մ ուզեր այդ լսել: Ուժերէս վեր է... Ամբողջ կեանքս ապրած եմ հաւատքովս. ամէնէն երջանիկներն էինք, ծնած էինք փառաւոր երկրի մը մէջ, որուն նմանը չէր եղած բնաւ: Այսպէս ուրիշ երկի՛ր մը չէր եղած: Մենք ունէինք Կարմիր հրապարակը, եւ Փրկիչի աշտարակէն կը հնչէր երաժշտութիւն մը, որ ճշգրիտ ժամը կու տար ամբողջ աշխարհին: Ինծի այդ կ'ըսէր հայրս... Եւ մայրս եւ մեծ-մայրս... «7 Նոյեմբերը օրացոյցի ամէնէն գեղեցիկ թուականն է»: Նախորդ երեկոյ կանուխ կը պառկէինք, ընդանեօք գանգրուած թուղթով ծաղիկներ կը պատրաստէինք, ստուարաթուղթով սրտիկներ կը կտրէինք: Զանոնք կը գունաւորէինք: Առաւօտեան մայրս եւ մեծ մայրս տունը կը մնային տօնական ճաշ պատրաստելու համար: Այդ օրը միշտ հիւրեր կ'ունենայինք: Անոնք տուփի մը մէջ կարկանդակ մը կը բերէին, եւ գինի: Հիւսուած պայուսակով մը: Այն օրերուն կերպընկալ նիւթով պայուսակներ չկային... Մեծ մայրիկը կը պատրաստէր իր հռչակաւոր փիրոժքիները՝ կաղամբով եւ սունկով, մայրս կը հնարէր ռուսական աղցան մը եւ կ'եփէր անշրջանցելի միսը դոնդողի մէջ: Եւ ես հօրս քով կ'երթայի:

Փողոցը կը յորդէր մարդոցմով, անոնք իրենց վերարկուին կամ բաճկոնին վրայ ունէին կարմիր ժապաւէններ: Կային շլացնող կարմիրով մեծ ազդագիրներ, զինուորական փողերախումբ մը... Բեմը՝ մեր ղեկավարներով... Եւ երգեր:

Մոսկուա, աշխարհի եւ մեր հայրենիքի մայրաքաղաք,
Քու վրադ կը շողայ Կրեմլինի աստղը,
Դուն, փիեզերքի հպարտութիւնը,
Մեր գեղեցիկ կրանիթեայ Մոսկուա՛:

Տեւաբար ցանկութիւն ունէինք պոռալու. «Հուրրա՛»: Բարձրախօսները կը գոչէին. «Փառք բանուորներուն Լիխաչով գործարանի՝ որ երկու անգամ ստացաւ Լենի՛նի կարգի գնահատականը եւ Կարմի՛ր դրօշի: «Հուրրա՛, ընկերներ, «Հուրրա՛, Հուրրա՛», «Փա՛ռք մեր հերոս համայանավար եւ լենինեան երիտասարդութեան... Փա՛ռք համայնավար կուսակցութեան... Փա՛ռք մեր փառաւոր վեթերաններուն», «Հուրրա՛, Հուրրա՛»: Շքե՛ղ էր: Այնպէ՛ս խանդավառութիւն կար: Մարդոց ուրախութիւնը կը յորդէր, կ'արտասուէին: Փողերախումբը կը նուագէր զինուորական քայլերգներ եւ յեղափոխական երգեր.

Ան (այր) ղրկուած է արեւմուտք,
Ան (կին) ղրկուած է արեւելք,
Անոնք կը մեկնին քաղաքացիական կոիւի,

Մեր երիտասարդ կոմսոմոլները...

Այդ բոլոր երգերու բառերը անգիր կը յիշեմ, ոչինչ մոռցած եմ, յաճախ կ'երգեմ: Ես ինծի կ'երգեմ: (Քթին տակէն կ'երգէ)

Անսահման է հայրենիքս,
Ի՛նչ անտառներ, գետեր եւ դաշտեր,
Չեմ գիտեր որեւէ ուրիշ երկիր
Ուր մարդ նոյնքան ազատ կրնայ շնչել...

Դեռ վերջերս, պահարանի մը մէջ գտայ հին ձայնապնակներ, մառանի մը մէջ փնտռեցի ելեկտրաձայնը (electrophone), եւ ամբողջ գիշեր մը անցուցի յուշերու մէջ... Տունայեւսքիի եւ Լէպէտեւ-Քումաչի երգերով... (Կը լռէ): Եւ ահաւասիկ շատ բարձրերն եմ, շատ շատ բարձրերը... Հայրս է, որ զիս իր թեւերով կը բարձրացնէ: Միշտ աւելի վեր... Եւ վերջապէս, ամէնէն կարեւոր պահը. կը յայտնուին հզօր բեռնակառքերը, որոնք դղրդոցով կը յառաջանան սալաքարերուն վրայ, քարշ տալով ծածկոյթներով պաշտպանուած հրթիռները, եւ զրահապատները եւ հրետանին... «Այս երբե՛ք չմոռնաս», կը պոռայ հայրս՝ փորձելով լսուիլ

հակառակ աղմուկին: Եւ ես գիտեմ, որ երբեք պիտի չմոռնամ: Տան ճամբուն վրայ կանգ պիտի առնէինք խանութ մը եւ ինծի պիտի գնէր Պուրաթինօ օշարակը, իմ նախասիրածս: Այդ օրը ես իրաւունք ունէի ամէն բանի, որ կը ցանկայի՝ սուլիչներ, շաքարներ...

Մոսկուան կը սիրէի գիշերով... Այդ ամբողջ լոյսերը... Տասնութը տարիքին... Տասնո՛ւթը տարեկան, սիրահարեցայ: Երբ հասկցայ, որ սիրահարած եմ, չէք կրնար երեւակայել, թէ ի՞նչ ըրի: Կարմիր հրապարակ գացի: Առաջին բանը, զոր ուզեցի այդ պահուն, Կարմիր հրապարակին վրայ գտնուիլ էր: Կրեմլինի պատը, եղեամով ծածկուած սեւ եղեւիները, Ալեքսանդրի պարտէզի ձիւնով ծածկըուած... Այդ բոլորը դիտելով, գիտէի, որ երջանիկ պիտի ըլլայի: Վստահ եւ համոզուած:

Դեռ շատ ժամանակ չէ անցած այն օրէն, երբ ամուսինս եւ ես ճամբորդութիւն մը կատարեցինք Մոսկուա: Եւ առաջին անգամն ըլլալով Կարմիր հրապարակ չգացինք: Ինքնամփոփուելու համար: Առաջին անգամն ըլլալով... (Աչքերուն մէջ արցունք կար): Ամուսինս հայ է, դեռ ուսանող էինք, երբ ամուսնացանք: Ան վերմակ մը ունէր եւ ես ծալուող մահիճ մը, այդքան միայն ունէինք սկսելու համար կեանքի մէջ: Մոսկուայի մէջ մեր ուսումը աւարտելէ ետք ղրկուեցանք Մինսք: Բոլոր բարեկամներս ասդին անդին ցրուեցան՝ Մոլդաւիա, Ուքրանիա, Իրքուցք... Անոնք Իրքուցք գացողները կը կոչէին «դեկտեմբերեաններ»[2]: Ամէնուրեք մեր երկիրն էր: Կրնայինք երթալ ո՛ւր ուզէինք: Այն ժամանակ սահմաններ չկային, ո՛չ մուտքի արտօնութիւն, ո՛չ մաքսատուն: Ամուսինս կը փափաքէր երթալ իր տունը՝ Հայաստան: Կ'ըսէր. «Երթանք Սեւանայ լիճ, երթանք, Արարատ լեռը պիտի տեսնես: Իրաւ հայկական լաւաշը պիտի ճաշակես»: Մեզի առաջարկուեցաւ Մինսքը: Եւ ըսինք. «Երթա՛նք Պելոռուսիա»: Այդպէս է երիտասարդութիւնը, դեռ այնքան ժամանակ ունինք մեր առջեւ, այն տպաւորութեամբ, որ բաւարար ժամանակ պիտի ըլլայ ամէն բան ընելու: Գացինք Մինսք եւ հոս լաւ զգացինք: Կարելի է ժամերով շրջիլ լիճերու եւ անտառներու միջեւ, արձակազէններու անտառները... Ճահիճներ եւ անտառակներ... Երբեմն դաշտեր... Մեր զաւակները հոս մեծցան, իրենց նախասիրած ճաշերը գետնախնձորով կարկանդակներն են եւ պիելոռուսական մոչանքան[3]: Ինչպէս երգը կ'ըսէ. «Գետնախնձորը կը տապկուի, գետնախնձորը կը խաշի»: Իրենց համար անոնցմէ վերջ կու գայ հայկական խաշը: Բայց ամէն տարի բոլորով Մոսկուա կ'երթայինք: Առանց անոր չէի կրնար ապրիլ, հարկ էր, որ թափառէի Մոսկուայի մէջ, որ շնչէի Մոսկուայի օդը... Միշտ անհամբերութեամբ կը սպասէի այն պահը, երբ գնացքը կը մտնէր Պիելոռուսիոյ կայարանը ազգային օրհներգի ձայնով: Սիրտս կը ցատքէր, երբ կը լսէի. «Ընկեր ուղեւորներ, մեր գնացքը հասաւ մեր հայրենիքի կայարանը, Մոսկուայի հերո՛ս քաղաքը...», «Եռուն, հզօր եւ անպարտելի, Մոսկուա, իմ քաղաքս, իմ հայրենիք, իմ սէր...»: Եւ կառքէն կ'իջնէինք այդ երաժշտութեան ձայներու ընկերակցութեամբ:

Բայց հոն... Ո՛ւր ինկած էինք: Մենք մեզ գտանք անծանօթ քաղաքի մը մէջ, օտար քաղաք մը... Աղտոտ թուղթեր եւ թերթերու ծուէններ հովէն տարուած կը թռէին փողոցներուն մէջ, կը քալէինք գարեջուրի տուփերու վրայ: Կայարանը... Գետնուղիի մօտ, ամէնուրեք կային մարդկային գորշ շարաններ, որոնք բան մը կը ծախէին, կանացի ներքնազգեստ եւ սաւաններ, հին կօշիկներ եւ մանուկներու խաղալիքներ: Հազիւ ծխախոտ կարելի էր գտնել: Ինչպէս պատերազմական ժապաւէններ-

րու մէջ: Այդ միայն հոն տեսած էի: Երշիկներ, հում միս, ձուկ, դրուած գետինը՝ թուղթի կտորներու կամ սպուարաթուղթի վրայ: Եւ մոսկուացիները ապիկա կը գնէին: Կը ծախէին: Գամեր, կողքին՝ ուտեստեղէն, հագուստներ: Կը խօսէին ուքրաներէն, պիելոռուսերէն, մոլտաւերէն... «Վիննիձայէն ենք...», «Մենք կու գանք Պրեստէն...»: Եւ մեծ թիւով մուրացիկներ... Բայց ուրկէ՞ կու գային ամէնքը: Հաշմանդամներ...Կարծէք ժապաւէնի մը մէջ էին... Միայն այդ կը տեսնեմ որպէս բաղդատութիւն, այդպէս էր խորհրդային հին ժապաւէններու մէջ: Ինչպէս շարժապատկերի սրահի մէջ...

Հին Արպատի[4] մէջ, իմ սիրելի Արպատ, տեսայ ափսէներ մադրիոշքաներով, սամավարներով, սրբանկարներով, ցարի եւ իր ընտանիքի լուսանկարներով: Սպիտակ զօրավարներու, Քոլչաքի, Տէնիէքինի, եւ Լենինի կիսանդրի մը... Ամէն տեսակ մադրիոշքաներ, Կորպաչեւի եւ Ելցինի գլուխներով: Ես իմ Մոսկուաս չճանչցայ: Ի՞նչ քաղաք էր ասիկա: Ծերուկ մը, աղիւսներու վրայ նստած, ձեռնադաշնակ կը նուագէր: Զարդարուած էր կրծքանշաններով: Կ՚երգէր ռազմական երգեր, եւ ոտքերուն առջեւ կար գլխարկ մը, որուն մէջ՝ քանի մը դրամներ: Մեր նախասիրած երգերը...

Վառարանին խորքը կը դողդղան բոցեր,
Խէժը կը հոսի արցունքի պէս...

Ուզեցի իրեն մօտենալ, բայց ան արդէն շրջապատուած էր օտարներով, որոնք կը նկարուէին... Իրեն հետ կը խօսէին իտալերէն, ֆրանսերէն, գերմաներէն, իր ուսին կը զարնէին. Տավա՛յ, Տավա՛յ: Ինչ որ զիրենք կը զուարճացնէր, շատ զոհ էին: Բնականաբա՛ր: Առաջ մեզմէ այնքան կը վախնային... Եւ հիմա... Նայեցէ՛ք սա խառնիխուռն վիճակին: Վերջ մեծ կայսրութեան: Մադրիոշքաներու, սամավարներու, կուսակցութեան անդամատետրերու եւ կոմսոմոլներու անդամատետրերու կողքին, դրօշակներու եւ պզտիկ դրօշներու դէզեր... Եւ խորհրդային ռազմական շքանշաններ: Լենինեան կարգի, Կարմիր դրօշի կարգի: Շքանշան Արիութեան, շքանշան Արժանեաց... Անոնց կը դպչէի, կը շոյէի... Չէի յաջողեր հաւատալ... «Սեբաստոփոլի պաշտպանութեան համար», «Կովկասի պաշտպանութեան համար...»: Բոլորն ալ իրական էին: Մեր շքանշանները: Եւ համազգեստներ խորհրդային բանակի. թիկնոցներ, վերարկուներ, ասպղերով գլխարկներ... Գիները տոլարով էին: «Ի՞նչ կ՚արժէ», հարցուց ամուսինս՝ ցոյց տալով Քաջութեան շքանշան մը: «Քեզի քսան տոլարի կու տամ... Լաւ, համաձայն եմ, հազար ռուբլի տուր.- Իսկ Լենինի կարգի շքանշա՞նը.- Հարիւր տոլար... - Եւ քու խի՞ղճդ, ի՞նչ կ՚արժէ»: Ամուսինս պատրաստ էր դաս մը տալու իրեն: «Խելա՞ռ ես, թէ ի՞նչ: Ուրկէ՞ բուսար դուն: Ասոնք ամբողջատիրական ժամանակաշրջանի հետքեր են»: Ահա թէ ինչ ըսաւ. «Պարզապէս երկաթի կտորներ են, բայց օտարները կը սիրեն: Խորհրդային շրջանի խորհրդանիշները նորոյթ են իրենց համար, այս օրերուն: Լաւ կը ծախուին»: Սկսայ ճչալ... Ոստիկան մը կանչեցի: Կը գոռայի. «Չըլլալիք, բայց նայեցէ՛ք: Տեսա՞ք ինչ կ՚ընէ»: Ոստիկանը հաստատեց. «Ամբողջատիրական ժամանակաշրջանի հետքեր... Մենք կը միջամտենք միայն թմրեցուցիչի եւ պոռնկագրութեան պարագային...»: «Եւ Կուսակցութեան անդամատետր մը տասը տոլարի պոռնկագրութիւն չէ՞: Փառքի կարգի շքանշանը... Կամ սա, կարմիր դրօշ մը Լենինի պատկերով... տոլարնե՞րով: Յարդարուած բեմի մը վրայ գտնուելու պատուութիւնը ունէինք: Մեր առջեւ կատակերգութիւն մը կը խաղցուէր, որ մենք սխալ քաղաք եկած էինք: Հոն կայնած էի՝ արտասուելով:

Կողքիս, իպալացիներ վերարկուներ եւ կարմիր ապտղով գլխարկներ կը փորձէին: «Քարաշօ՛, իսկական ռուսական»...

Առաջին անգամ մօրս հետ մտած եմ դամբարանը: Կը յիշեմ, որ կ'անձրեւէր, աշնան ցուրտ անձրեւ մը: Վեց ժամ հերթի կանգնեցանք: Ասպիճաններ... թերասպուներ... ծաղկեպսակներ... շշուկով խօսքեր. «Ծրջեցէք, կանգ մի՛ առնէք...»: Այնքան կու լայի, որ բան չտեսայ: Բայց այն պպաւորութիւնը ունէի, որ Լենինը կը փայլէր... Երբ պզտիկ էի, մօրս կ'ըսէի. «Մամա՛, ես ինքս բնա՛ւ պիտի չմեռնիմ»: Ան ինծի կը պատասխանէր. «Քեզի ի՞նչ բան այդպէս մտածել կու տայ: Ամէն ոք կը մեռնի: Նոյնիսկ Լենինը մեռած է»: Նոյնիսկ Լենինը... Չեմ գիտեր, թէ ինչպէս կրնամ պատմել այս բոլորը: Բայց պահանջ կը զգամ այդ ընելու... Փափաք ունիմ: Պիտի ուզէի խօսիլ... բայց չեմ գիտեր որո՛ւ: Ի՞նչ ըսելու համար: Ըսելու համար խե՛նթի պէս երջանիկ էինք: Այժմ լիովին համոզուած եմ: Հասակ առած ենք թշուառութեան մէջ, միամիտ էինք: Բայց չէինք գիտեր, եւ ոչ ոքի կը նախանձէինք: Աժան գրչատուփերով եւ քառասուն կոպեկանոց գրիչներով դպրոց կ'երթայինք: Ամառը ատամի խիւսով սպիտակուած կտաւէ հողաթափեր կը հագնէինք: Սիրուն էին: Զմեռը ռետինէ կրկնակօշիկներ կը հագնէինք, եւ երբ սառէր, ներբանները կրակ կը դառնային: Բայց ուրա՛խ էինք: Կը հաւատայինք, որ վաղը այսօրուընէ լաւ պիտի ըլլար, եւ վաղայաջորդ օրը նախորդէն աւելի լաւ: Ապագայ ունէինք: Եւ անցեալ մը: Ինչ բանի, որ պէտք ունէինք, ապահովուած էր:

Կը սիրէինք մեր հայրենիքը՝ սահման չունեցող սիրով: Ան հայրենիքներու ամէնէ՛ն գեղեցիկն էր: Առաջին խորհրդային ինքնաշարժը. հուրրա՛: Անուս բանուոր մը գտած էր գաղտնիքը, որ պողպատը պաշտպանէր ժանգի դէմ. ի՛նչ յաղթանակ:



Ամբողջ աշխարհը այդ գաղտնիքը արդէն վաղուց գիտէր, բայց մենք գիտցանք աւելի ուշ: Այդ ժամանակ... Պիտի ըլլայինք առաջինները Հիւսիսային բեւեռին վրայ սաւառնող: Պիտի հակակշռէինք հիւսիսի բեւեռային արշալոյսները: Փոխէինք հուները հսկայական գետերու... ոռոգէինք յաւիտենական անապատները... Հաւա՛տքը: Հաւատքը, ան բան մրն է, որ կը գերանցէ բանականութիւնը: Առաւօտեան կ'արթննայի ազգային օրհներգի ձայնով. «Անբեկանելի Միութիւնը ազատ հանրապետութիւններու, միաձուլուած մեծ Ռուսիայով դարերու եւ դարերու համար...»: Դպրոցը շատ կ'երգէինք: Կը յիշեմ այդ երգերը... (Կ'երգէ քիթին տակէն).

Մեր հայրերը երազած են երջանկութիւն եւ ազատութիւն,

Ի՞նչ պայքարներ մղած են:

Պայքարի մէջ է, որ մեր հայրենիքը

Լենինի եւ Սպալինի կողմէ կառուցուեցաւ...

Մեր ընպանիքին մէջ կը պատմէին, որ պիոնէրներու մէջ մուտքիս յաջորդ օրը, երբ օրիներգը հնչած էր, անկողինէս ցատկած եւ ոտքի մնացած էի մինչեւ անոր աւարտը: Եւ պիոնէրներու երդումը. «Մտնելով պիոնէրներու շարքերը... ընկերներուս առջեւ կ'երդնում հանդիսաւորապէս... ամբողջ սրտովս սիրել հայրենիքս...»: Տան մէջ իրադարձութիւնը փօնեցինք, կարկանդակի բոյր կար՝ ի պատիւ ինծի: Կարմիր փողկապէս չէի զատուեր, կը լուայի եւ կ'արդուկէի ամէն առաւօտ, որպէսզի ոչ մէկ ծալք ունենայ: Նոյնիսկ կաճառը, շարունակած եմ հանգուցել փողկապներս պիոնէրներու ձեւով: Եւ իմ կոմսոմոլի անդամատետրը... Դեռ կը պահեմ... Մէկ տարիով մեծցած էի աւելի կանուխ ընդունուելու համար: Կը սիրէի փողոցը ման գալ, ամէն տեղ կը լսուէր ձայնասփիւռը... Ձայնասփիւռը մեր կեանքն էր, ամբողջովին մեզի համար: Երբ պատուհանը բանայինք, երաժշտութիւնը առատօրէն կը խուժէր, երաժշտութիւն մը՝ որ բնակարանին շրջանը զինուորական քայլով ընելու փափաք կը ստեղծէր: Ինչպէս տողանցքի մը պարագային... Թերեւս ան բանտ էր, բայց հոն տաքուկ էր եւ պաշտպանուած էի: Անոր վարժըուած էինք... Նոյնիսկ երբ հերթի կանգնած կ'ըլլանք, նաեւ այսօր, իրարու կը կպինք միասին ըլլալու համար: Նկատա՞ծ էք: (Կրկին կը սկսի քիթին տակէն երգել).

Սպալինը մեր փառքն է,

Սպալինը մեր երիտասարդութեան թռիչքն է,

Երգելով եւ պայքարելով, մեր ժողովուրդը հրճուանքի մէջ է

Հեղեւիր Սպալինի մինչեւ յաղթանակ:

Այո՛: Մեր մեծագոյն երազը մեռնիլ էր: Զոհուիլ: Տրուիլ: Կոմսոմոլներու երդումը կ'ըսէ. «Պատրաստ եմ, եթէ հարկ է, կեանքս ժողովուրդիս տալու»: Ասոնք սոսկ բառեր չէին, իրապէս մեզ այդպէս կը դաստիարակէին: Երբ զօրասիւն մը կ'անցնէր փողոցէն, ամէնքը կանգ կ'առնէին: Յաղթանակէն ետք... Զինուորը ահեղ մէկն էր... Երբ Կուսակցութեան մէջ մտայ, ձեռքովս գրեցի. «Ծանօթացայ ծրագիրին ու կանոններուն եւ զանոնք կ'ընդունիմ: Պատրաստ եմ բոլոր ուժերս ի սպաս դնել հայրենիքիս, եւ կեանքս տալ անոր համար, եթէ հարկ ըլլայ»: (Ինծի կը նայի ուշադրութեամբ): Ի՞նչ կը մտածէք իմ մասիս: Կը մտածէ՞ք, որ ապուշ եմ, հէ՛: Որքա՜ն մանկական է... Կը ճանչնամ մարդիկ... Այս բոլորը պարզապէս զանոնք կը մղէ խնդալու: Իրենք այս կը կոչեն զգացական ընկերվարութիւն, ստուարաթուղթի խմորի իտէալներ... Ձիս այդպէս կը տեսնեն: Սնամէջ դդում: Մտքով չզարգացած մը: Դուք, որ «մարդկային հոգիներու ճարտարագէտ էք»... կ'ուզէք զիս մխիթարե՞լ: Մեզի համար գրող մը աւելի քան գրող մըն է: Ան վարպետ մըն է: Մտածելու վարպետ մը: Վերջապէս, առաջ այդպէս էր, ոչ ներկայիս: Շատեր եկեղեցին ներկայ կ'ըլլան արարողութիւններու: Բայց ճշմարիտ հաւատացեալները հազուագիւտ են, անոնցմէ շատեր տառապող մարդիկ են... Ինծի պէս: Անոնք հոգեխոցի ենթարկուած են... Ես չեմ հաւատար եկեղեցւոյ պատուիրաններուն, կը հաւատամ, ըստ սրտիս: Ես աղօթքներ չեմ գիտեր, բայց կ'աղօթեմ... Քահանայ մը ունինք, նախկին սպայ մը, մեզի տեւաբար կը քարոզէ բանակին մասին, հիւլէական ռումբին մասին: Ռուսիոյ թշնամիներուն մասին եւ ազատ-որմնադիրներուն: Ես անձնապէս ուրիշ բան պիտի ուզէի իմանալ... Ուրիշ բառեր... Ոչ ըսուածները: Բայց անոնք են, որոնք կը լսուին մեր շուրջ: Շատ ատելութիւն կայ... Ոչ մէկ անկիւն կայ, ուր կաքե-

լի ոլլայ ամփոփել մեր հոգին: Եւ երբ միացնեմ հեռապեսիլը, նոյնն է... Միայն անէծքներ... Ամէն ոք կ'ուրանայ անցեալը եւ կը թքէ անոր վրայ: Նախասիրած բեմադրիչս՝ Մարք Զախարով, հիմա նոյնքան չեմ սիրեր այլեւս, ինչպէս առաջ, չեմ վստահիր իրեն... Կուսակցութեան իր անդամատեսրը այրած է, այդ ցոյց տուին հեռատեսիլէն... Հրապարակաւ: Թատրոնի մէջ չենք: Կեանք է: Իմ կեանքս: Ինչպէ՞ս կարելի է անոր այսպէս վերաբերիլ: Իմ կեանքիս այդպէս վերաբերիլ... Ի՞նչ բանի համար է այս կրկէսը:

Ես ժամանակավրէպ եմ... Մաս կը կազմեմ անոնց, որոնք կը մնան ճամբու եզրին: Ամէն ոք կ'աճապարէ իջնել գնացքէն, որ կ'արշաւէր դէպի ընկերվարութիւն, բարձրանալու համար անոր մէջ, որ կ'արշաւէ դէպի դրամատիրութիւն: Կը ծիծաղին սովետամարդոց վրայ: Զանոնք կը համարեն տանձի կոթ, խառնակիչ... Զիս նկատի չեն առներ... Կարմիրները հրէշ դարձած են, եւ սպիտակները՝ ազնուական ասպետներ: Ես դէմ եմ ասոր, իմ սիրտս եւ հոգիս դէմ են, չեմ ընդունիր, այդ բնախօսական է: Չեմ իւրացներ: Չեմ կրնար... Չեմ յաջողիր այդ ընել... Դրական ընդունած էի Կորպաչեւը, նոյնիսկ երբ զայն կը քննադատէի: Հիմա պարզ է, որ ան երազող մրն էր, ինչպէս մենք բոլորս: Ցնորամիտ մը: Այսպէս կարելի է ըսել: Բայց Ելցինի համար, ըսեմ, պատրաստ չէի... Ոչ ալ Կայտարի բարեկարգումներուն: Մեր դրամը մէկ օրուան մէջ ցնդեցաւ: Մեր դրամը եւ մեր կեանքը: Ամէն ինչ իր արժէքը կորսնցուց, ակնթարթի մը մէջ: Փոխան պայծառ ապագայի, սկսան մեզի ըսել. «Հարստացէ՛ք, սիրեցէ՛ք դրամը... Պաշտեցէ՛ք հրէշը»: Ժողովուրդը պատրաստ չէր ասոր: Ոչ ոք դրամատիրութիւն կ'երազէր, յամենայն դէպս, ես ինքս ձեզի կրնամ ըսել, որ ես այդ չէի երազեր... Ես կը սիրէի ընկերվարութիւնը: Այդ արդէն Պրեժնեւի ժամանակաշրջանն էր, «բուսակերութեան» ժամանակաշրջանը... Ես չեմ ապրած «մարդակերներու» տարիները: Ես կ'երգէի Բախմուդովայի երգերը.

Օդանաւի թեւին վրայ,
Կանաչ թայկան մեզի կ'երգէ իր երգը...

Ես կը պատրաստուէի ապրելու մեծ բարեկամութիւններ եւ կառուցել «քաղաքներ ծաւի գոյնով»: Երազելու... «Գիտեմ, որ հոս քաղաք մը պիտի ըլլայ... պարտէզ-քաղաք մը...»: Կը սիրէի Մայակովսկին, հայրենասիրական երգերն ու բանաստեղծութիւնները: Այն օրերուն անոնք այնքա՛ն կարեւոր էին մեզի համար: Ոչ ոք կրնայ զիս համոզել, որ կեանքը մեզի տրուած է միայն ուտելու համար համեղ ճաշատեսակներ եւ քնանալու: Արդ հերոսները անոնք են, որոնք բան մը կը գնեն տեղէ մը ծախելու համար ուրիշ տեղ՝ երեք կոպէկ աւելիով: Ներկայիս այս է, որ կը մտցնեն մեր գանկերուն մէջ: Նոյնհետայն, բոլոր անոնք, որոնք իրենց կեանքը զոհած էին ուրիշներու համար, մեծ գաղափարներու համար, տխմարներ են: Ո՛չ, ո՛չ եւ ո՛չ: Երէկ հերթի կանգնած էի վաճառատան մը առջեւ, առջեւս էր պառաւ կին մը, որ կը համրէր եւ վերստին կը համրէր իր դրամապանակի կոպէկները: Վերջապէս գնեց հարիւր կրամ երշիկ, ամէնէն աժանը... Եւ երկու ձու: Զինք կը ճանչնամ... Ամբողջ կեանքը աշխատած է որպէս ուսուցչուհի:

Չեմ յաջողիր ուրախանալ այս նոր կեանքով: Երբեք ինքզինքս լաւ պիտի չզգամ, երբեք ինքզինքս առանձին լաւ պիտի չզգամ: Իմ անկիւնս: Բայց կեանքը զիս կը քաշէ դէպի այդ ցեխը: Դէպի հողը: Ձաւակներս սպիտուած պիտի ապրին՝ ըստ այս օրէնքներուն: Ինծի պէտք չունին, ես ծիծաղելի եմ: Ամբողջ կեանքս ծիծաղելի է... Դեռ վերջերս, երբ կարգի կը դնէի թուղթերս, գտայ մտերիմ օրագիրս,

զոր կը պահէի, երբ պարմանուհի էի. առաջին սէր, առաջին համբոյր... եւ էջեր Սթալինի հանդէպ իմ սիրոյս մասին, պատրաստ էի մեռնելու միայն զինք հեռուէն տեսնելու համար: Խենթուկի մը օրագիրը... Ուզեցի զայն նետել, բայց չկրցայ: Թաքցուցի: Միայն մէկ վախ ունիմ, որ ան չիյնայ ուրիշի մը աչքին աջեւ: Այդ ծաղրի առարկայ պիտի դարձնէր, զիս պիտի հեգնէին: Ոչ ոքի ցոյց տուի... (կը լռէ): Կը յիշեմ շատ մը բաներ, զորս ողջմտութիւնը չի կրնար բացատրել: Ա՜հ, ես հազուագիւտ նմոյշ մրն եմ, այո՛: Ոեւէ դարմանող հոգեբան զոհ պիտի ըլլար... Ճիշդ չէ՞: Բախտ ունիք ինծի հանդիպած ըլլալու... (կը խնդայ եւ կու լայ միաժամանակ):

Շարունակեցէ՛ք, ուղղեցէ՛ք ձեր հարցումը... Դուք ձեզի կրնաք հարց տալ, թէ ինչպէս կարելի այդ հաշտեցնել. այս երջանկութիւնը եւ այն իրողութիւնը, որ խոր գիշերուան մէջ խուժէին մարդիկ ձերբակալելու համար: Մէկը կ'անհետանար, դրան մը եփեւէն հեծկլտուք կը լսուէր: Չեմ գիտեր, թէ ինչու այդ չեմ յիշեր: Չեմ յիշեր: Փոխարէն, կը յիշեմ գարնան ծաղկած եղրեւանին, փօնախմբութիւններ փողոցը, արեւէն ջերմացած փայտաշէն մայթեր: Արեւին բոյրը: Շլացնող տողանցքը մարզիկներու, ԼԵՆԻՆ եւ ՍՏԱԼԻՆ բառերը Կարմիր հրապարակի վրայ, հիւսուած ծաղիկներու եւ ապրող մարդոց մարմիններու միացումով:

Մօրս հարցուցի: Ի՞նչ կը յիշենք Բերիայէն: Լուպիանքայէն: Չի պատասխաներ... Միայն մէկ անգամ պատմեց, որ ամրան ընթացքին Ուքրանիայէն անցած էր, երբ հօրս հետ Խրիմէն արձակուրդէ կը վերադառնար: Այդ 1930-ական տարիներուն էր, համայնացումը... Ուքրանիայի մէջ մեծ սով կար, ուքրաներէն՝ Կորտոմոր: Միլիոնաւորներ մեռան: Ամբողջ գիւղեր: Ոչ ոք կար դիակները թաղելու... Ուքրանացիները կը սպաննէին, քանի որ չէին ուզեր աշխատիլ կոլխոզներու մէջ: Անօթութեամբ կը մեռցնէին: Հիմա գիտեմ... Անցեալին եղած էին զաբորոկ կոզակներ, եւ մարդիկ դեռ կը յիշէին ազատութիւնը... Հոն հողը այնքան բերրի է, որ եթէ գաւազան մը տնկէք, ծառ մը կը բուսնի: Այսուհանդերձ՝ կը մեռնէին... Կը մեռնէին ինչպէս արջառը: Իրենցմէ առած էին ամէն բան, բռնագրաւած վերջին հացի փշուրը... Շրջապատուած էին զինուորներով, ինչպէս կեդրոնացման ճամբարի մը մէջ: Այս գիտեմ, հիմա... Աշխատատեղիս ունիմ ուքրանացի բարեկամուհի մը, որ այս լսած է իր մեծ մօր պատմածէն... Իրենց գիւղին մէջ մայր մը ինք սպաննած է իր զաւակներէն մին, կացինով, եփելու եւ միւսները կերակրելու համար: Իր հարազատ զաւակը... Այս բոլորը իրապէս եղած է: Մարդիկ կը վախնային իրենց զաւակները դուրս հանելէ: Ձանոնք կ'առեւանգէին, ինչպէս կատուները եւ շուները: Իրենց տան պարտէզի հողը կը փորէին որդ ու ճճի գտնելու համար եւ կ'ուտէին: Անոնք, որոնք կրնային, կը սողային դէպի քաղաքները, դէպի գնացքները: Կը սպասէին, որ իրենց նետեն հացի փշրանք մը... Զինուորները զիրենք կը հեռացնէին ոտքի հարուածներով, զէնքի կոթով... Գնացքները կ'անցնէին մեծ արագութեամբ, քննիչները կը փակէին պատուհանները, կը քաշէին վարագոյրները: Եւ ոչ ոք... ոչ ոք հարցում կ'ուղղէր: Մարդիկ կը հասնէին Մոսկուա, կը բերէին գինի, պտուղներ, անոնք զոհ էին իրենց թխացած մորթով, կը խօսէին ծովու մասին: (Կը լռէ) Կը սիրէի Սթալինը... Ձայն սիրած եմ երկար ժամանակ: Նոյնիսկ երբ սկսան ըսել, որ փոքր էր եւ շէկ, չորցած ձեռքով մը, որ սպաննած էր իր կինը: Նոյնիսկ երբ զինք գահընկեց ըրին, դամբարանէն հանեցին: Այսուհանդերձ՝ կը սիրէի:

Ես երկար ատեն պզտիկ սթալինական

մրն էի: Շատ երկար ատեն: Այո՛, այդպէս էի: Բոլո՛ր այդպէս էինք... Եւ առանց այդ կեանքին, ձեռքերս պարապ կը մնան: Ոչինչ ունիմ... Թշուառական մրն եմ: Հպարտ էի մեր դրացի Վանիայով, ան հերո՛ս մրն էր: Պատերազմէն վերադարձած էր երկու սրունքները կորսնցուցած: Բակին մէջ կը տեղափոխուէր ձեռքով սարքըուած փայտեայ սայլակով: Ձիս կը կոչէր «պզտիկ Մարկարիթս», կը նորոգէր կօշիկները եւ մոյկերը բոլոր դրացիներուն: Երբ խմած ըլլար, կ'երգէր. «Սիրելի՛ եղբայրներս, սիրելի՛ քոյրերս... ես կռուեցայ հերոսի պէս...»: Երբ Սպալինի մահէն ետք գացի զինք տեսնելու, ինծի ըսաւ հետեւեալը. «Ուրեմն, պզտիկ Մարկարիթս, սպրկեցաւ այդ...»: Ի՞նք էր, որ այդ կ'ըսէր: Ի՛մ Սպալինիս համար: Մոյկերս քաշեցի իր ձեռքէն: «Ինչպէ՞ս կը համարձակիք: Դո՛ւք, որ հերոս էք: Եւ շքանը-շա՛նով»: Երկու օր անցուցի. պիոնէր էի, ուրեմն պէտք էր որ Քաղաքական Ոստիկանութիւն[5] երթայի իրենց խօսելու Վանիայի մասին: Տեղեկութիւն տալ: Իրապէս շատ լուրջ էի: Ինչպէս Պաւլիկ Մորոզովը[6]: Կարող էի նոյնիսկ հայրս մատնել... Մայրս... Այդ կարող էի ընել... Այո՛: Պատրաստ էի այդ ընելու: Ապա, դպրոցէն վերադարձիս տեսայ Վանիան, որ շէնքի մուտքին, գինով, գետին ինկած կը քաշկռտուէր: Իր աթոռէն ինկած էր, չէր յաջողեր կանգնիլ: Խղճացի:

Այո՛, այդպէս էի... Հոն կը մնայի, ականջս ձայնասփիւռին կպած, լսելու համար ընկեր Սպալինի մասին ամէն կէս ժամը անգամ մը սփռուած զեկոյցները: Եւ կու լայի: Ամբողջ հոգիովս: Այո՛: Ան գոյութիւն ունեցած է, սպալինականութիւնը, եւ մենք՝ սպալինականներս, եղած ենք... Մայրս ազնուական ընտանիքէ էր: Յեղափոխութենէն քանի մը ամիս առաջ ամուսնացած էր սպայի մը հետ, որ յետոյ կռուած էր Սպիտակ բանակին մէջ: Բաժնուած էին Օդեսայի մէջ, ան գաղթած էր Տենիքեինի պարտուած բանակէն ինչ որ մնացածներու հետ, բայց մայրս չէր կրնար լքել իր անդամալոյծ մայրը: Չեկայի կողմէ ձերբակալուած է որպէս սպիտակ սպայի կին: Իր խնդիրով զբաղող քննիչը իրեն սիրահարած է: Յաջողած է զինք փրկել... Բայց սպիտակ, որ իրեն հետ ամուսնանայ: Երբ աշխատանքէն կը վերադառնար, մօրս գլխուն իր ատրճանակով հարուածներ տուած է: Եւ յետոյ կորսուած է: Եւ մայրս... Գեղուհի մը, կին մը, որ կը պաշտէր երաժշտութիւնը եւ կը խօսէր բազմաթիւ լեզուներ... Սպալինի հանդէպ կը տածէր խելակորոյս սէր մը: Երբ հայրս բաւարարուած չըլլար բանով մը, մայրս անոր կը սպառնար. «Ծրջկոմ պիտի երթամ եւ անոնց պիտի ըսեմ, թէ ինչ տեսակ համայնավար ես դուն»: Ինք, հայրս, մասնակցած էր յեղափոխութեան... 1937-ին հալածանքի զոհ եղած էր: Բայց շուտով ազատ արձակուած էր, քանի որ յայտնի բոլշեւիկ մը, որ զինք անձնապէս կը ճանչնար, իրեն ի նպաստ միջամտած էր: Իրեն երաշխաւոր եղած էր: Բայց հայրս չէր վերընդունուած կուսակցութեան մէջ: Այս հարուածը երբեք չէր կրցած ընդունիլ: Բանտին մէջ իր ատամները ջարդած էին, ճեղքած էին գանկը: Բայց ինք չէր փոխուած, մնացած էր համայնավար: Ինծի այս կրնա՞ք բացատրել: Կը խորհի՞ք, որ ամէնքը տխմար էին: Միամիտ: Ո՛չ, անոնք ուշիմ եւ զարգացած մարդիկ էին: Մայրս Շէքսփիր եւ Կէօթէ կը կարդար իրենց բնագիրէն, եւ հայրս վկայուած էր Թէմիրեազեւ ակադեմիայէն: Եւ Պլո՞կ: Եւ Մայակովսկի՞: Եւ Ինէզ Աը-մա՞նտ: Անոնք իմ կուռքերս էին... Ինծի օրինակ էին... Ես հասակ առի անոնց հետ: (Կը դառնայ երազկոտ):

Ժամանակին, սորվեցայ օդաչու ըլլալ օդանաւային ակումբի մը մէջ: Այսօր չեմ կրնար պատկերացնել, երբ կը մտածեմ

ինչ բանի մէջ կը թռչէինք: Ինչպէ՞ս կրցած ենք ողջ մնալ: Անշարժակ սաւառնակներ չէին, այլ յարմարեցուած օդանաւեր՝ ամրացուած փախստականներու վրայ: Որպէս ղեկ՝ աւելի կոթ մը եւ ոտնարան մը: Բայց երբ կը թռչինք օդին մէջ, կը տեսնենք թռչուններ, երկիրը կը տեսնենք բարձրէն: Կը կարծենք թեւեր ունենալ: Երկինքը, բարձրութիւնը, մարդ արարածը կը փոխակերպեն... Կը հասկնա՞ք ինչի մասին կը խօսիմ: Կը խօսիմ այն կեանքին մասին, որ մերն էր... Ես ինծի համար չէ, որ ցաւ կը զգամ, ո՛չ, կը ցաւիմ այն բոլոր բաներուն համար, զորս կը սիրէինք:

Ձեզի ամէն բան ըսի, պարկեշտ եղայ... Բայց չեմ գիտեր, թէ ինչո՞ւ, այսօր կ'ամրչնանք այս բոլորը պատմելու...

Կակարինի առաջին թռիչքը անջրպետին մէջ... Ամէն ոք փողոց իջած էր, կը խնդայինք, կ'ողջագուրուէինք, կու լայինք: Մարդիկ, որոնք բոլորովին զիրար չէին ճանչնար: Բանուորները դուրս եկած էին գործարաններէն աշխատանքի կապոյտ հագուստով, բժիշկները իրենց գլխու լաթերը օդը կը նետէին. «Մենք առաջիններն ենք: Խորհրդայի՛ն մրն է, մեզմէ մէկը, որ անջրպետին մէջ թռիչք կատարեց»: Ասոնք բաներ են, որոնք չեն մոռցուիր: Շնչահատ ընող: Այնքա՛ն ահռելի: Այսօր ալ չեմ կրնար առանց յուզումի լսել երգը.

Եւ մենք չենք երազեր հրթիռներու աղմուկը,
Ոչ կապոյտը երկինքի մը սառած,
Այլ կանաչ խոտը, կանաչ խոտը
Որ կը բուսնի մեր մօտը...

Եւ Քուպայի յեղափոխութիւնը: Երիտասարդ Ֆիտէլ Գասթրոն... Կը պոռայի. «Մամա՛: Պապա՛: Շահեցան: Վիվա Քուպա՛... (Քիթին տակէն կ'երգէ):

Քուպա՛, իմ սէր
Կղզիին վրայ կը ծագի կարմիր արշալոյս
Քու երգդ կը սաւառնի եւ կը հնչէ
Բոլո՛ր մոլորակի ընդմէջէն:

Սպանիոյ պատերազմի նախկին ռազմիկներ եկած էին մեր դպրոցը: Մենք միասին երգեցինք Կրրնատ երգը:

Ձգեցի տունս ռազմի երթալու համար,
Որպէսզի գիւղացիները Կրրնատի
Իրենց հողերը վերստանան...

Տոլորէս Իսպարիւրիի մէկ լուսանկարը ունէի գրասեղանիս վրայ: Այո՛... Մենք Կրրնատը կ'երազէինք... Եւ յետոյ Քուպան... Քանի մը տասնեակ տարիներ վերջ, ուրիշ տղաք ճիշդ նոյն ձեւով երազեցին Աֆղանիստանը... Դիւրին էր մեզ խաբել: Բայց ոչ այնքան... Ոչ այնքան... Երբե՛ք պիտի չմոռնամ: Երբե՛ք պիտի չմոռնամ այն օրը, երբ մեր դպրոցի ամբողջ աւարտական դասարանը գնաց կոյս խոպան հողեր մշակելու: Անոնք կը տոնանցէին իրենց կռնակի պայուսակներով եւ ծածանող դրօշով մը: Ոմանք իրենց կռնակին կիթառ մը ունէին: Ես ինծի կ'ըսէի. «Ասոնք հերո՛սներ են»: Ապա անոնցմէ շատեր հիւանդ վերադարձան. մինչեւ կոյս հողերը չէին հասած, երկաթուղի մը կառուցած էին թայկայի մէջ, երկաթ գիծեր կը փոխադրէին դժուարութեամբ քալելով մինչեւ իրենց գօտին հասնող սառած ջուրին մէջ: Բաւարար բեռնատարներ չկային... Կը սնանէին փտած գետնախնձորով եւ կը տառապէին լենդագարութենէ (scorbut): Բայց անոնք գոյութիւն ունեցած են, այդ երիտասարդները: Եւ աղջնակը, որ կը դիտէր անոնց խանդավառութեամբ մեկնումը, ինք ալ գոյութիւն ունեցած է: Այդ ես եմ: Իմ յուշերս... Ձանոնք ոչ ոքի պիտի տամ: Ո՛չ համայնավարներուն, ո՛չ ժողովրդավարներուն, ո՛չ *թրէյտրընրներուն* (սակարանի մէջ բաժնեթուղթ առնող-ծախողներ): Անոնք իմս են: Ինծի կը պատկանին: Ամէն բանէ կրնամ հրաժարիլ, ես շատ դրամի պէտք չունիմ,

ոչ ալ նրբատեսակ սնունդի, ոչ ալ վերջին նորոյթ հագուստներու... Ոչ պերճ ինքնաշարժի մը... Մեր Ժիկուլիներով (խորհրդային արտադրութիւն ինքնաշարժ) մենք ամբողջ Խորհրդային Միութեան մէջ կը ճամբորդէինք. ես տեսայ Քարելին, Սեւանայ լիճը, Փամիրը... Այդ ամէնը իմ հայրենիքս էր: Հայրենիքս ԽՍՀՄն է: Կրնամ հրաժարիլ շատ մը բաներէ: Բայց չեմ կրնար ապրիլ առանց անոր, որ գոյութիւն ունեցած է: (Երկար ատեն կը լռէ, այնքան երկար, որ կը միջամտեմ):

Կարեւորութիւն մի՛ տաք... Լաւ եմ... Լաւ կը զգամ հիմա... Ներկայիս տունս կը մնամ մեկուսացած, շոյելով կատուս, թաթպան (միայն բթամատ ունեցող ձեռնոց) հիւսելով... Շատ պարզ զբաղումներ, ինչպէս բուրդ հիւսել, որ ամէնէն լաւն է: Ինչ որ զիս ոտքի պահեց: Մինչեւ ծայրը չգացի: Ոչ... Որպէս բժիշկ, երեւակայեցի բեմը... Յեսթին մանրամասնութիւններով... Մահը տգեղ է, երբե՛ք գեղեցիկ չէ: Տեսած եմ կախուածներ... Վերջին պահուն, անոնք կտղուցք (orgasme) կ'ունենան, կամ կը ծածկուին մէզով, կղկղանքով: Կազդ մարդիկը մանիշակագոյն կը դարձնէ... Այս գաղափարն իսկ սոսկալի է կնոջ մը համար: Խաբկանքներ չունիմ մահուան մասին: Բայց բան մը ձեզ յառաջ կը մղէ... Յուսահատութեան սարսուռ մը: Կայ շնչառութիւնը, կշռոյթը... Եւ ապա սարսուռ մը: Եւ հոն, դժուար է ինքզինք զսպել: Լուացքի պարանը նետեցի եւ դուրս նետուեցայ: Անձրեւէն թրջուեցայ, ի՞նչ հաճոյք անձրեւէն թրջուելու, անկէ ե՞տք: Այդ այնքա՛ն հաճելի է: (Կը լռէ): Ուժաթափութիւն մը ունեցայ: Ութ ամիս պառկած մնացի, առանց խօսելու: Քալել չէի գիտեր: Եւ յետոյ վերջապէս կրցայ ոտքի ելլել: Վերստին սորվեցայ քալել: Հոս եմ... Ոտքի: Բայց շատ գէշ պահեր ապրեցայ... Ձիս պայթեցուցին գնդակի մը պէս... Ինչո՞ւ այս բոլորը ձեզի կ'ըսեմ: Լաւ, վերջացնե՛նք, կը բաւէ: (Կը նստի եւ կու լայ): Կը բաւէ:

1993-ին... Տասնհինգ հոգիով կ'ապրէինք Մինսքի մեր երեք սենեականոց բնակարանը, առանց հաշուելու նորածին մը... Անոնք ազգականներն էին ամուսինիս, որոնք առաջինները եղան եկողները, Պաքուէն, իր քոյրը՝ ոնտանիքով, զարմիկները: Այցելութեան համար չեկան, եկան «պատերազմ» բառը իրենց լեզուին վրայ: Մտան գոռալով... իրենց աչքերը արցունքով ուռած... Ձմրան էր կամ աշնան: Արդէն ցուրտ էր: Այո՛, աշնան էր, քանի որ ձմրան աւելի բազմաթիւ էինք: Ձմրան Տաճիկիստանի մարդիկը եկան: Տուշամպէէն քոյրս եւ իր ոնտանիքը, կեսրոջ եւ զոքանչին հետ: Այո՛, այսպէս պատահեցաւ... Ամէն տեղ կը քնանայինք: Ամրան նոյնիսկ պատշգամը կը պառկէինք: Եւ չէին խօսեր, կը գոռային... Կը պատմէին, թէ ինչպէս փախած էին, պատերազմը զիրենք կիցով դուրս նետած էր... Զիրենք արտաքսած էր... Ամէնքն ալ ինծի պէս են, Խորհրդայիններ... Ճշմարիտ Խորհրդայիններ: Հարիւր տոկոսով: Անով հպարտ էին: Եւ յանկարծ, այդ բոլորէն ոչինչ մնաց: Բացարձակապէս ոչինչ: Առաւօտ մը, արթննալով, պատուհանէն դուրս նայեցան. կ'ապրէին ուրիշ դրօշի մը տակ: Տարբեր երկրի մը մէջ: Օտարական էին: Զիրենք կը լսէի, կը լսէի, եւ կը խօսէին:

«Զարմանք, ի՞նչ նոր ժամանակ: Կորպաչեւ հասաւ... Եւ յանկարծ սկսան կրակել մեր պատուհաններուն տակ: Ասպուա՛ծ իմ: Մայրաքաղաքին մէջ, Տուշամպէ... Ամէն մարդ կպած է իր հեռատեսիլին չփախցնելու համար վերջին լուրերը: Գործարանը, ուր կ'աշխատէի, միայն կիներ էինք, մեծամասնութեամբ ռուսեր: - Պատերազմ է, արդէն կը մորթեն ռուսերը: Քանի մը օր եղաք, ցերեկով, վաճառատուն մը աւարի տրուեցաւ, ապա ուրիշ մը...:

«Առաջին ամիսներուն կու լայի, ապա

դաղրեցուցի: Արցունքները շուտ կը ցամքին: Ինչ որ ամէնէն աւելի վախ կ'ազդէր, մարդիկն էին, բոլորը, նոյնիսկ անոնք, զորս կը ճանչնայինք: Անոնք կրնային ձեզ տուն մը քաշկռտել տանիլ, ինքնաշարժի մը մէջ... եւ քունել...: Դրացուհիի մը աղջիկը բռնաբարուած է իր դասընկերներուն կողմէ: Տաճիկ տղաք, զորս լաւ կը ճանչնայինք: Մայրը գացած է տեսնելու անոնցմէ մէկուն ծնողքը: Անոնք իր երեսին պոռացած են. «Ի՞նչ ընելու եկած ես հոս: Քու Ռուսիադ վերադարձի՛ր: Յամենայն դէպս, շուտով ռուսեր պիտի չմնան հոս, մեր մօտ: Ամէնքդ պիտի մեկնիք ձեր պզտիկ վարտիքներով»:

«Ինչո՞ւ հոն գացած էինք: Հոն ղրկուած էինք որպէս կոմսոմոլներ: Կառուցելու համար Նուրէկի ջրելեկտրակայանը եւ բնապաղլեղի (ալիւմինիում) գործարան մը... Մեզ կը կոչէին շուրաւի: Ռուս եղբայրներ:

«... Կ'երազեմ ծաղկած նշենիներով ծածկուած վարդագոյն լեռները: Եւ լալով կ'արթննամ...:

«Պաքուի մէջ կ'ապրէինք ութ յարկանի շէնքի մը մէջ: Առաւօտ մը, հայ ընտանիքները խմբեցին բակը... Անոնց շուրջ հաւաքուեցան մարդիկ, եւ բոլորը, մէկ առ մէկ, իրենց ձեռքին ինչ որ կար, հարուածեցին զանոնք: Հինգ տարեկան մանչուկ մը զարկաւ իր ձեռքի պզտիկ բահով: Եւ ազրպէյճանցի պառաւ կին մը անոր գլուխը շոյեց...:

«...Մեր բարեկամները ազրպէյճանցի էին, նաեւ անոնք, բայց մեզ թաքցուցին իրենց մառանը: Մեզ ծածկած էին խառնիխուռն ամէն բանով, խաւաքարտերով... Մեզի ուտելիք կը բերէին գիշերով...:

«Առաւօտուն, երբ աշխատանքի կ'երթայի, դիակներ կային փողոցները՝ գետինը երկարած կամ նստած պատի մը կռթնած, կարծէք ողջ ըլլային: Ոմանք ծածկուած էին սաւանով մը, ուրիշներ ոչ: Ժամանակ չէին ունեցած այդ ընելու: Ծապտեր մերկացուած էին: Այրերը ինչպէս նաեւ կիները... Անոնք, որոնք նստած էին, չէին մերկացուած, ժամանակ չէին ունեցած զանոնք շտկելու...:

«Առաջ կը խորհէի, որ տաճիկները մանուկի պէս էին, ոչ ոքի չարիք կրնային ընել: Վեց ամիս եղք, նոյնիսկ աւելի շուտ, ոչ Տուշամպէն կը ճանչնայինք, ոչ ալ մարդիկը: Դիարանները կը յորդէին: Առաւօտուն, լերդացած եւ չորցած արեան դոնդողներ կային կուպրի վրայ, հոն կը մնային մինչեւ որ կոխկրտուէին... կարծէք սառած հիւթի դոնդող ըլլային...:

«Օրեր շարունակ մեր տան առջեւէն ցուցանակներով տողանցեցին. «Մա՛հ հայերուն»: Այրեր եւ կիներ: Ծերեր եւ երիտասարդներ: Սանձազերծուած ամբոխ մը, ոչ իսկ մէկ մարդկային դիմագիծ կար: Թերթերը լեցուն էին պզտիկ ծանուցումներով. «Կը փոխանակեմ երեք սենեկանոց բնակարան մը Պաքուի մէջ, որեւէ բանով ռուսական քաղաքի մը մէջ»: Մեր բնակարանը վաճառեցինք երեք հարիւր տոլարի: Սառնարանի մը գինը: Եթէ այդ գինով չծախէինք, կը սպաննուէինք...:

«... Մենք մեր բնակարանի դրամով ինծի համար չինական տուտուն մը (վերարկու) մը գնեցինք եւ բուրդով մոյկեր ամուսինիս համար: Կահոյքը, գորգերը, ամանեղէնները... Ամէն բան ձգեցինք:

«...Ո՛չ լոյս կար, ո՛չ կազ... ո՛չ ջուր... Շուկան գիները բանդագուշանք էին: Մեր տան մօտ կրպակ մը բացուեցաւ: Հոն կը ծախէին միայն մեռելներու համար ծաղիկներ եւ ծաղկեպսակներ...:

«...Գիշերուան ընթացքին, դրացի շէնքի մը պատին վրայ գրած էին. «Դողացէք, աղբ ռուսեր: Զրահապատներու ձեր զինուորները ոչինչ կրնան ընել ձեզի համար»: Ռուսերը, որոնք պատասխանատու պաշտօններ ունէին, գործէ արձակուած էին: Փողոցներու ամէն անկիւնի

վրայ կը կրակէին... Շատ արագ քաղաքը նոյնքան կեղտոտ դարձաւ, որքան քիշլաք մը (կովկասեան գիւղ մը): Այս այլեւս օտար քաղաք մրն էր: Խորհրդային քաղաք մը չէր...:

«... Որեւէ պատճառով կարելի էր սպաննուիլ: Որովհետեւ հոն չէիր ծնած, քանի որ լեզուն լաւ չէիր խօսեր: Քանի որ հաճելի չէիր թուացած հրացան կրող մարդու մը... Ինչպէ՞ս կ'ապրէինք առաջ: Տօնական օրերուն, առաջին բաժակը կը բարձրացնէինք բարեկամութեան. «Ես քեզ սիրում եմ» (բնագիրին մէջ հայերէն), «Ման սանի սաւինամ» (ազրպէյճաներէն «քեզ կը սիրեմ»): Բոլորս միասին կ'ապրէինք...:

«...Մեր բարեկամ տաճիկները, պարզ մարդիկ, իրենց զաւակները կը պահէին կղպուած դռներու ետին, չէին թոյլ տար, որ դուրս ելլէին, որպէսզի սպաննել չսորվեցնեն... որ չսրիպեն այդ ընել:

«...Կը պատրաստուէինք մեկնելու... Գնացք պիտի բարձրանայինք, արդէն շոգի կար կառքերուն շուրջ: Վերջին պահուն մէկը գնդացիրի կրակոցի տարափ մը հասցուց անիւներուն: Ձիուորները միջանցք մը կազմեցին մեզ պաշտպանելու համար: Առանց իրենց ողջ չէինք հասներ մինչեւ գնացքի կառքերը: Հիմա, երբ հեռատեսիլէն կը տեսնեմ պատերազմը, անմիջապէս կը զգամ այդ հոտը... Մարդու միսի այրածի հոտը... նողկանք պատճառող, շաքարոտ...»:

Վեց ամիս եղք ամուսինս սրտի առաջին տագնապը ունեցաւ: Վեց ամիս եղք՝ երկրորդ մը: Իր քոյրը տագնապ մը ունեցաւ: Այս բոլորին պատճառով... Որոնց համար կը խենթանայի... Դուք գիտէ՞ք, որ մազերը կրնան խենթանալ: Խծուծի պէս կարծրանալ: Նախ մազերն են որ կը խենթանան... Ինչպէ՞ս կարելի է կրել այս բոլորը: Փոքրիկ Գարինան... Ցերեկին բնական մանուկ մրն է, բայց անմիջապէս որ գիշեր ըլլայ, կը սկսի դողալ: Կը ճչայ. «Մամա՛, դուրս մի՛ ելլեր: Երբ ես քնանամ, ձեզ պիտի մեռցնեն, պապան եւ քեզ»: Առաւօտուն, աշխատանքի ճամբու ընթացքին, կ'աղօթէի, որ ինքնաշարժի մը տակ մնամ: Ես, որ առաջ ոտքս երբեք եկեղեցի չէի դներ, հոն ծնրադիր ժամեր կ'անցընէի: «Սուրբ Կոյս, զիս կը լսե՞ս»: Բնաւ չէի քնանար, բնաւ չէի կրնար ուտել: Ես քաղաքականութեամբ չեմ զբաղիր, անկէ բան չեմ հասկնար: Պարզապէս կը վախնամ: Դեռ ուրիշ ի՞նչ կ'ուզէք հարցընել ինծի: Ձեզի ամէն բան պատմեցի: Ամէն բան:

Հայացուց՝ Յ.Պ.

---

(1) 7 Նոյեմբերին 1917-ին՝ «Հոկտեմբերեան յեղափոխութիւն»ը, համայնավարներու պետական հարուածը, հին տոմարով 6-7 Նոյեմբեր 1917-ին: Այժմ այդ օրը Պ. Ելցինի կողմէ յայտարարուած «Համաձայնութեան եւ հաշտութեան» տօնն է:

(2) Ցարին դէմ ըմբոստացող ազնուական երիտասարդները, երբ չէին գնդակահարուած, Իրքուցք աքսորուած էին:

(3) Խոզի կողիկներով կաւէ պտուկներու մէջ պատրաստուած ճաշ մը:

(4) Մոսկուայի հին փողոցներէն մին:

(5) NKVD

(6) Հայրը մատնած գիւղացի մը, զոր հերոս դարձուցած էին:

ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐԵԱՆ

ԱՖՏՈՆ

- Հասէ՛ք, Աֆտոն պապի գերեզմանաքարը ջարդուխուրդ է արել,- գիւղով մէկ տարածուեց կանչը: Մարդիկ գլուխները մի պահ բարձրացրին սեփական հոգսի վրայից ու զարմացած նայեցին շուրջները: Գերեզմանն ու գերեզմանոցը սրբութիւն էին գիւղում եւ դարերի մէջ ոչ մէկը նման յանդգնութիւն չէր ունեցել: Մարդը մեռնում էր եւ ասես ջնջւում, վերանում էր նրա վատ արարքների շարքը: Մարդը քար էր առնում վրան եւ մոռացւում ու վերանում էին քէն ու ոխ, ցաւ ու արիւն: Իսկ ահա Աֆտոն...

Հարեւան Կորիւնը հայեացքը յառեց երկու ձորի արանքում ապաստան գտած Սրբի քարին ու ոչ այն է յանդիմանեց, ոչ այն է հարցրեց.

- Դու ո՞նց ես նման սրբապղծութիւն թոյլ տալիս, հը՞:

Մրթմրթաց այնպէս, կ'ասես քար ջարդողը Սուրբն էր եղել, բայց յետոյ ասես մոռացաւ եղածը, թքեց բռան մէջ ու աւելի ամուր բռնեց բահի կոթը:

Ոստիկանութեան «Վիլիսը» սպասուածից աւելի արագ եկաւ: Եկաւ, ձիւնը ճեղքելով բարձրացաւ Մուշեղի տուն տանող զառիվերով եւ կանգ առաւ բակում: Ոստիկանները տանից հանեցին Աֆտոյին, ձեռնաշղթաներ հագցրին, ասես ամէնաանուղղելի ու վտանգաւոր յանցագործը լինէր, ու մեքենան դնելով տարան: Երբ մեքենան շարժուեց, մայրն ասես նոր գլխի ընկաւ կատարուածը եւ, չնայած նրան, որ ինքն էր զանգահարել ոստիկանութիւն, բոպիկ ոտքերով սկսեց վազել մեքենայի ետեւից ու ձայն տալ.

- Մի տարէք, երեխայ է, սխալուել է, սխալ է արել: Ախր դուք չգիտէք, որ սրանց ցեղը երազանքն իրականութեանը խառնած է ապրում:

Ոստիկանութեան մեքենան չկանգնեց, լսեց, բայց չլսելու տուեց մօր աղաղակն ու Աֆտոյին առած գնաց: Իսկ Ամալը նստեց նոր եկած ձիւնի վրայ եւ գլուխը երկու ձեռքով բռնելով շարունակեց հեկեկալ.

- Ուրիշներն իրենց թոռներին ոսկու կարաս են թողնում, մերոնք երազանք ու ցաւ: Ասա Թուրքիա գնալը քո ի՞նչ ցաւն էր: Քեզ ո՞վ էր ասել պապիդ խոստումը կատարէիր: Ամէն մարդ ինքը պիտի իր երազանքը կատարի, ամէն պապ, որ իր իրականութիւն չդարձած երազանքն իր թոռանը յանձնի, ո՞ւր կը հասնի:

Գիւղում բոլորը գիտէին, որ Մուշեղ պապն իր Կարսը տեսնելու ու նոր մեռնելու խոստումը չի կատարել: Գիտէին, բայց ո՞վ էր լուրջ ընդունում այդ: Ո՞վ

չգիտէր, որ Խորհուրդների երկրում նման երազանքներն անկատար են մնում: Իսկ Մուշեղ պապը երազել էր մի անգամ էլ իր պապերի հայրենիք Կարսը տեսնել, Առաքելոց եկեղեցում մոմ վառել, վերադառնալ, ապա հանգիստ ու անխռով հոգին յանձնել Աստծուն: Երազում էր, քանի որ Կարսի ճամբան փակ էր, Խորհրդային երկրում նման երազանքի համար կարող էին Սիպիր աքսորել... Հէնց դրա համար էլ երազում էր ինքն իրեն քաջ էր երեւակայում, դրա համար, երբ մի երկու բաժակ խմած էր լինում, բոլորի ներկայութեամբ խօսում էր Էրգրի մասին... Շատերը լսում ու չլսելու էին տալիս: Ո՞վ զահլա ունէր փէշերը քշտած շրջան վազէր, թէ Մուշեղը խմած ժամանակ երազում է: Նրա թիկունքի հետեւից ծիծաղում էին, քշփչում ու բանն այդքանով էլ աւարտւում էր:

Երազանքը երազանք էլ մնաց, կաթուածն անսպասելի եկաւ, Մուշեղին առաւ, տարաւ պապերի գիրկը: Ոչ ոք չիմացաւ նրա հոգին էն աշխարհ գնալուց առաջ սահմանն անցա՞ւ, թէ՞ այնտեղ էլ սահմանապահների հանդիպեց, բայց արդէն քանի՛ տարի, նրա նկարը գերեզմանաքարի վրայից անքթիթ նայում է, թէ ով է բերելու բարի լուրը:

Լուր տանողը թոռը Աֆտոն էր լինելու, որ, սակայն, պապին չէր տեսել: Թէ տեսել էր նրա գերեզմանաքարի վրայի նկարը եւ գերեզմանաքարի վրայ լուսանկարի մէջ Մուշեղ պապի թեւի տակ պահ մտած Լուսիկ տատին: Ծախսը մէկ անելու համար պապի նկարի հետ տատի պատկերն էլ էին հանել քարի վրայ: Եւ երեւի պատճառն այդ էր, որ մահը մոռացել էր Լուսիկ տատին: Կարծել էր գերեզմանաքարի տակ է ու ջան չէր արել սպուգել:

Սարատակից դուրս ապրողները չէ, բայց Աֆտոն լաւ գիտէր, որ Սարատակում էս աշխարհից էն աշխարհ անցումը հեշտ է լինում: Ապրում է մարդն իր սովորական կեանքով, մի օր ընկնում, մեռնում է, յետոյ քառասունքը չլրացած գերեզմանը սարքում, քարը դնում են, նկարը հանում են վրան ու նա գիւղից գերեզմանոց է տեղափոխւում: Չի խօսում, բայց լուռ չէ, չի յանդիմանում, բայց տրտմում է ուշ այցելելու համար: Լինում է, որ գիւղից բացակայած ես լինում, գալիս ես եւ մարդուն գիւղում գտնելու փոխարէն գերեզմաննոցում ես գտնում:

Մուշեղի մահից յետոյ նորոյթի պէս բան էր դարձել. մահին խաբելու համա՞ր, թէ՞ նիւթական նպատակայարմարութիւնից ելնելով, մեռած ամուսնու կամ կնոջ կողքին նաեւ դեռեւս ողջ կնոջ կամ ամուսնու նկարն են հանում քարի վրայ: Նայում ես մարդու պատկերը քարին է, իսկ ինքը այցելութեան է եկել սեփական գերեզմանին:

Սկզբում Աֆտոյին ձեռ էին առնում.

- Քարի վրայ, տատիդ նկարի տակ թիւր ճիշդ չէք գրել: Շուտով դարը կը փոխուի ու չես իմանայ ինչ անես: Ստիպուած կեղծելու ես ու էդ կեղծարարութիւնն Աստուած չի վերցնի, Աֆտո տղայ:

Աֆտոն կատաղում, գոռգոռում էր: Իր վրացական զրնգուն Աֆթանդիլ անունը կրճատել-աղճատելու համար ոչ ոքի բան չէր ասում, իսկ մեծ տատին ուշ մեռնելու համար ձեռ առնողների հետ կռւում էր: Լինում էր լեզուակռիւր տուրուդմբոցի էր վերածւում, որից Աֆտոն մեծ մասամբ յաղթանակած էր դուրս գալիս: Մեծ գամփռի նման յաղթած մարտից յետոյ ինքն իրեն թափ էր տա-

լիս ու քթի տակ գոմռում էր.

- Դէ գնացէք, ձեռ առէք:

Գիւղացիք սկզբում ձեռ առան Աֆտոյին, ծիծաղեցին, յետոյ իրենք էլ կամաց-կամաց ընդօրինակեցին եւ ոչ ոք չիմացաւ, թէ Աֆտոյենցից յետոյ ով առաջինը այդ քայլին գնաց:

Իսկ Աֆտոն բանակ գնաց, վերադարձաւ: Գիւղ գալու առաջին իսկ օրը գերեզմաննոց գնաց հետը տասը հատ կարմիր մեխակ վերցրած: Նաեւ խունկ ու Լուսիկ տատի ապսպրանքը տարաւ.

- Հալիւորին ասա թող մի քիչ էլ համբերի մինչեւ գամ:

- Մի քիչ էլ համբերի, կ'ասես քարի տակից դուրս պիտի ելնի, գիւղ գայ: Ի՞նչ պիտի անի, որ չհամբերի,- քթի տակ խնդմնդաց Աֆտոն:

Գերեզմաննոցում ոչ մի բան էլ չէր փոխուել. նոյն քարերն էին, նոյն անթարթ հայեացքները, պապի թեւի տակից աշխարհին նայող, մահուան քթից բռնած ման ածող տատի նկարը: Հէնց այդ օրն էլ Աֆտոյի սրտի մէջ ծլեց Կարս գնալու միտքը: Էդ միտքը, որ մեծ պապի անկատար երազանքն էր եղել, գերեզմանաքարի տակից ելաւ, մտաւ նրա սրտի մէջ: Վախեցաւ պապին երդում տալ, մանաւանդ, որ պապն իրեն իսկի չէր էլ ճանաչել: Յետոյ էլ, երդուի, որ ի՞նչ: Ոչ ոքի, նոյնիսկ ինքն իրեն, որեւէ բան չասաց, բայց երբ տուն վերադարձաւ, հասկացաւ, որ երդուել, պրծել է:

Կարս գնալու համար փող էր պէտք: Աֆտոն անհեր տղայ այդքան փող որտեղի՞ց ճարեր: Բայց նպատակը նպատակ էր, Աֆտոն նպատակից ետ կանգնող տղայ չէր եւ ուզէր-չուզէր ինքն էր աշխատելու: Գիւղի աշխատանքը շատ ու վարձը քիչ էր, բայց նպատակ էր դրել գնալ, Մուշեղ պապի տունը տեսնել: Ուզում էր հասկանալ էդ ի՞նչ տեսակ տուն էր եղել, որ Մուշեղ պապին էդքան տարի երազ էր եկել:

Ամբողջ ամառ ուրիշի արտ ջրեց ու խոտ յարեց, սարից խոտ տեղափոխեց ու դիզեց... Աշխատած փողի մի չնչին մասը տուն էր տալիս, մնացածը դրամ-դրամ կուտակում էր ու յետ էր գցում:

Բանակից առաջ էլ էր աշխատում, բայց աշխատածը ծախսում էր լիաբուռ: Ասենք հարեւանի փոխարէն երեք օր նախիրն էր գնում, յետոյ փողն առնում ու Վանաձոր, ո՛ւր ես, եկայ: Նստում էր ծանօթ ճաշարանում, ուտում-խմում ու բերանը սրբելով տուն էր գալիս:

- Կեանքում մարդուն ի՞նչ է մնում,- փիլիսոփայում էր կարծես իր տասնութ տարին խորհրդանշող թուերի տեղը փոխել էին ու ինքն ութսունմէկ տարեկան էր:- Հա, մարդուն աշխարհում ուտել-խմելուց, վայելելուց բացի ուրիշ բան չի մնում,- ասում էր,- աշխարհի աշխատանքը շատ, հաճոյքը քիչ է: Տե՛ս, օրինակ, սարեակը իր ոոպէական, թէ՝ վայրկենական սիրոյ հաճոյքի համար ամբողջ ամառ որդ է կրում: Նախ ձուերի վրայ նստած մօրը, յետոյ ձուից ելած ձագերին է կերակրում: Եւ ցաւն էլ այն է, որ բմբլոտուելուց յետոյ ձագերը նրան չեն էլ ճանաչում... Հա՛յ-հա՛յ, Աֆտոն էդ բաները լաւ է հասկանում,- ծիծաղում էր,- Աֆտոյին խաբել չի լինի:

Բայց բանակից գալուց յետոյ նրա ուրախ-անհոգ բնաւորութիւնն ասես փոխել էին եւ հիմա նա ժլատ ու հաշուենկատ էր դարձել: Նրան ճանաչողները զարմանում էին, բայց չգիտէին մտքին ինչ կայ:

- Էդ մարդը, որ էդքան երազել է, նշանակում է մի բան իմացել է, չէ՞: Ո՞վ գիտէ, գուցէ ոսկի-մոսկի է՞լ է պահած եղել

իրենց տանը,- ինքն իրեն քրթմնջում էր մէկ-մէկ, բայց յոյս չունէր, թէ ոսկին մնացած կը լինի: Համ էլ ոսկու համար չէ, որ ցանկանում էր Կարս գնալ:

- Հիմա հե՛շտ է,- ինքնիրեն յոյս էր տալիս,- որպէս զբօսաշրջիկ կը գնամ, մենակ թէ փող լինի:

Մայրը, որ յոյս էր փայփայել, թէ տղայի զօրացրուելուց յետոյ ապրուստը կը հեշտանայ, չգիտէր, որ պապի երազանքն ու նպատակն անտեսանելի ինչ-որ թելերով տեղափոխուել են թոռան մէջ ու հարցնող-հետաքրքրուողներին պատասխանում էր.

- Մեր Աֆտոյի հոգու վրայ սատանայ է նստել: Բացձեռ, ուտող-խմող տղին ասես փոխել, ուրիշ մարդ են սարքել:

Լուսիկ տատը գոլ վառարանի մօտ նստում, ցաւող ծնկներն էր տրորում ու ջրակալած աչքերը ճպճպացնելով քննադատում էր Աֆտոյին.

-Մեր Աֆտոն տանձի պէս բան է, անժամանակ կերար, կը խեղդի:

Աֆտոն նրանց լսում, քթի տակ խնդմնդում էր, բայց չէր ասում իր նպատակի մասին: Կնիկ են, գիւղի բերանը կը գցեն, լուրը քամու թեւին նստած կը տարածուի աշխարհով մէկ ու թէ խօսքը խօսք էլ մնայ, էլի վրան ուրիշի բերան է բացել տալու: Մէկ-մէկ ինքն իրեն քննադատում-կշտամբում էր. «Թէ Մուշեղ պապդ կարգին տղամարդ էր, թող քեզ գանձ ու փափուկ կեանք կտակէր, ոչ թէ իր երազանքը: Կարս գնալու երազանքը... Գոնէ էնքան ապրէր, որ սեփական բերանով պատմէր, թէ չէ սրա-նրա միջոցով, զեներով ու արեամբ... Թէ նրա արիւնը որձ ու տղամարդ էր, ինչո՞ւ իր հայրենիքը թուրքին թողեց: Հողը թողեց, երազանքը բերեց, որ սերնդէ-սերունդ մխայ սերունդների երակների ու հոգու մէջ»,- մտածում էր ինքնիրեն, քիչ էր մնում զղջայ ու հաւաքած փողը մի երկու օրում ծախսի, բայց յետոյ հաւաքում էր ինքնիրեն ու պնդանում:

Ճամբի կէսից ետ դառնալը տղամարդկութիւն չէ, Աֆթանդիլ, բացի էդ Մուշեղ պապը քեզ կամ հօրդ հոյ չէ՞ պարտադրել: Ինքնիր կեանքն է ապրել ու մեղաւոր չէ, որ իր երազանքն էնքան թանձր է եղել, որ մակարդուել է քո երակների մէջ:

Հէնց առաջին իսկ տարում կ'իրագործէր Մուշեղ պապի արդէն իրենը դարձած երազանքը, եթէ խոզի գրիպը չլինէր: Չգիտես որ հեռու աշխարհներից, չգիտես ում կողմից հնարած եկաւ, տարածուեց աշխարհի վրայ: Եկաւ, նախ մօրը բռնեց: Մայրը առողջ էր, մի քիչ թնկթնկաց, լաւացաւ, յետոյ յարձակուեց Լուսիկ տատի վրայ: Պառաւի հազի ձայնից նոյնիսկ այգու ծառերի վրայ վէտվէտացող կաչաղակներն էին սարսռում:

- Արի՛, աւելի ուժեղ բռնի կոկորդս,- ցաւի հետ կռւում էր տատը,- արի տար հալիւորի մօտ, ես էս աշխարհից յոգնել եմ:

Ասում էր, բայց ամէն ինչից երեւում էր, որ հոգին ի բերան պայքարում է ցաւի դէմ ու մեռնել չի ուզում:

Աֆտոն որքան էլ որ սեղմեց բռունցքները եւ փորձեց փողը խնայել, չկարողացաւ: Մեղքը եկաւ: Գնաց, շրջանային հիւանդանոցից բժիշկ բերեց, դեղ ու մեղ առաւ, գիւղի բուժքրոջը տուեց, որ օրը երեք անգամ գայ, տատին սրսկի ու հաւաքած փողը արագ մաշուեց: Հաւաքածի համարեա կէսը ծախսեց: Բայց գրիպը հարեւանի հարսին առաւ, տարաւ, իսկ ութսունութամեայ Լուսիկ տատը տնքտնքալով ոտքի կանգնեց:

- Բա ասում էիր խեղդող փա՛նձ եմ,- ինքն իրենից գոհ փափին ձեռ էր առնում Աֆփոն,- բա որ խնայած չլինէի, ո՞նց կը լինէր... Բա որ մեռնէի՞ր ու գերանդիդ պափից կախուած մնար...

- Լաւ կը լինէր,- աչքերը ճպճպացնում էր փափը:

- Ո՞ւմ համար,- ջղայինանում էր Աֆփոն,- էսօրուայ օրը մարդ թաղելը հե՞շտ է: Քո թաղումը գիւղի համար հարսանիքի պէս բան է: Ով ասես կը գայ, ծախս քաշողի ջանը դուրս գայ: Համ էլ դեռ փասներկու փարի ունես, մինչեւ հարիւրդ չլրանայ մեռնել չկայ:

- Ընկնաւո՛ր, քարի վրայ ժամանակ էք գրել: Որ չմեռայ քարս պիփի փոխես, մահուանս թիւը սխալ դուրս կը գայ,- ճերերում էր փափը:

- Է թող սխալ լինի, դրա համար հոյ դափ չի՝ հասնում,- իրենն էր շարունակում թոռը:

- Խի՛, խի՛, խի՛,- խռխռալով ծիծաղում էր փափն ու նրա ծիծաղն ասես գեփնի ընդերքից ելնելիս լինէր: Ասես փարիներ ու փասնամեակներ հաւաքուել էր խորքում եւ մի քանի բացագանչութեան միջոցով դուրս էր գալիս ու հանգստանում:

Երբ առափ ձիւն էր գալիս, Աֆփոն առաւօտ վաղ գերեզմանոց էր գնում:

- Էդ ո՞ւր,- հեփեւից ձայն էր փալիս հարեւան Կորիւնը: Գիփէր ուր է գնում, բայց ձայն էր փալիս:

- Գնում եմ պապիս ոտնահետքերով,- կափակի էր փալիս Աֆփոն: Չէր ասում, թէ գնում եմ պապիս գերեզմանը մաքրելու:

Կորիւնը խնդմնդում ու փարուբերում էր գլուխը.

- Տեսնես էդ շան փղէն ո՞ւմ է քաշել: Մարդն է՞լ էդքան սէր ունենայ գերեզմանոցի նկափմամբ: Ասա գերեզման է, էլի: Չիւնը թող գայ, դնի, ծածկի, գարնանը կը հալուի, էլի՞: Փոխանակ բակը մաքրի գնում, պապի գերեզմանն է մաքրում, հօր գերեզմանաքարն է աւլում: Մենք որ չենք անում, մերոնց չե՞նք սիրում:

Աֆփոն Կորիւնի ասածը չէր լսում, բայց գիփէր ինչ է ասում: Գնում, իր գործն անում, վերադառնում էր եւ ամէն անգամ փափը ձեռնափայփին յենուելով փնփնքալով առաջ էր գալիս.

- Է՞,- ասես կենդանի մարդուց լուր առնելիս լինէր,- հալիւորն ի՞նչդ է:

Աֆփոն զայրանում էր, որ փափն առաջինը ոչ թէ իր որդու, այլ ամուսնու մասին է հարցնում: Կորը կախ լռում էր, չէր պափասխանում, իսկ փափն էլի վրայ մնալով հարց էր փալիս.

- Հալիւորն ի՞նչ կ՚ենէր:

-Հալիւո՞ր...,- խնդմնդում էր թոռը,- մինչեւ գնացի, հասայ գերեզմանոցի ձիւները լրիւ մաքրել էր: Ասացի էդքան մի փանջուիր, քրփնես, սառես թոքաբորբ կ՚ընկնես ու էդքան ծախս անելու հաւէս չկայ:

- Խելառ-խելառ մի՛ խօսի,- յանդիմանում էր պառաւն ու նստում էր վառարանի կողքին, ճռճռան թախփին:

Ձմեռն անցաւ ու գարնանը Աֆփոն նորից գործի կպաւ: Ով հանգստանար Աֆփոն աշխափում էր, ով ծախսէր Աֆփոն խնայում, դրամ-դրամի վրայ էր դարսում ու դնում էր գծաւոր վերնաշապիկի գրպանը: Դնում, կոճակը կոճկում ու նորից աշխափանքի էր անցնում: Աշնան դէմ փեսաւ, որ իր ուզած 1200 փոլարի փոխարէն 1500 փոլար փող ունի: Գնաց Երեւան, զբօսաշրջային կազմակերպութիւն գփաւ, փողը մուծեց, փոմս առաւ ու եկաւ գիւղ: Մինչեւ մեկնելու նախօրեակը ոչ ոքի ոչինչ չասաց եւ

միայն նախորդ երեկոյեան սկսեց շորերը դարսել մարզական պայուսակի մէջ:

- Էդ ո՞ւր ես պատրաստւում,- հետաքրքրուեց մայրը:

- Կարս,- ասաց Աֆտոն, կարծես «գիւղամէջ» ասելիս լինէր:

Մայրը տարակուսած նայեց, չիմացաւ տղան ձե՞ռ է առնում, թէ՞ լուրջ է ասում:

- Ասում են քո կեսրար ու իմ պապ Մուշեղը ողջ կեանքում երազել է Կարս գնալ: Էդ երազանքը տպտի ու քո միջոցով ինձ է փոխանցուել:

- Լուրջ բան խօսի:

- Սրանից լուրջ չի լինում: Ես վաղը մեկնում եմ Թուրքիա:

- Քո երազանքին մատաղ,- ձիգ տուեց տատն ու Աֆտոն չիմացաւ տատն ի՞նչ, թէ՞ Մուշեղ պապի հետ է խօսում:

Առաւօտեան «Գազելով» գնաց, ասես Սպիտակ կամ Վանաձոր էր գնում: Ասես գնում էր շուկայից երկու քիլոկրամ վարունգ առնէր, եւ գար: Գիւղացիներից ոչ ոք չհետաքրքրուեց Աֆտոն ո՞ւր է գնում: Իմանային գուցէ մի քիչ ուրիշ աչքով նայէին, իմանային գուցէ աւել-պակաս խօսէին: Աֆտոն յետոյ ափսոսում էր, որ իր նպատակի մասին մարդկանց չի ասել: Գուցէ թէ միւսներն էլ ապսպրանք ունենային: Բայց մի անգամ որ չէր ասել, հիմա էլ չասաց: Նրա վերադարձն էլ իրադարձութեան չվերածուեց: Ձեռքին նոյն մարզական պայուսակն էր, հագուստը նոյնը:

- Գոնէ քեզ համար մի ձեռք կարգին կոստիւմ առնէիր, հա՛,- դժգոհեց մայրը:

- Էնտեղ ո՞ւր էր բան, որ առնէի,- փնչացրեց Աֆտոն:

- Սաղ աշխարհն առեւտրի համար Թուրքիա է գնում:

- Ես սաղ աշխարհից տարբեր եմ,- դժգոհեց Աֆտոն,- ես առեւտրական չեմ, ես թուրքից առեւտուր անող չեմ: Համ էլ ես ուրիշ բանի համար էի գնացել,- ասաց ու լռեց:

Մի տեսակ պատմելը չէր գալիս: Գնացել, զբօսաշրջիկների խմբի հետ Կարս էր հասել, երբ արդէն իրիկնամուտ էր եղել: Կանգնել, նայել էր քաղաքի փողոցներին: Յոգնած էր եղել, թէ ինչ, որեւէ արտառոց բան չէր զգացել: Կանգնել էր կամրջի վրայ, նայել էր ջրերին, փորձել էր նրանցից իմանալ Մուշեղ պապի տան տեղը: Յետոյ բերնէ-բերան իրեն հասած պատմութեան թելը բռնած քայլել էր Կարսի հին թաղամասով: «Կամրջից մի քիչ էն կողմ, փողոցի աջ կողմի չորրորդ դարպասը մերն է»,- իր աչքը բացելուց ի վեր ականջին հասել էր պատմութիւնը: Դրա համար էլ առանց երկար մտածելու գնաց: Գնաց վախվխելով: Օտար քաղաք է, օտարացած երկինք, տարաժամող օր: Քայլեց երակների ու ծիների ձայնին ունկնդիր գնաց, հասաւ դարպասին: Դարպասը կամարակապ էր, հաստ տախտակից սարքած դռնով, ծխնիները կոփածոյ ու խաչաթեւի վերջաւորութեան նման ծաղկաձեւ: Կանգնեց դարպասի առաջ, պատը շօշափեց, յետոյ մատները դարպասի հարթ ու փուշը քնած տախտակը շօշափելիս գտան հայերէն «Մ» տառը: Մուշեղ պապն էր փորագրել երեխայ ժամանակ: Դրա համար ծեծ էր կերել, թուք ու մուր, բայց եղածը եղած եւ արածն արած էր եղել: Հիմա այդ տառը Աֆտոյի մատների տակ խօսել էր ուզում, բայց լեզուն բռնուած ու համր լռում էր:

Չէր նկատել, թէ մարդիկ ինչպէս հաւաքուել ու հետաքրքրութեամբ իրեն են

նայում: Յեփոյ փանից դուրս էր եկել իր փարիքի մի փղայ եւ ինչ-որ հարցեր էր փուել: Աֆփոն հարցը չէր հասկացել, բայց մատները շարունակել էին շօշափել պապի փորագրած փառը: Լացը եկել էր, բայց իրեն զսպել էր: Բոլորի աչքի առաջ պապի ճեղքից երկու ողորկ քար էր վերցրել ու դրել էր գրպանը, յեփոյ կռացել, դարպասի մօտից մի բուռ հող էր վերցրել, լցրել կերպրնկալ նիւթէ (ցելոֆանէ) փոպրակի մէջ: Մթնշաղի մէջ երկար նայել էր սեւ քարով շարուած, փոքրիկ լուսամուտներով փանը: Կ'ուզենար ներս մտնել, տեսնել: Համոզուած էր պատերն ինչքան էլ օտարացած կը ճանաչէին իրեն: Ախր տատն օր ու գիշեր ասում էր, թէ Աֆփոն ոնց որ պապի պնչից թռած լինի: Ուզենալը կ'ուզենար, բայց տարաժամ էր, ինքը մենակ, սիրտը լիքը, եւ թողեց, հեռացաւ: Ջբօսաշրջիկների մեծ մասն իր նման հայրենաբաղձ էր ու ամէն մէկն իր կարօտն էր փայփայում: Եկել էր հիւրանոց ու չէր նկատել, որ տնից դուրս ելած, իրեն հարց տուած տղան հետեւել է իրեն:

Աֆփոն շատ զարմացաւ, երբ առաւօտեան հիւրանոցի բակում իրեն մօտեցաւ: Եկաւ, ժպտալով ինչ-որ բան ասաց, որ Աֆփոն նորից չհասկացաւ: Յեփոյ տղան գրպանից հանեց ու նրան ինչ-որ բան մեկնեց: Աֆփոն անսպասելիութիւնից երկու քայլ ետ գնաց, յեփոյ գլխի ընկաւ, որ հին բանալի է: Ուշօրէք հասկացաւ. թուրքն առաջարկում էր տան բանալին գնել: Առաջին միտքը նրան գրողի ծոցն ուղարկելն էր, բայց յեփոյ գլխի ընկաւ, որ նա իրեն հարուստի տեղ է դրել ու ժպտաց: «Թող իմանայ՝ հարուստ եմ: Ինքն իր պապի պէս աղքատ է մնացել, իսկ ես իմ պապի պէս...»: Երկար սակարկեց, մինչեւ որ հարիւր տոլար տուեց ու բանալին առաւ: Թուրքն այդպէս էլ չիմացաւ, որ այդ կանաչ թղթադրամը վաստակելու համար Աֆփոն տաս մեքենայ խոտ էր բարձել ու դատարկել: Աֆփոն էլ իր քրտինքը չափսոսաց տուեց ու բանալին առաւ:

Յեփոյ խմբով Առաքելոց եկեղեցի գնացին: Եկեղեցին մոմազուրկ, խնկազուրկ եւ նամազարկ եղած որտեղի՞ց պիտի ճանաչէր Մուշեղի թոռ Գուվարենց Աֆփոյին: Ինքն էլ միւսների հետ պտտուեց կառոյցի շուրջը, հիացաւ նրա հզօր ճկունութեամբ, բայց ներս մտնել ու մոմ վառել չկարողացաւ: Մոլլան ասաց չէ ու Աֆփոն շուարած մնաց եկեղեցու քար անտարբերութեան վրայ: Լաւ, ասենք մոռացել է իր արարողն ով է եղել, բա իր պատերի ներսում էդքան դար հնչած աղօթքից իսկի մի պառատ չի՞ պահել: Խորանում վառուած էսքան մոմի յիշողութիւնն ո՞ւր է կորցրել, էդքան խունկ ու կնդրուկի ծուխը չքուել, ցնդե՞լ է անդարձ: Եղել է ժամանակ, երբ եկեղեցին հսկայ բուրվառ է դարձել երկնքի առաջ, հիմա ինչպէ՞ս է մոռացել էդ ամէնն ու չի փլուում իրեն ուժով տիրացած օտարի գլխին: Աֆփոյի սիրտը սեւացած էր եւ չգիտէր, թէ Աստուած ինչպէս եւ ինչու է պատուիրում յատկապէս թշնամիներին սիրել:

Պտտուեց եկեղեցու շուրջը, հետը տարած սպիտակ մեծ մոմը վառեց ու դրեց դրսի խորշերից մէկում, աչքից հեռու: «Թող վառուի,- մտածեց,- թող Մուշեղ պապի երազանքն անկատար չմնայ: Թող վառուի, ո՞վ գիտէ, գուցէ մոմի բոյրն առնելով եկեղեցին մի պահ յիշի իր ներսում մի ժամանակ վառուած բիւրաւոր մոմերի բոյրը»: Ուզեց մի քարի կտոր էլ եկեղեցու պատից պոկել,

չկարողացաւ: Կռացաւ, մի քանի խիճ էլ պապի տակից վերցրեց եւ մի ուրիշ ցելոֆանի մէջ դրեց, որ չխառնի: Կ'ասես, եթէ խառնած լինէր, Մուշեղ պապը պիտի յանդիմանէր իրեն:

Ու էդ ամէնը նրա սրտի մէջ խղճահարութիւնն ու զայրոյթը խառնել, շաղախել, միահիւսել էին իրար եւ ծանր նստուածք էին դարձել, որ փոթոթում էր արիւնն ու երակները: Բա մարդ չկարողանա՞յ իր պապերի սարքած եկեղեցում մոմ վառել, բա մարդ ամբողջ եկեղեցին ուրիշին թողնի ու ինքը վախվխելով գրպանի մէջ նրա բակից երկու խճաքա՞ր դնի, բա մարդ գայ, կանգնի սեփական տան առաջ ու ներս մտնել չկարողանա՞յ, իր տան բանալին ուրիշի ձեռքից առնի ու դրա դիմաց փո՛ղ տայ:

Թշնամուն մեղադրելուց առաջ նա իր պապին, նրա հօրը, եւ ամէնից առաջ ինքն իրեն էր մեղադրում, ասես ինքն այն ժամանակ ապրելիս էր եղել: Ասես ինքն էր եղել, որ սեփական տան, եկեղեցու, քաղաքի համար արիւն չէր թափել: Փախել, գնացել էր ու որձ արեան փոխարէն կնկայ արտասուք էր թափել: Ու կարծես իր արցունքները քիչ էին, ստիպում էր, որ իրենից յետոյ նաեւ յետնորդները լաց լինեն: Գնան, կանգնեն սեփական հաւատի տան պատի տակ եւ ուրիշից խնդրեն մոմ վառեմ էլի՛:

... Ինքն իրենից խռով տանեցիների առաջ բացել էր մարզական պայուսակը եւ հանել ու հերթով շարել էր բերածը. մի բուռ հող, մի քանի խիճ, երկաթէ ժանգոտ մի բանալի:

- Էդ ի՞նչ է,- բանալուն նայելով աչքերն էր կլորացրել մայրը:

«Չե՞ս տեսնում»,- ցանկացել էր ասել, բայց մօրը վիրաւորել չէր ուզեցել ու փնչացրել էր դժգոհ:

Մայրը տեսել էր, բայց վախեցել էր խօսակցութիւնը շարունակել: Թէ խօսի Աֆտոն կը դիւոտի: Մէկ ուզեցել էր հարց տալ. «Գնացիր, երկրէ-երկիր քո քէֆին ման եկար: Գոնէ էս պառաւի համար մի հին շոր բերեցի՞ր»,- բայց յետոյ գերադասել էր լռել:

- Պապի համար հող ես բերել հա՞,- տնքացել էր տատը,- դէ տար, գերեզմանին շաղ տուր, թող հոգին հանգստանայ:

Տատին էլ չէր պատասխանել: Առաւօտեան վեր էր կացել, վերցրել էր հողն ու խճաքարերը, նաեւ մեծ մուրճն էր վերցրել, որ գերեզմանի մօտի երկու լեռ քարերը փոքրացնէր, կամաց-կամաց հեռացնէր: Գերեզմանի կողքին ահագին ազատ տարածութիւն կը բացուէր: «Բոլորս էլ անցաւոր ենք,- մտածել էր,- յետոյ, երբ մօրս ժամանակը գայ կամ իմ, էլ ուրիշ տեղ գնալու կարիք չի լինի»: Հասաւ գերեզմաննոց, ասես հեռուից պապն իրեն ձեռքով արեց: Եկաւ, մուրճը դրեց գերեզմանի կողքին, հանեց հողն ու խճաքարերը, հողը խառնեց գերեզմանի հողին, խճաքարերը դրեց քարի տակ ու նայեց պապի նկարին, ցանկացաւ նրա աչքերի մէջ շնորհակալութիւն կամ զղջում կարդալ: Բայց Մուշեղի աչքերը սառն ու անտարբեր նայում էին հեռուներին: «Գոնէ զղջար, հա՞,- քրթմնջաց դժգոհ,- ախր մարդ իր տունը թշնամուն չպիտի թողնի, իր հայրենիքին ու հողն ուրիշին չպիտի թողնի: Սեփական հայրենիքը թողած նրա սրտերը չպիտի փայփայի: Հող տալն, ախր, հեշտ է ու առնելը դժուար: Թշնամուց հայրենիք մուրալն ամենադաժան ու ամենաանպատիւ բանն է: Հեշտ է եղածն ուրիշին թողնել ու գալ, երազանքը դրօշ ու ցաւ սարքած ապրել մի ամ-

բողջ կեանք:

- Հը, համաձայն չե՛ս,- պապի նկարին դիմեց Աֆտոն, բայց նկարը լուռ էր: Նկարի մէջ Մուշեղն առաջուայ պէս նայում էր հեռուն Կարսի ու էրգրի ճանապարհին:

- Քո քարը եւ նրա վրայ հանուած նկարը սխալ են,- էլի պապին դիմեց Աֆտոն ու մուրճը վրայ բերեց քարին:

Քարը առաջին հարուածն ստանալով զարմացաւ: Կոկած գրանիտը հակադարձեց մուրճին ու մի չոր զնգոց եկաւ, բանտեց Աֆտոյի բազուկները: Աֆտոն դրանից աւելի զարմացաւ ու զայրացաւ: Թուաց, պապն իր ասածի հետ համաձայն չէ:

- Համաձայն չե՛ս,- նորից հարցրեց,- կ'ասես՝ խեղճ էինք: Դուք խեղճ էք եղել, ես խեղճ լինել չեմ ցանկանում, ես իմ հողի վրայ տղամարդավարի ապրել եմ ուզում, ուզում եմ, որ թոռս իմ վատ կառուցածը քանդի ու աւելի լաւը կառուցի: Ուզում եմ իմ կառուցածը քանդի, բայց տիրոջ իրաւունքով քանդի: Հիմա ի՞նչ ես ասում, ձեր տան բանալին բերել եմ, ինձ ներս չթողեցին, վեր կաց գնա՛, դուռը բաց,- տնքաց Աֆտոն ու նորից վրայ բերեց մուրճը: Քարն սկզբում դիմադրում էր, յետոյ ճաք տուեց ու փշրուեց.

- Բա՞,- զարմացաւ Աֆտոն,- էս ինչի՞ էսքան արագ փշրուեց,- ասաց ու մուրճը ծնկների արանքն առած նստեց գետնին: Մի երկու կում ծուխ առաւ ծխախոտից, յետոյ վեր կացաւ, կոշտ ձեռքով սրբեց պապի կիսաջարդ նկարը ու դարձեալ դիմեց նրան.

- Թիթեռը որ թիթեռ է իրեն կրակի մէջ է նետում կրակը հանգցնելու համար: Հանգցնելը չի հանգցնում, բայց Արարչի առաջ գոնէ արդարանում է, որ ձեռքից եկածն արեց աշխարհը հրդեհից փրկելու համար: Իսկ մե՞նք...

Գիտե՞ս ինչու էսքան շուտ փշրուեց քարդ: Էլի՞ չգիտես: Ասեմ իմացիր. սրա տէրը հաւատ չունէր իր մէջ, կասկածելով էր ապրում երկրի վրայ, հառաչելով աչքը գցում էր սահմանի փշալարերին ու չէր համարձակւում մի անգամ գոնէ անցնելու փորձ անել: Կարօտով էր ապրում: Ու դրա համար միշտ ուրիշին էր մեղաւոր համարում: Չէր հաւատում, որ իր հողն ու տունը իսկապէս սիրողին այդքան հեշտ տնազուրկ ու հայրենազուրկ չեն անում: Եկեղեցին հիմա մզկիթ է դարձել: Շատ սիրէինք չէր դառնայ: Կոտորեցի՛ն,- պապի նկարի առաջ ծամածռուեց,- մէկին տաս պատասխան տայիք, ատամներով կրծէիք կոկորդները: Ամէն մէկին չեն կոտորում: Ինչու անզէն եղաք: Ոսկին հողի մէջ թաղելու եւ նրանց թողնելու փոխարէն զէնք սարքէիք՝ կը վախենային...

- Թուրքը եկաւ,- տօ թուրքն ո՞ւմ շունն էր: Թուրքը մարմին չունէ՞ր, թէ՞ նրա մարմնից արիւն դուրս չէր գալիս:

Քարը ջարդեց, պրծաւ, կտորները գերեզմանից հեռացրեց, նորից նստեց ու մի կուշտ ծխեց, յետոյ վեր կացաւ, մուրճն ուսին դրեց ու ծալուող քայլերն ուղղեց դէպի տուն: Գիտէր, որ պապի նոր քարն ինքն է տաշելու իր ձեռքով եւ քարին տխուր, ծեծուած մարդու նկար չի հանելու: Սերունդների համար պապի նկարի կողքին թուր է քանդակելու: Կռիւ տուած, դարերի մէջ հող եւ ապրելու իրաւունք նուաճած հայ տղամարդու թուր:

* * *

... Խուլիգանութիւն կատարելու համար Աֆտոյին վեց ամիս տուեցին:

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՓՐԹԱԾ ՋՐՀԵՂԵՂԸ ԱՆԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ



Յովիկ Յովէեանի «Վրիպած ջրհեղեղ»
(Եր., ՀԳՄ հրատ., 2014, 224 էջ
եւ «Անժամանակականութիւն»
(Եր., Հայագիտակ, 2015, էջ 204)
ժողովածուների գեղագիտական ընդհանուր
կառոյցի յատկանշական գծերը)

Այսօր որոշակի դժուարութիւն է նկատւում Յովիկ Յովէեանի բանաստեղծական աշխարհը բնութագրելիս: Բանն այն է, որ տարբեր ժողովածուների մեկնական մեր փորձը ժամանակի ընթացքում ապրել է զարգացման իր կորը, կրել փոփոխութիւններ: Յ. Յովէեանը նկարչական սուր տեսողութեամբ բանաստեղծներից է, եթէ ոչ՝ այսօր ամենանկարչականը: Դժուարութիւններից առարկայականը օդի մէջ առկախ հարցադրումն է. ո՞րն է նրա ստեղծագործական դիմագծի իւրայատ-

կութիւնը՝ քնարականութի՞ւնը, թէ՞ էպիքականութիւնը: Եւս մէկ հարց՝ ի՞նչ դեր ունի ժամանակը Յովէեանի բանաստեղծական յարացոյցում: Շփոթը թերեւս գալիս է պատկերային խիտ մտածողութեան եղանակից եւ, երկրորդի բերումով ժամանակների բեւեռացման կայուն նախասիրութիւնից: Պատահական չէ արդէն այս տարի նրա լոյս ընծայած «Անժամանակութիւն» արտասովոր, բայց նշանակալի՛ց խորագրից:

Արդէն Յ. Յովէեանի գեղագիտական կառուցիկ մօտեցումը պէտք է փնտռել երկխօսութիւն ստեղծելու ստեղծագործական մշտակայ եղանակի մէջ. երկխօսութիւն՝ ժամանակների, միասնական հայեացք կրող տարբեր մեկնակէտերի, երկխօսութիւն նաեւ գոյների համադրման առումով: Երկխօսութիւնների բազմապիսութիւնը ընթերցողին բերում է պատկերային կառոյցի խորքի վարժուածութեան, յեղոյ նոր յաւելենք՝ ընկալման. նրա չափատողերում բացակայում է առօրեականի յեղագիծը: Երբ կարդում ես Յովէեանի ենթատողը, զգում ես լարուածութիւն, պատկերի ներքին շերտերը որսալու ճանապարհին ակամայ քեզ զգում ես «թարգմանչի» դերում, ինչը նշանակում է ելնել ենթակառուցուածքային արժէքներին ընդառաջ: Կարելի է վստահաբար ասել, որ նորագոյն շրջանում Յ. Յովէեանի ընթերցողը դարձել է արուեստագէտի ներքին զրուցակից, քանի որ հասու է թարմ մտածողութեան հոսքերին, պատրաստ է որսալու գեղագիտական սլացքը, բանաստեղծական խօսքի բերած խաղի խտութիւնը, դէպի կեանք-մահ ճանապարհի ընթացքներում, դէպի «անժամանակութիւն»:

Երկխօսութիւնը խաբուսիկ է ինքնին. այն ըստ էութեան՝ մենախօսութեան եղանակ է: Հարցն այս է ահաւասիկ՝ ինչո՞ւ է այսքան միայնակ հայ բանաստեղծը այսքան խառնահոծ, իրար հրմշտող զանգուածում, ինչո՞ւ է իր մենութիւնը տրոհում մշակոյթի ազգային ծալքերում, որն ինքնին մենութեան տաք վկայութիւն է: Ուրեմն չխաբուենք երկխօսութեան առարկայական խաղարկումին՝ Յովիկ Յովէեանը ներփակ, կեղեւուած, ինքն անգամ իրեն կարծես չվստահող բանաստեղծն է, ճիշդ միջնադարեան նեղլիկ խուցերում ամփոփուած ճգնաւորի պէս, ներքին սրուերը խորհրդանիշ դարձրած, գեղեցիկին հետամուտ երգիչը:

Ահա թէ ինչու նա կարող է յայտարարել ընդամէնը չորս տողի մէջ խտացած իր փիլիսոփայական ճանաչողութեան մասին՝

Երկիրս թագադրում եմ գրքով
Ու մատեանների գորգեր փռում
Պատմութիւնն՝ի վար...
Թափուր ընթերցասրահ է կեանքը,
Մահը՝ թագադրում հողով...
(«Անժամանակութիւն», 95):

Այս առումով ընթերցողին արդէն շահագրգռել էր նախավերջին «Վրիպած ջրհեղեղ» գրքի խորագրից բխող տրամադրութիւնը: Նախ, ի՞նչ էր նշանակում «վրիպած ջրհեղեղ». եթէ այս կամ այն ընթերցողը տրուի պատկերի մեքենայական խորհրդին, կարող է յանգել այն մտքին, որ ինքը «փրկուել է» բանաստեղծի հետ, փախել օրհասից: Բայց սա միայն առաջին, ընդ որում նախ հայեացքից. իրականում վերնագիրն ունի իր երկրորդ նշանակութիւնը. մեզ բոլորիս ջրհեղեղ է պէտք մաքրուելու համար, ինչպէս Նոյի ժամանակներում: Արդեօք չի՞ ուշանում, չի՞ վրիպում մեզնից այդ «ջրհեղեղը»:

Պատասխանները, որքան էլ տարօրինակ է, տրւում են նախորդի հետ թեմատիկ ընդհանրութիւն կազմող «Անժամանականութիւն» գրքի մէջ: Թւում է՝ մեր առջեւ մեր նկատած երկու ժամանակային

գօտիներն են՝ ամենանախնականը՝ «վրիպած ջրհեղեղը», եւ թաւալգլոր «անժամանակականութիւնը», այսինքն՝ յաւերժութեան դռների առջեւ բանաստեղծի կանգնելու վճռականութիւնը:

Իսկ գեղագէտի մեր պահանջը պանում է պարզ կառուցողական բնութագրի փորձին. առաջին ժողովածուից վերցրենենք անվերնագիր մի բանաստեղծութիւն ու փորձենք չշրջանցել պատկերների անսովոր ենթախորքը, այսինքն՝ բանաստեղծական «նկարը» փորձենք տեղադրել իր նոր «շրջանակում», որ պատշաճ լինի նիւթի մատուցման գեղարուեստական ջանքին.

Անպատճառը շրջանցում է նիստուկացս,
Արցունքը՝ խոստմանս երկինքն անապական,
Ես շրջանցում եմ ինձ
Ու տեղաւորւում
Մի պտղունց համբերանքի
Զամբիւղում:
Պոեզիայի ապրուստն եմ՝
Հրմշտոցի շուկայում
Վաղուց մոռացուած...
(«Վրիպած ջրհեղեղ», էջ 11):

Բանաստեղծութիւնը ներխուժում է հոգեաշխարհ առանց արտաքին առիթի, «անպատճառ», իսկ արցունքը գեղեցկութիւնն է, բիւրեղեայ աշխարհի, ասել է թէ՝ անապական երկնքի վճիտ խտացումը, այն, ինչ կորզում ենք անէականից, այն, ինչը շրջանցել հնարաւոր չէ: Եւ եթէ կայ մի բան, որ «շրջանցւում է», ապա «ծառաբնին թողած» («Վրիպած ջրհեղեղ», 194) այն շագրէնի (նկատի ունենք Բալզակի «Շագրէնի կաշին» վէպը - Ս.Դ.)՝ պայթիւնին մօտ կաշու պէս (ն.տ.) մի պտղունց համբերանքի զամբիւղում տեղաւորուող, չփշրուող բանաստեղծի ենթաշերտն է: Պատկերների հրավառութիւնը ունի նպատակային ուղղուածութիւն: Առաջին տողի վրայ բազմած «նիստուկաց» բառը մեզ յայտնի առօրեան է եւ զուգահեռւում է հրմշտոցի շուկային, ուր Յովէեանը նորաձեւութիւն չէ, ուր Յովէեանը աժան բանաստեղծական վաճառքի հանուած նմուշ չէ, որ բերում է: Նմանների համար Յ. Յովէեանը վաղուց մոռացուած բանաստեղծն է, այնտեղ, ուր իրար հրմշտում են անարտայայտիչ ոտանաւորչիութիւնն ու ռաբիսը:

Յովիկ Յովէեանի երգում բնանկարը լուծւում է փիլիսոփայական խորհրդանշանին ու բացայայտում բոլորովին նոր խորհուրդ, այն գեղեցիկը, որը վաղուց հեռացել է մեզնից: Գիշերային այրուած ցորենի արտի միջով անցնող ձիու խրխինջ է բանաստեղծը, իսկ եթէ մոլորուած է՝ ուրեմն կաքաւի արիւն է, որը առուի հոսքին ապաւինած հասել է հեռացումի մենաւոր լճին: Մենութեան ու ներփակ աշխարհի ինչպիսի՛ խորը բնութագրում, վեհանիստ տառապանքի ի՛նչ ինքնավերհանում: Արեան հոսքի ձայնն է միայն, որ առուի վճիտ խոխոջի հետ լսելի է դարձնում ինքնախոստովանութեան, ինքնամաքրումի ներքին շերտերը: Մեր ժամանակի խոնարհումի եղանակն է սա. ներքին ջրերի գիշերային պարզկայ, մեծարենցեան խիճերի վրայով ցատկող «հոյ-հոյր»: Նկատենք այն ներքին միասնութիւնը, որը կապում է բնանկարի ու արբշիռ իմացականութեան վարպետներին Յովիկ Յովէեանի հետ: Մեծարենցի «Ջրտուքի» եւ Շահնուրեան «Շուրջը ոչինչ» գործերի եռամիասնութեան կողքին բացւում է նրանց համահունչ եւ նրանց համազօր Յովէեանի «Տեսարանը» («Վրիպած ջրհեղեղ», 110)՝

Տեսարանը բաղկացած է տողից
Ու նուաճուած ժամանակից...
Տողաղարձը մի ջրուոր է ծեր,
Ով ծիածանը քաղում է ճիւղից
Ու փոթով կապում տրոտիին տողի...

Ժամանակը բաղկացած է ջրուորների
Հարայիրոցից...

Անշուշտ, յիշում ենք գիշերային ջրվուքի պահը, մեծարենցեան ջահել ու ահել ջրուորների «հարահրոցը»՝ «Ու դարձուցէ՛ք, ու դարձուցէ՛ք, կը կոչէ ձայնն անխափան» (Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., ԳԱ հրատ., 1981 էջ 95):

Այս ամէնին գալիս միախառնում է արեան երգի ամրութիւնը, մերթ արու ձիու յաղթական խրխինջ («Վրիպած ջրհեղեղ», 80), մերթ կաքաւի հեզասահ ընթացքի աննկատ արնածորում, որն ընդգրկում է մենութեան ողբերգականութիւնը, այն էլ՝ համաշխարհայնացման այսպիսի ժամանակներում: Ուշագրաւ է, որ արու «ձին» մի անգամ էլ է հասցնում վարգել ու փշրուել բանաստեղծական շնչով: Ընդ որում՝ Յ. Յովէեանի տողերի ընդմէջէն բախտագուշակ «թռչնի հեւասպառումով» («Վրիպած ջրհեղեղ», 180):

Տեղ-տեղ ջրի արձագանգն է բանաստեղծը, «...եւ ընդերքիս ծովը / ծփում է ինձնից շատ աւելի վեր, / շառաչուն, հուրհեր»՝

Ամէն ալիքն ի ցոլ ցայգալոյսը ցանցկէն
Վրնջում է իմ խօլ ընդերքն ի բաց,
Իմ ընդերքն ի վեր...
(«Վրիպած ջրհեղեղ», 88):

«Անժամանակութեան» անթագակիր արքան արդէն վարժուել է «վերերին»՝ նրա խօսքի ներկայութիւնը այլեւս «անժամանակի ձեղնայարկում է» («Անժամանակութիւն», էջ 111): Նորից «ձիու» յաղթական ներկայութիւնը վրնջիւնի արձագանգով, որն աւելին է, քան նկարի մէջ հրեղէն այն ձիերի երամակը, որին վարժուել է առօրեայի մէջ խրուած, խեղճացած մեր աչքը: Խածել շրթունքը, արիւնոտել այն ու վերստեղծել բերկրանքի, գեղեցիկի տեսիլը: Յ. Յովէեանի պարագային՝ խթանել ձին դէպի Ողիմպոսի գագաթները, ուր շատերին տեղ չկայ, ուր սառը օդերից շնչահեղձ կարող ես լինել, իսկ «պոեզիայի թռչունը», միեւնոյն է, «մատնում է տեղս» («Անժամանակութիւն», էջ 111): Ու ինչպէ՛ս մոռանաս բանաստեղծի վերելքի, իր գտնուած բառով, լուսաբացի քայլարշաւը՝

Առուն սկսում է իմ ոտքերից
Ու բարձրանում ժայռն ի վայր...
(«Անժամանակութիւն», էջ 146):

Դէպի խորքը լերան, ժայռի, դէպի թէքէեանական բարձրացում: «Առուն» բանաստեղծի յանդուգն համեստութիւնն է կարծես, մինչդեռ ինքը վարար գետն է, որ հոսում է, որի ալքերին Յ. Յովէեանի նաւը լեռների վրայ է:

Յ. Յովէեանը ցուցադրում է ոչ այնքան իր, որչափ իր ընթերցողի մենութեան սարսափն ու թրթիռը: Երբեմն պատուհանագոգից կախուած երկինք է արուեստագէտը («Վրիպած ջրհեղեղ», 114), գրեթէ շահնուրեան պատկեր, այն սրբում է աղախինը սպունգով, այսինքն՝ բանաստեղծին, իսկ ստեղծագործ հոգին ձգտում է սուրալ դէպի ամայութիւն, մինչդեռ Շ. Շահնուրի մօտ այն սուրում է դէպի երկինք: Երկու երգիչների մօտ յայտարարն է ընդհանուրը՝ նուաճուած է տարածքը, սրբուած է ժամանակը,- սա Շահնուրն է, իսկ ամայութեան հաստատումը գալիս է աղախնի անփոյթ շարժումից՝ դոյլը ոտքով դէպի երազանքի պարապը հրելու քայլից, - սա էլ մեր Յովէեանն է: Գեղեցիկի ու ողբերգականութեան համադիր տեսողութեան երկու հրաշալի բեւեռներ, մտքի մրգահասի մի լիութիւն, որին խլուրդի պէս փորել-փորփրելով, տարբեր սահմաններով հասնում են երկու արուեստագէտները:

Ինչ հարուստ է Յ. Յովէեանի կեցութեան փոհմածառը. լուսինը պէտք է թաքցնել ճիւղերի մէջ, որ թռչունը չտանի. յաջորդում է անակնկալ գիւտը՝ «Ձմեռը թաքցնում ես ճիւղերիս մէջ, որ մահը չտանի» («Վրիպած ջրհեղեղ», 115): Ուրիշ մի պարագայի այն պիտի որ հնչէր մահերգի պէս, իբրեւ ահասարսուռ երաժշտական հնչիւնների բարձրակէտ, մինչդեռ իմաստակուռ դատողութեան ալքերը աւելի խոր բան են պահում խօսքի ուժից, աւելի խոր բան ճիւղերի անճարակ պահմտոցիում՝ «հողը ափերի մէջ, որ մոխիրը չտանի»: Բանաստեղծական ներքնատեսութիւնը տողերի մէջ է:

Վերստին վերնագրերի մասին. մահուան տագնապի այս հեգնախառն գուպարում յաղթում է բանաստեղծի կենսական ճշմարտութիւնը՝ արուեստագէտը բարձունքում, սաղարթների վրայ թաքընուելու կամ թաքցրնելու խնդիր չունի՝ ինքն է ու իր երկիրը, յիշողութեան ու ինքնարտայայտման զուտ մարգարտաշար ձեռագիրը, իր կաւը: «Անձրեւները» չէի՞ն հասունացրել արդեօք ստեղծագործական այս «ջրհեղեղը» կամ հրավառութիւնը: Ու մնում է վերջին ճշգրտումը՝ ապա ո՞րն է բանաստեղծական «վրիպումը», այն, ինչ մնալու է թղթի շրջերեսին, լուսանցքից այն կողմ, իր իսկ խոստովանութեամբ՝ այն արօտավայրը, որը իրենը պիտի լինէր, բայց ինքն այնտեղ չի լինելու: Երբե՛ք:

Կ'ուզէք՝ դա կոչէք մա՛հ: Ձեր եւ բանաստեղծ Յովէեանի իրաւունքն է: Ինքը պայմանականօրէն այն կոչում է «աստղերից պայթող երկինք» («Վրիպած ջրհեղեղ», 181):

Մենք մեզ իրաւունք ենք տալիս վերախմբագրելու կամ սրբագրելու պատկերը՝ «անմահութեան հրաւէր»: Ինձ համար «վրիպածը» արեւմտահայերէնին բնորոշ «փրթածն» է նաեւ: Վերստին լսենք բանաստեղծին, որը «Անժամանակութեան» մէջ մտքի աչքը քթթում է վրիպումներից դէպի մահուան բարդոյթ, ուր «անժամանակութիւնը» նոյն անմահութեան հրաւէրն է՝ կարծես մանկան յամառ չարաճըճիութեամբ՝

Ինձնով աւելացնում եմ անապակը
Վրիպումների...
Կծիկիս ծայրը քաշողը
Մահն է՝ մանկան
Չարաճճիութեամբ...
Վրիպումների զառիվայր եմ
Անձրեւից թրջուած
Երիցուկներով...
(«Անժամանակութիւն», էջ 29):

«Անժամանակութիւնը» բանաստեղծի հոգուն իջած մենութեան զգայութիւնն է, որը վերջին գրքում շեշտադրւում է իբրեւ գլխաւոր գաղափար, մենութիւն, որ ներքին հարստացումի ուղի է, մենութիւն, որը սպասուած փակուղի է: Բանաստեղծի համար ուրիշ ելք չկայ («Աւելանում եմ ճողփիւնով / Մենութեանս կոյր ապտղի համար»), այսինքն՝ թոյլ անշշուկ մերձենում է ինքը «ջրերի կապոյտ հեկեկոցներին» («Անժամանակութիւն», էջ 57)՝ իբրեւ «արգելուած պտղի երկրորդ ջութակ», իբրեւ «ցամաքող ծովի երկրորդ յատակ» («Անժամանակութիւն», էջ 79):

Յիրաւի, «բանաստեղծական ծառն աճել է լեզուի քիմքին», ինչպէս ժամանակից դուրս ուրիշ բանաստեղծներ եւս Գր. Նարեկացուց, Ֆրիկից մինչեւ Վ. Թէքէեան, ամրագրել են դա, այդ ճանապարհով բացել գրոյ բերկրանքի առթած գիւտը:

Ուրեմն՝ մեզ բոլորիս՝ բարի՛ վայելք: Մեր առջեւ «անժամանակ» բանաստեղծն է:

Սեպտեմբեր, 2015

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

ԱՒԻԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ* ՅՈՒՇ, ԿԵԱՆՔ ԵՒ ԱՆՑԵԱԼ ԿԸ ԳՐԱԿԱՆԱՑՆԷ

Յուշագրութիւնը ընդհանրապէս գիր-գրականութեան ճահիճ է, չեղած արժէքներու ապաշնորհ գիրով, յաճախ ապապրուած, այն ասպիճան, որ հակառակ քարոզչութեան եւ մանաւանդ ցեղասպանութեան առիթով գրի առնուած ըլլալու յիշեցումներու, քիչեր յոգնութիւնը յանձն կ՚առնեն անոնց ընթերցումը կատարել: Բախտաւոր պարագային՝ կը թերթատեն, ի պաշտօնէ, գրախօսական մը գրելու համար:

Ավիկ Իսահակեան պատուհաններ բացող հատոր մը լոյս ընծայած է, մանաւանդ՝ սփիւռքահայուն համար: Գիրքին անունը թելադրական է. «Երեւանը երազում եւ արթմնի երկու դարի միջեւ» (Երեւան, 2014, «Գասպրինտ» հրատարակչութիւն, 510 էջ): Էջերու գումարը սարսափ պէտք չէ պատճառէ: Կը գտնենք քառասուն դրուագումներ, կը տողանցեն ժամանակ եւ մարդիկ, կեանք եւ յուզումներ, առաջին օրեակի մէջ գտնուող եւ միաժամանակ մասնակիցի աչքով դիտուած:

Գիրքը յուշագրութիւն է եւ չէ, անցեալի լրագրութիւն է եւ չէ, գրականութիւն է, առինքնող պատում, ոչ-երեւակայական կեանքի գրականացում: Ըսի՝ դրուագում: Եթէ չըլլային արեւմտահայ ընթերցողը խրդչեցնող սովորութիւն դարձած օտար բառերը, որքա՛ն աւելի հայ գրական եւ հարազատ պիտի ըլլային հինգ հարիւր էջերը, միջավայր եւ մթնոլորտի մէջ, զորս չենք տեսած, կամ ոմանք երբ դիտած են չեն տեսած, ունեցած ըլլալով աչքի կա-

պանքներ:

Ի հարկէ իւրաքանչիւր ընթերցող գիրքի մը ընթերցումէն կը պահէ իր հոգեբաւոնութեան եւ ակնկալութեան յատուկ տպաւորութիւններ: Եթէ ուզեմ անգամ խօսիլ հասարափոր հարորի ամբողջութեան մասին, անշահ ամփոփումներ պիտի ընեմ, մինչդեռ ընթերցողը իր տպաւորութիւնները ինք կը կազմակերպէ, կ՚արձանագրէ յիշողութեան պասարոին վրայ, կապարելով զրոյցներ:

Քառասուն դրուագումներէն պիտի անջատեմ երեքը, որոնք յատկանշական են: Անոնք մեր թիւով-թուանշանով չգրուած-չգրուող պատմութիւնն են, պատկերներ, որոնք նկարագիր եւ ինքնութիւն կը կերտեն: Այդ երեք պատումներն են. ՆԱՐԴԻ (էջ 5-14), ՄԵՐ «ԱԽՊԱՐՆԵՐԸ» (էջ 25-47), «ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՄԱՀԸ» (էջ 494-507): Երէկի «Անմիջականներ»ու պատումներ, որոնք այնքա՛ն ջերմութիւն ունին, որ կարծէք այսօր են, մենք ենք: Հայասդան եւ ափիւռքներ, եթէ կարդացուին այս էջերը, քիչ մը աւելի կը սիրենք գիր-գրականութիւնը, մեր մեծերը՝ ինչ գոյն եւ պիտակ ալ ունենան անոնք, եւ գիրար...

Ալիկ Իսահակեանը բանաստեղծ Աւետիք Իսահակեանի միակ թոռն է, եւ նահապետական ընտանիքի պատկերով հայր, մայր, զաւակ, հարս եւ թոռ ապրած են նոյն յարկին տակ: Գիրքը Երեւանն է, Աւետիք Իսահակեանի եւ իր թոռ Ալիկի քաղաքը, իր պատմութիւններով, մարդոցմով, մեծերով, խորհրդային օրերու կեանքի շնչառութեամբ: Կը տողանցեն գրողներ, բանաստեղծներ, նկարիչներ: Ալիկ Իսահակեանի պատումը կը հիւսուի Աւետիք Իսահակեանի առանցքին շուրջ, բայց հոն կանգ չառներ, ժողովուրդ կայ, մարդիկ, զգացումներ:

Յուշագրութեան արուեստի կարճ տեւողութեամբ, բայց ազուցուած ժապաւէններու գումար մը:

Գիրքը հրաւէր է այդ բազմանուն եւ բազմաշերտ զգացումները բաժնելու:

ՆԱՐԴԻԻ ՇՈՒՐՋ ՀԻՍՈՒՈՂ ԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«ՆԱՐԴԻ»ն քաղաքի մը զբօսանքի պատումն է, զբօսանք՝ ընկերութեան բոլոր խաւերուն համար, երբ հեռատեսիլի պզտիկ պատուհանը չէր գերած ընկերութիւնը, խուժելով ննջարան, խոհանոց եւ հիւրասենեակ: Երբ այսօրուան համեմատութիւնները չունէին տեսակաւոր զուարճութիւնները:

Սակայն նարդի էին խաղում ողջ Երեւանում, ողջ Պլեխանովի փողոցում, մեր հարեւաններ պոլսահայ կօշկակար Յարութիւնենց, պերպական յայտնի գործիչներ Երգնկեանենց, Ակոպովենց, Հայրենցենց տանը, մօրաքրոջս տանը՝ Այգեստանում եւ, մանաւանդ, մայրական գծով Անդրանիկ պապիս տանը՝ Շիմաչիի Նար-Դոսի փողոցում (էջ 5):

Աւելի վերը, նոյն էջին վրայ.

...պապս չէր սիրում նարդու աղմուկը, ընդհանրապէս շատ անտարբեր էր նարդու նկատմամբ: Թէեւ խաղալ գիտէր, բայց ան համարում էր դատարկ ժամանց, եւ մեր նարդու գեղեցիկ տուփը հիմնականում պահուում էր սեղանատան սենեակի մեծ թախտի տակ:

.....

Իսկ «Նարդու պաշտամունք կար Մարտիրոս Սարեանենց տանը: Թէեւ, ինքը,

Սարեանը, նարդի չէր սիրում, ինչպէս վկայում էր նրա հարսը՝ երաժշտագէտ Արաքսի Սարեանը, մեծ նկարիչն ասում էր. «Նարդին ինձ մօտ պպաւորուել է որպէս արեւելեան քաղաքների, մանաւանդ Պոլսի, ընդհանուր ծուլութեան, անբանութեան խօսող խորհրդանիշ»: Եւ Սարեանն իր մի քանի կտաւներում պատկերել է հէնց նարդի խաղացող անհոգ արեւելքցիների:

Կը պողանցեն դէմքեր, որոնք հեպագային իրենց դրոշմը պիտի դնէին հայ մշակոյթի վրայ, ինչպէս Առնօ Բաբաջանեանը, Ալեքսանդր Յարութիւնեանը՝ որ «երբեք նարդի չէր խաղում, որի համար արժանանում էր Վարպետ Սարեանի դրուատանքին» (էջ 6):

Եւ սրամիտ քննադատութիւնը կը հասնի, երբ մենաշնորհեալներու կեանքը կը դրուագուի «Դիլիջանի կոմպոզիտորների տան» (էջ 7):

Կարելի է մի ամբողջ հատոր գրել 20-րդ դարի վերջին 40-ամեակի հայ կոմպոզիտորների դիլիջանեան ստեղծագործական տան եւ նրա հերոսների մասին, որոնց ազատ ստեղծագործելու հիմնական խոչընդոտը եղաւ ոչ թէ խորհրդային ցենզուրան (գրաքննութիւն Յ.Պ.), այս կամ այն հասարակական հոգսը, այլ նորին մեծութիւն Նարդին:

Ալիկ Իսահակեանի պատումին մէջ, Նարդին կը ներկայանայ որպէս տեսակ մը մարզաձեւ, ընկերութիւն մտնելու, հպարտութիւն նուաճելու եւ միասին ըլլալու եղանակ մը: Պատկերները կը շարուին, ապրող մարդոց մեկնաբանութիւններով:

Ինձ նարդի խաղալ սովորեցրել էր մայրական գծով պապս Անդրանիկը (ծնուած Արեւմտահայաստանեան Խենդեք քաղաքում), նախկինում դաշնակցական եւ զօրավար Անդրանիկի զինուորներից, որը մի կերպ հրաշքով 1922 թուականին իր կնոջ Թագուհու, մօրս եւ Պետրոս քեռուս հետ Կոստանդնուպոլսից թութուն արտահանող բեռնանաւով փախել էր Սուխում, իսկ 1935 թուից հաստատուել Երեւանում (էջ 8):

Տարբեր անուններով հորիզոններէ եկած հայեր... «որոնց շառաւիղների մեծ մասն այսօր աւա՛ղ ապրում են հեռաւոր Ամերիկայի Քալիֆորնիա նահանգում» (էջ 9):

Այնքան բազմաթիւ են Նարդի խաղացող մեծանունները: Հանգիստի կ'երթային, փոխանակ բնութիւնը վայելելու, կը տրուէին Նարդիի հաճոյքին: Անոնք ճատրակի ախոյեան Տիգրան Պետրոսեան կամ համայնավար կուսակցութեան առաջին քարտուղար էին:

Իսկ Սփի՞ռքը...

Սփիւռքում նարդին որոշակի դրական ազգապահպան դեր է խաղում: Նա համախմբում է մարդկանց: Լաւ առիթ է, որ մարդիկ երեկոները կամ կիրակի օրերին թողնեն իրենց տունն ու գան ակումբ՝ լինի դա «Համազգայինի» թէ «ՀԲԸՄ»-ի, պարսկահայերի թէ պոլսահայերի միութեան (էջ 10):

Ալիկ Իսահակեան Նարդիի միջոցաւ կը նկարահանէ հայաստանեան եւ սփիւռքեան կենդանի պատկերներ, անցեալին կ'ըսէին՝ «կեանքը ինչպէս որ է», կեանք՝ ջերմ եւ մարդկային:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐՈՒ ՈԴԻԱԱԿԱՆՐ

Երկրորդ դրուագումը կը վերաբերի եկուոր հայերուն, ներգաղթողներուն, զորս կոչած էին «ախպարներ»: Այդպէս է նաեւ խորագիրը՝ ՄԵՐ «ԱԽՊԱՐՆԵՐԸ», չակերտուած, նուիրուած Պերճ Ջէյթունցեանին, ան ալ «ախպար»:

Ալիկ Իսահակեանի պատումի առաջին տողերուն մէջ կը զգանք ցաւ ու կարօտ: Հայրենասիրական զգացումներու թելադրանքով եկած էին մարդիկ, եկած էին ասպանդականի վիճակին վերջ տալու համար:

Հիմա նրանցից Երեւանում համարեա ոչ ոք չի մնացել: Մնացածներն էլ երեւանցի են դարձել, իսկ մեծ մասը եւ գնաց այնտեղ, որտեղից եկել էին (էջ 25):

Երկու տող: Բայց ինչե՞ր կ՚ըսեն այդ երկու տողերը, ընդունողի եւ մեկնողի բացասականութիւններուն մասին: Չենք քննադատեր: Այդ պատճառով ալ բացասականութիւնները կը տեւեն եւ կը կրկնուին: Երկու տող, հայու նկարագրի իրապաշտ պատկերացում, խուճապի հոգեբանութիւն:

Պատմութի՞ւնը:

Առաջինը, շնորհիւ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Պինոյի, սկսեցին եւ գնալ ֆրանսահայերը: Այդ նրանք էին, որ միապետութեան պատմութեան մէջ առաջիններից մէկը ցոյց կազմակերպեցին Թումանեանի թանգարանի սանդուղքների տակ: ... Եւ Պինոն հասկացել էր, որ ինչ-որ բան այնպէս չէր արեւտր Երեւանում:.... Ընդամէնը մի քանի տարի առաջ բոլոր այս մարդիկ կը յայտնուէին Սիբիրում, սակայն «ձնհալի» հեղինակը (Խրուշչով, Յ.Պ.) հանեց իր գրիչը եւ թոյլտուութիւն մակագրեց:..... Բայց հէնց Պինոն հիմքը դրեց այն գործի, որ Երեւանը սկսեց դատարկուել մեր «ախպարներից (էջ 25):

Ալիկ Իսահակեան կը նկարէ «ախպար»ի կերպարը:

Միշտ մաքուր, ճաշակով հագնուած, տղամարդիկ յաճախ ֆետրէ շլեապայով եւ ճիշդ կապած փողկապով, կանայք բարեպես, կանացի, գեղեցիկ հագնուած, ամառները զոնտիկով եւ ձեռքին գեղեցիկ հովհար, դէմքին ասես ունէին օտարացու կնիք: Մեր «ախպարները» սափրուած էին, արեւի ակնոց էին դնում, արեւածաղիկ չէին չրթում, բաժակ-բաժակի եփեւից գարեջուր չէին խմում եւ չէին հայհոյում տեղի թէ անտեղի: Նրանք դիմում էին մարդկանց եղբայր բառով, սակայն այդ բառը նրանց առոգանութեամբ սպացուում էր «ախպար» եւ, ինչպէս լինում է առօրեայ կեանքում, այդ բառը կպաւ մեր հայրենադարձներին, հետզհետէ դառնալով հաւաքական պիտակ: Երբ գնում էին, արդէն բաւական ապահով կենցաղի տէր էին դարձել: Բայց ինչե՞ր քաշեցին, մինչեւ այդ վիճակին հասան:....

Եւ այդպէս Երեւանում գոյացան «ախպարական թաղեր», որոնք կոչուում էին Արեւմտեան Հայաստանի շրջանների անուններով՝ Կիլիկիա, Կամարակ, Կիրզա, Արաբկիր, Բութանիա, Զէյթուն, Սեբաստիա, Մալաթիա, Արէշ, քիչ չէին ներգաղթածները Շիլաչիում... (էջ 25-26):

Ներկայիս հայաստանցին եւ այցելուն կը գտնեն անթիւ սրճարաններ, թրքերէն անուններն ալ վերածելով ցուցանակի: Բայց անցեալին սուրճը մաս չէր կազմած հայաստանցիի կենցաղին: Ալիկ Իսահակեան անկեղծ սիրով կը նկարագրէ հայրենադարձներու հետ սուրճով հասած բարքը, սուրճին կենցաղային նշանակութիւնը եւ բոյրը:

Մեր հայրենադարձները իրենց հետ Երեւան բերեցին եւ՛ նոր ճաշատեսակներ, եւ՛ կենցաղի որոշ ձեւեր: Դրանցից հիմնականը սեւ սուրճն էր: Վստահաբար կարող եմ ասել, որ մինչեւ մեր «ախպարների» գալը Երեւանում սուրճ չէին խմում: Հիմա դժուար է ասել, թէ ում մտքով էր անցել Հայաստան գալիս հետը սուրճ բերել, բայց դա հաստատ իմաստուն որոշում է եղել:.....Երեւանցիները զարմացած էին այդ ի՞նչ մատնոցաչափ բաժակներով, սեւ գոյնի ու դառը համի, անպայման

եռացած վիճակում մի հեղուկ են օգտագործում մեր «ախպարները»: Եւ եթէ իրերի բերումով իրենց մօտ հիւր ես գնացել կամ պարզապէս մէկ-երկու րոպէով այցելել ես, ապա քեզ անպայման սուրճով հիւրասիրէին եւ այն ալ եփելիս ողջ տունը բռնուում էր հիանալի բոյրով: Եւ մէկ օրինաչափութիւն եւս. ինչքան սուրճ եփող կայ, այնքան էլ սուրճի համ կայ: Եւ անգամ մայրն ու աղջիկը նոյն որակի սուրճ չէին եփում, ուր մնաց հարսը (էջ 27):

Նոր եկողներու, նոր թաղերուն եւ նոր տուներուն մէջ, հայաստանցիին համար անծանօթ բազմաթիւ նոր ճաշատեսակներ կը տողանցեն եւ կը բուրեն իրենց թրքերէն անուններով... Այիկ Իսահակեան կ'ըսէ՝ «կախարդական անուններով ուրիշ ճաշատեսակներ, որոնց պատրաստման գաղտնիքը նրանք իրենց կարի մեքենայի, ջազվէի ու անգլիական արդուկի հետ բերել էին այն երկրից (էջ 28):

Եւ դեռ՝

Մեր հրաշագործ եկուոր խոհարարների արտադրանքը հիմնականում տնից էր վաճառուում, մարդիկ հասցէն իրար էին տալիս, քանզի այն տարիներին տանը հեռախօս միայն ընտրեալներն ունէին, գնորդները տուն էին գնում այս կամ այն ծանօթի միջնորդութեամբ: «Շաւարշ եղբայրը տա՞նն է, ինձ տիկին Վերժինն է ուղարկել»... (էջ 20):

Եւ կը տողանցեն «ախպար»ներու տիպարներ. Շաւարշ եղբայր, Եղիսաբէթ, Ծալապատիկ Եուսուփ աղա, որ «բաստուրմա» կը պատրաստէ, տղամարդու «կոստում» կարող վարպետ Մարտիրոսը՝ որ կ'երգէր նաեւ Օփերայի երգչախումբին մէջ: Նաեւ վարսավիրները, ոսկերիչները, լուսանկարիչները...

Հետաքրքրական տեղեկութիւններ կան եկուորներու հանդէպ վերաբերումի մասին, որ այսօրուան եւ վաղուան համար կարեւոր է, որպէսզի տեղացիի-դրսեցիի տարբերութիւններ չստեղծուին, մանաւանդ հայրենադարձութեան առջեւ հոգեբանական արգելքներ չստեղծուին:

Մեր «ախպարների» մէջ կային, այսինքն՝ ոչ թէ կային, այլ համարեա բոլորը հիանալի արհեստաւորներ էին՝ կօշկակար, դերձակ, ոսկերիչ, վարսավիր, խոհարար, աւտօ դզող-փչող ներկարար, կօշիկ մաքրողներ: Բայց կային աշխատանքներ, որ էն գլխից մեր ախպարներին չէին տրուում, աւելի ճիշդ՝ չէին վստահում, օրինակ՝ միլիցիոնէր, դատաւոր, կոնվոիր *(ֆրանս. Convoyeur, ընկերացող պահակ, Յ.Պ.)*, մաքսային աշխատող, ֆինտեսուչ... (էջ 30):

Իրապաշտ պատկեր մը՝ այդ օրերու ընկերութեան:

Այիկ Իսահակեան կը նկարէ մեր ներսի եւ դուրսի պատմութիւնը, առանց դպաւորելու մարմաջի: Պատումի վերջին պարբերութիւնը այսօրուան եւ վաղուան քաղաքական բարոյականի մրմունջ է, եթէ յաղթահարենք անհասկացողութիւնները, աւելի ճիշդ՝ մրցակցական չարաշահումները:

Արժէ՞ արդեօք ասել, որ գորբաչովեան պերեստրոյկան շատ այլ բաների պէս աւլեց ու տարաւ մեր քաղաքի կոլորիտը *(գունագեղ դիմագիծը, Յ.Պ.)* կազմող այս վարպետներին, որոնք մի ուրոյն մասն էին եւրոպերազմեան եւ լճացման տարիների Երեւանի... Դատարկուել են մեր «ախպարների» թաղերը, այսօր հազուագիւտ հայրենադարձ կը գտնես Արաբկիրում, Կիլիկիայում, Զէյթունում, թերեւս մի քիչ աւելի՝ Արէշում: Իմ նպատակը չէ գրել թէ նրանք ինչու գնացին, սակայն իմ սիրտը ցաւում է, որ նրանք չկան Երեւանում: Նրանց տեղը շատ է Երեւում,

նրանք կարծես ի սկզբանէ քաղաքացի էին եւ քաղաքին էլ տալիս իրենց յատուկ կոլորիտը, ձեւը, գոյնը, ոճը: Ես յիշում եմ նրանց կարօտով եւ էլի ի վիճակի չեմ հասկանալ, թէ ինչու եւ ինչպէս կայացաւ «Ելքը Եգիպտոսից» հակառակ ուղղութեամբ:

Ալիկ Իսահակեանի անպատասխան մնացող հարցումը այն է թէ, փոխան վերադարձի, ինչպէս հայրենադարձ ժողովուրդը երէկ հետեւեցաւ հայրենալքման ուղիին, եւ ինչպէս այսօր հայրենի հողին վրայ արմատ ունեցողներ կը հետեւին հայրենալքման նոյն ուղիին:

Թատերական ձեւով կրնանք ըսել, թէ «տեղ մը բան մը սխալ է Դանիոյ թագաւորութեան մէջ»:

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ՝ ԱԶԳԸ ՄԻԱՑՆՈՂ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Մոռցուող առաքինութեան մը մասին կը գրէ Ալիկ Իսահակեան:

Ընտրուած երրորդ դրուագումը բանաստեղծին հմայքով ժողովուրդի իր ինքնութեան ընդոծին հաւատարմութեան պատումն է: Բանաստեղծը՝ Ալեքիք Իսահակեան: Պատմողը՝ թոռը: Խորագիր՝ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՀԸ:

Իր երկրին մէջ ապրող մարդը իր հողով, այդ հողի բերքով, իր ժողովուրդով ինքնութիւն ունի: Կայ բանաստեղծ պապիկը, բայց նաեւ՝ տատիկը, վարորդ Վարդգէսը: Իրենք՝ այգիներու, խաղողի տեսակներու եւ գինիներու շրջանակին մէջ: Երեւանի կողքի Փարաքարի փորձարարական այգիներէն խաղող կը գնուի բանաստեղծի տարեդարձին համար, 30 հոկտեմբեր: Խաղողի բերքը կը հասնի դեկտեմբերի կէսէն երբ:

Երբ պապիկս մեզ հետ էր լինում, ապա այդ ինստիտուտի բակում, սրեւորոտ մի անկիւնում փոքր սեղան էր գցուում, որ Վարպետին անպայման պիտի հիւրասիրէին:... Եւ զանգ տուեցին այդ տարի հոկտեմբերի 14-ին, սակայն քանի որ պապիկը մի փոքր մրսած էր եւ թոյլ էր իրեն զգում, մենք գնացինք առանց իրեն եւ լիքը արկղներով վերադարձանք: Այդ տարի մեծ թուով հիւրեր էին սպասում ծննդեան տօնին, եւ խաղողն ալ սովորականից շատ գնուեց:.. Այս էր այդ խաղողի պատմութիւնը, որով հիւրասիրեց տատիկս այդ երեկոյ մեր հիւրերին:

Յաջորդ օրը, 1957 հոկտեմբեր 17-ին, սովորական օր մը բոլորին համար: Ալեքիք Իսահակեան, 82 տարեկանին, անշշուկ կը շիջի:

Ինչպէս ինքն էր երազել մահուան մասին՝ քնէր եւ էլ չզարթնէր, չգիտակցէր մահուան ակնթարթը (էջ 497):

Բօթը կը տարածուի:

Մեր տունը, փողոցը, բոպէների ընթացքում լցուեցին հարիւրաւոր մարդկանցով: Առաջիններից մէկը եկաւ Վեհափառ Վազգէն Առաջինը, սակայն արդէն Իսահակեանի դին տեղափոխել էին Բժշկական ինստիտիուտ: Եկաւ Մարտիրոս Սարեանը կնոջ հետ... Եկան երկրի ղեկավարները՝ Թովմասեանն ու Քոչինեանը: Գրողներով լիքն էր տունը: Շիրազը մի անկիւնում, մենակ քաշուած, երեխայի պէս լաց էր լինում... Տատիկս եւ մայրս լաւ յիշում էին, որ Վարպետն ասել էր Կոմիտասի շիրմին այցի գնալիս՝ որ մի օր ինձ հետ բան պատահի, կը բերէք այստեղ, եղբայր Սողոմոնի մօտ, այստեղից լաւ երեւում է Մասիսը, ինձ հողին կը յանձնէք նրա շուքի տակ (էջ 499):

Տասներեք տարեկան պատանի Ալիկի յիշողութեան պատկերները վկայութիւն են ժողովուրդի սիրոյն՝ իր բանաստեղծին համար:

Սակայն որոշուած էր, որ այն երկու օր

հրաժեշտի համար պէտք է դրուած լինէր Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճում... Ժողովուրդը գալիս էր ահռելի քանակով, վաղ առաւօտուանից ձեւաւորուել էր մարդկային ամբոխի հերթը: Եւ երեւի ես, որ կեանքումս այդքան մարդ մի տեղ հաւաքուած չէի տեսել, լաւ, աւելի մօտիկից տեսայ իմ ժողովրդին՝ ալեհեր ու ծեր, կին եւ երեխայ, ջահելներ ու այրեր, հարիւրներ հազարաւորներ:... Եւ ես զգացի ինչպէս է սիրել ժողովուրդը իր բանաստեղծին, եւ իրօք արժէր ապրել այդ ժողովրդին համար:... Գալիս էին Հայաստանի բոլոր կողմերից, ոչ միայն հարազատ Շիրակից... մարդկանց հերթը սկսուում էր կինօ «Մոսկուայի» մօտից եւ ձգուում մինչեւ հրապարակ:

Գրողներ, արուեստագէտներ, նաեւ ստիւոքէն, հոն են: Դագաղին կ'ընկերանան Նիկողայոս Նիկողոսեանը եւ Պարոյր Սեւակը: Թէեւ ուշ հասած եւ ամբոխին մէջ մօրը հետ կորսուած Ալիկ Իսահակեան կը հասնի, կը տեսնէ եւ կը նկարագրէ թաղման վերջին պահը:

Մինչեւ մենք հասանք, սկսուել էր հրաժեշտի պաշտօնական մասը՝ յայտնի մարդկանց ելոյթները միտինգ էին յիշեցնում: Պապիկիս աճիւնը դրուած էր մի փոքր բարձունքում, մեզնից բաւական հեռու էր, եւ ես միայն նրա դիմագիծն էի տեսնում հեռուից, սակայն ուզում էի անընդհատ նայել նրա դէմքին: Հրաժեշտի արարողութեան պահին խօսք էր ասել Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղար Սուրէն Թովմասեանը եւ յիշել, որ հարթ չէր եղել Իսահակեանի կեանքի ճամբան, եւ եղել են դեգերումներ դէպի Դաշնակցութիւնը: Այսպէս, իրենից անկախ, Թովմասեանը հրաժեշտի վերջին պահին էլ յիշեցրեց ժողովրդին, որ Իսահակեանը դաշնակցական է եղել... Այս յիշեցումը ոչ թէ վանեց, այլ աւելի մօտեցրեց սգակիր ամբոխին դէպի իր բանաստեղծը (էջ 506):

Ինչպէս ամբողջ հայրորը, Ալեքիք Իսահակեանի վերջին վայրկեանները եւ թաղումը ներկայացուած են պատանիի մը անշպար պարզութիւններու լոյսով, ոչ քաղաքական, ոչ ալ գովերգական ճառով:

ԻՆՉՈՐ ԱՅՍ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՆՕԹԵՐԸ

Բաղձանք մը: Որքա՜ն լաւ պիտի ըլլար, որ դպրոցական եւ ակումբներու գրադարաններուն մէջ դրուէր այս գիրքը, որպէսզի մարդիկ ո՛չ միայն գիտնային մեր մօտաւոր անցեալը եւ արժէքները, իրենց բնական կեանքով, այլ նաեւ հաղորդուէին այն բոլորով, որոնց վերջին հաշուով ժառանգորդներն են:

Անցեալին հայկական թերթեր հայերէն գիրք կը հրատարակէին թերթօնի ձեւով: Յոռետեսութիւն է թերեւս, բայց գիտենք, որ Հայաստան գացող-եկող մեծ եւ պզտիկ զբօսաշրջիկներու միտքէն անգամ պիտի չանցնի գրատուն մը մտնել, գնել եւ տուն բերել այս գիրքը, Հայաստանը եւ հայերը հոգիով ճանչնալու համար:

Ինչպէ՞ս վերագտնել արմատներ եւ հարազատութիւն օտար մնալով անցեալին... Անցեալ՝ որ չ'իւրացուիր թմբուկի կարգախօսներով:

* *Ալիկ Իսահակեան ծնած է 1944-ին, կ'ապրի Երեւան:*

ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ԵՐԱՁԱՅԻՆ ՓԱԼՄԻՐԸ ԱՐԴ ԱՒԵՐՈՒՈՂ ՄԵՌՆՈՂ ՅՈՒԾԱՐՁԱՆ Է

Փալմիր-Թադմորը՝ որ քնարական ներշնչում պուած է բանաստեղծին

Ասերիք Իսահակեան կը վկայէ պատմամշակութային կոթող Փալմիրի մասին, որ այսօր կը քանդուի ֆաւարամիտ եւ հակամշակոյթ ուժերու կողմէ: Պատմական քաղաքը կը կոչէ իր արաբական անունով՝ Դըղմոր, կը գրէ՝ Թադմոր: Մարդիկ եթէ կարդային բանաստեղծին քնարական տողերը, հաւանօրէն չէին քանդեր մարդկութեան ժառանգութիւնը: Հայը գիտցած է երկնել գեղեցիկը, ուր որ ալ գտնուի ան: Փալմիրի իշխաններ կը յիշուին Հռոմի պատմութեան մէջ: Ուրիշներ ալ գրած են Փալմիրի իշխաններուն մասին, ֆրանսերէնով վէպ լոյս տեսած է 1969-ին: Կ՚արձագանգենք անոր աւերման: Կարծէք աշխարհ անկարող դարձած է իր ժառանգութիւնը պաշտպանելու:

ԽՄԲ.

ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՍԷՐԸ

I

Լուսակերտ է ապարանքը Թադմորի,
Անապատում, որպէս երազ ոսկեհիւս.
Եօթն հարիւր սիւնի վրայ մարմարի
Սլանում է աշտարակը երկնասոյզ:

Շուրջը նազուկ արմաւենու պուրակներ,
Ուր երգում են հրաշք-հաւքեր կարօտով,
Շատրուաններն հուրհրում են կրակներ,
Ծաղիկները պճնազարդում արծաթով:

Գահի վրայ երիտասարդ Էլ-Սաման
Մեղմ գրկել է հրաշագեղ բամբիշին.
Կրծքի վրայ հիւսքը նրա - ծփծփան,
Հանց նունուֆար լոյս-աղբիւրի երեսին:

Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փէշերի՝
Չունի այնպէ՛ս, այնպէ՛ս փրփուր ձիւնաթոյր
Ինչպէս կուրծքը լուսապայծառ բամբիշի:

Արքայական գահի շուրջը զուարթուն
Մանկլաւիկներ եւ նաժիշտներ ոսկեհեր
Նուագում են, կաքաւում են ու երգում
Գիշերները, առաւօտուց մինչ գիշեր:

II

Երբ հանգչում են ապարանքի ջահերը,
Եւ արծաթեայ կարապի պէս լուսնկան
Փայփայում է աւազանի ջրերը,
Շշնջում է սիւգի նման Էլ-Սաման:

Շշնջում է լուսաթաթախ բամբիշի
Ականջն ի վար այնպէս քնքուշ, հեզասահ,
Ինչպէս լուսնի շողակաթը թաւիշի
Այն հոյակապ սիւներն ի վար մարմարեայ:

- Բարձր են երկրի ձեղունները, նազելի՛ս,
Բայց իմ սէրը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս,
Բայց իմ սէրը խորախոր է նրանցից:

Արուսեկը, որ ներկում է ծիրանի
Շրթունքները գառնուկների Տիւրոսի,
Այնքա՜ն կարմիր, այնքա՜ն կարմիր բոց չունի,
Ինչքան որ քո համբոյրները սնդուսի:

Կը խորտակուի ապարանքըս գեղանի,
Եւ կը ծածկուի ապարանքի շնչի տակ,
Կը բարձրանայ անհուն ծովը Սիդոնի
Եւ կը գերէ անապատը ծագէ ծագ,-

Ժամանակը իր վախճանին կը հասնի
Եւ արեւը մի բուռ մոխիր կը դառնայ,
Բայց իմ սէրը վախճան չունի, հուն չունի,
Նա յաւերժ է, նա անշէջ է, նա անմահ...

Չէացնող համբոյրներում դիւթական,
Հանց հինաւուրց հեքիաթական գինու մէջ,
Դալկանում է եւ հալչում է Էլ-Սաման...
Ժամանակը դառնում՝ վայրկեան ու յաւերժ...

Ապարանքի եբենոսեան դռներից
Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.
Մանկլաւիկներ ու նաժիշտներ ցնծալից
Նուագում են, ու երգում են, ու պարում...

III

Լռութիւնը մահուան թեւով ծուարած՝
Առկայծում է կանթեղն աղօտ, մենաւոր,
Եւ մեռնում է հեզ բամբիշը դալկացած
Էլ-Սամանի կրծքի վրայ սգաւոր:

Նա մեռնում է ինչպէս ցողը բողբոջում,
Մանկիկն ինչպէս սուրբ գրկի մէջ մայրական.
Եւ հրծծում է, աղօթքի պէս շշնջում
Հէգ բամբիշի ականջն ի վար Էլ-Սաման:

- Կը խորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս.
Եւ կը վանեմ, եւ կը յաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս:

Եւ գրկել է դժգունացող բամբիշին,
Մահուան հանդէպ սուր ու վահան է շարժում.
Եւ բամբիշի սառած-մեռած շրթներին
Իր հրեղէն սէրն ու շունչը ներարկում:

IV

Լուսիններ են եկել-անցել, ու կրկին
Մեռած բամբշին ամուր գրկած Էլ-Սաման
Ծշնջում է ականջն ի վար մեղմագին,
Ինչպէս դեղին սիւներն ի վար լուսնկան:

Եւ լքել են ապարանքը սարսափից
Մանկլաւիկներն ու նաժիշտներ ոսկեհեր.
Արմաւներն են լուռ սօսաւում թախծալից,
Եւ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր:

Շատրուաններն հեծկլտում են ու լալիս,
Եւ սիւնից սիւն սարդը ոստայն է հիւսում.
Անապատի հողն է միայն այց գալիս
Եւ գահի շուրջ կաղկանձում ու փսփսում:

Օձն է սրբում սառն ու փայլուն կողերով
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին,
Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հիւծուած բամբիշին:

Եւ քայքայուն ականջն ի վար լռելեայն
Մեռած, սառած շրթունքներով Էլ-Սաման
Ծշնջում է յաւերժաբար ու անձայն,
Ինչպէս խարխուլ սիւներն ի վար լուսնկան:

Պուրակները չորացել են, չքացել,
Եւ շիջել է լոյս երազը սիւների.
Անապատը դեղին քղանցքն է փռել
Եւ ծածկել է ապարանքը Թադմորի...

Եւ աւազուտ շիրմի վրայ մենաւոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկայ,
Որ իմանան վառ ասպղերը հեռաւոր
Էլ-Սամանի սէրը հզօ՛ր ու անմա՛հ:

Որ աշխարհին պատմեն սէրը յաղթապանծ.
Էլ-Սամանի սէրը՝ անա՛նց, յաւերժո՛ղ,
Քարաւաններն ու ճամբորդներն երկիւղած
Հեռուներից հեռուն եկող-գնացող...

27 Նոյեմբեր.1914, Պերլին

ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԲՆՈՒԹԵԱՆ ՉՈՐՍ ՏԱՐՐԵՐԸ

ՋՈՒՐԸ

Կռուազան է ջուրը եւ չար,
Խորքերը՝ մութ, դէմքը՝ պայծառ:
Մայր ցամաքը՝ մայրը նրա,
Իշխում է այս երկրի վրայ
Եւ իր ծոցի մէջ մայրաբար
Սնուցում է ջրեր վարար:
Կռուազան է ջուրը եւ չար,
Խառնում իրար աւազ ու քար,
Մայր ցամաքից էլ խռովում,
Ամփոփւում է անծայր ծովում,
Կռիւ գալիս ափերի հետ,
Կռւում պարտւում ու քաշւում ետ,
Ապա խայտում մանրածիծաղ,
Խառնում իրար խռովք ու խաղ:
Ջուրը չար է ու կռուազան,
Չկամեցող, անհնազանդ,
Հաւաքում է ու կուտակում
Քէն ու վրէժ մութ յատակում:
Անդունդների մէջ մթամած
Գանձեր ունի՝ ամուր պահուած,
Սուզուած նաւեր անառագաստ,
Առաջ՝ հզօր, այժմ՝ նուաստ,
Եւ աճիւններ՝ փէրով, անփէր,
Տիղմին՝ գերի, ձկներին՝ կեր:
Երբ հունից են նրան հանում,
Լռում է ու խելօքանում,
Ցամաքի հետ խաղաղ ու հաշտ՝
Ոռոգում է այգի ու դաշտ,
Ու գանում են նրան հեռու
Երակները առու-առու:
Գլորւում է ալիք-ալիք,
Մեծ բարիք է ու մեծ չարիք,
Սպասում են գապին անանց,
Տեղում է, երբ պէտք չէ մարդկանց,
Քարշ է գալիս մարմինը հեղ
Ու կործանում ափերը նեղ:
Բայց թէ գեղով դառնայ կրակ,
Նա ոչինչ է առանց ցամաք:
Ցամաքը՝ քար, ջուրը՝ վարար,
Բաժանւում են, գրկում իրար,
Սարսում իրենց ահեղ թափից,
Հառաչներ են լսւում ափից,
Բայց մոռացած կռիւը հին՝
Նա նաւեր է պահում կրծքին,
Ինչպէս յայտնի գապանը մեծ,

Որ մնում է սառոյցի մէջ
Գագաթին այն բարձր լերան,
Ուր ջրերը նրան գարան:
Նրան յանձնում են կտաւին
Նկարիչներ եւ նոր, եւ հին,
Նրա մասին հիւսում ասքեր
Եւ հին ցեղեր, եւ նոր ազգեր:
Ամէնուրեք եւ ամէն տեղ
Որտեղ ջուր կայ, կայ եւ հեղեղ,
Եւ յայտնի չէ, գարերքն ահեղ՝
Մինչ այդ հանդարտ, հեզ ու անմեղ,
Ցաջորդ ժամին ինչեր կ'անի,
Ինչ կը բերի, ինչ կը գանի:
Անդորր է եւ քնքշանք անափ,
Շուրջն ամէն ինչ քանդող սարսափ,
Նրան մարդիկ զուր չեն գովում,
Զուր օրհնում եւ զուր... նզովում:

ԿԸԱԿԸ

Սապանայի գիւղը՝ կրակ,
Բազմաբերան ու սանձարձակ,
Արդէն քանի հազար տարի
Ձեռքն է առել բախտն աշխարհի:
Սարսափազդու տարերք է կոյր,
Անհանդուրժող ու տեղով հուր,
Ցաքուցրիւ ու լեզուն՝ բոց,
Ինքը՝ կրակ, բնոյթով՝ օձ:
Ամէն ինչը կիզող հնոց,
Չբուժուող վէրք, չփակուող խոց,
Թունաւոր սունկ հիւլէական,
Սոսկ հպումից պայթող ական,
Անպանելի կսկիծ ու բօթ,
Անմեղ զոհի ճենճերահոտ,
Մարդկութիւնը նրա դիմաց
Անպաշտպան ու թիկունքը բաց:
Թեթեւաթեւ սաւառնող երգ,
Անչափելի ու անեզերք,
Փնտռուած նիւթ քերթողների,
Կապարեալ ու նոյնքան թերի,
Սրտեր իրար կապող շաղախ,
Ում համար մահ եւ ում էլ՝ խաղ,
Եւ ի վերջոյ՝ օջախի մէջ
Անբաւ բարիք, խաղաղուած վէճ
Սապանայի գիւղը՝ կրակ,
Բազմաբերան ու սանձարձակ...
Ջուրն ու ինքը՝ եղբայր ու քոյր,
Իրարից յար զատուած, տխուր,
Այսպիսին է բախտը դաժան,
Որ ապրեն միշտ բաժան-բաժան,
Ու կրակը՝ ջրից հեռու,
Թէկուզ լինի փոքրիկ առու,
Սրտում հազար սարսափ ու ահ,
Ջուրը՝ տենչանք, արցունք ու մահ:
Սապանայի գիւղը՝ կրակ,
Սանձահարուած ու սանձարձակ:

ՀՈՂԸ

Բարեգութ Աստուածն ամենակարող
Արարել է այն ու անուանել հող,
Թէեւ զանազան անուններ ունի,
Հայրահոտ է եւ տուն է հայրենի:
Հողից է գունդն այն կանաչ ու կապոյտ,
Որ ընթանում է պտոյտ առ պտոյտ,
Ինքը փութաջան, ընթացքը՝ անբեկ,
Գնում է ու տեղ չի հասնում երբեք:
Հողից է Աստուածն արարել Մարդուն,
Երկիրը տուել նրան որպէս տուն,
Մասնատել են այդ տունն, աւաղ մարդիկ
Հայրենիքների՝ եւ մեծ, եւ փոքրիկ:
Հողն անուանել են սուրբ ու սրբազան,
Անուններ տուել նրան այլազան,
Աստվածներ են կպցրել հազար՝
Էլ քաղցրի՞կ եզերք, էլ չքնա՛ղ աշխարհ...
Ու սահման գծել սայրով թրերի,
Գերի յանձնուել ու տարել գերի,
Ու սրտաճմլիկ ձայնով երգերի
Ամոքել ցաւը դեռ թարմ վէրքերի:
Լոկ Աստուած գիտի՝ ինչու եւ ինչպէս
Լինում են այստեղ հրաշքներ պէս-պէս,
Ինչպէս է մի կոյր կամ մի խուլ հանճար
Բիւրաւորներից՝ անկարող, անճար,
Երկնքի ներքոյ՝ ծարաւ ու սոված,
Արարում ինչպէս մի հզօր Աստուած,
Կամ մի սապանայ՝ խեղուած մի Թեմուր,
Երկրներ առնում ու մատնում ի հուր:
Ժայռեր է պահում հողը իր վրայ,
Առեղծուածներ կան ծալքերում նրա,
Իսկ նրա դէմքին թառել են շէնքեր՝
Բետոնակառոյց, բարձր ու երկնաքեր,
Ու առաւօտից մինչեւ ուշ գիշեր
Կրքեր են եռում ու պարպւում շշեր:
Ջուրն է հողի չոր կողերը ծեծում,
Ինքը ծեծում է, ինքը՝ հեծեծում,
Մայր հողի հետ նա կռիւ ունի միշտ,
Հողը՝ ծեծուողի տառապանք ու վիշտ,
Բայց անհնար է կեանքը առանց ջուր,
Ամայացումի տեսիլքը՝ զարհուր,
Եւ գութանների խոփերը երկաթ
Հերկում են հողի կուրծքը խանդակաթ:
Հանդարտ է հողը, մեղմ է ու բարի,
Ստնտուն է նա համայն աշխարհի,
Իսկ թէ կոշտացաւ, զայրացաւ, այնժամ

Անագորոյն է, թշնամի դաժան:
Նեղւում է հողը ցաւերից հանուր,
Դէմքը խաղաղ է, բայց սիրտն է շէկ հուր,
Ու երբ բացել է փորձում սիրտը իր,
Ահաբեկւում են մարդիկ ու երկիր,
Տներ են փլւում, շէներ աւերւում,
Եւ սա մայր հողին երկար չի ներւում:
Չի շեղւում երկիրն իր ծիրից սակայն,
Պարզ է ներկան, եւ յստակ՝ ապագան,
Դարձեալ մարդիկ պինդ կառչած են հողին,
Կերակրող է նա ու տաք անկողին:

ՕԴԸ

Բնութեան այս տարրը չորրորդ
Լաւ յայտնի է, կոչւում է օդ,
Հող ու ջրի, կրակի հետ
Պիտանի է ու անհրաժեշտ:
Վար երկիրն է, վեր՝ երկինքը,
Նրանց միջեւ՝ օդը ինքը,
Ոչ քաշ ունի, ոչ էլ՝ կշիռ,
Աշնանն է մեղմ, գարնանն՝ արբշիռ,
Ձմրանը՝ թաց, ամրանը՝ չոր,
Տօթ անապատ, ծարաւ, փոչոր,
Քամու համար միշտ խաղալիք,
Յաճախ՝ սամում գլուխգալիք,
Փոփոխական, երակ-երակ,
Ինքը՝ թեթեւ, սիրտը՝ բարակ,
Խաղում է թաց ամպերի տակ
Արցունքի հետ՝ ջինջ ու յստակ,
Սարից իջնում դաշտերը կից,
Խեղդւում այնտեղ ծուխ ու մխից:
Ամէնուր է եւ ամէն տեղ,
Մերթ առողջ է ու մերթ էլ՝ խեղ,
Անգլուխ է ու առանց ոտ,
Անձայն, անգոյն, անբոյր, անհոտ,
Անծայր, անափ եւ առանց հուն,
Տարածուած եւ անբոյն, անտուն,
Ամէնքի դէմ անքէն ու բաց,
Ոչ իր կամօք ապականուած,
Բնութեան այս տարրը չորրորդ,
Որ յայտնի է, կոչւում է օդ:
Եւ թռչուններ, եւ քերթողներ,
Որ ամէնուր ձգում են վեր,
(Վերը լոյս կայ, եւ կան ասպղեր,
Որտեղ ասպղեր, այնտեղ էլ՝ սէր),
Յարթմնի եւ նոյնքան ի քուն,
Անուրջներ են փայլում թաքուն,
Ճախրում թեւով երազների
Հեռու եւ մօտ աշխարհների,
Տեղ ունեն տաք նրա գրկում,
Ցնորաշատ այն երկնքում,
Որ թեւեր է տալիս հոգուն
Ու կարիք է սրտի հոգում...
Հողը, ջուրը, կրակն իր քոյր,
Կամ շատ սառն են, կամ հողաբոյր,
Ողջակիզում պահանջող հուր,
Օդը որտե՞ղ... եւ նրանք ո՞ւր...
Չորս տարրերից օդն է լոկ ջեր,
Նա ելնում է ներքեւից վեր,
Դէպի ասպղունք՝ լուսեղ, պայծառ,
Թէեւ սառը, սակայն՝ անճառ,
Իսկ երկնքի ներքոյ կապոյտ
Արտեր կան եւ հաւքեր արտոյտ,
Ուր մնում է օդը թեթեւ՝
Երկնքի եւ երկրի միջեւ:

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

ԲԱՌԵՐՍ ՄՏԵՐԻՄ

Կան բառեր, որոնք կ՚ապրեցնեն
Եւ անոնք անմեղ բառեր են
Ջերմութիւն բառը եւ բառը վստահութիւն
Արդարութեան սէրը եւ բառը ազնուութիւն
Եւ կարգ մը անուններ ծաղիկներու
Կարգ մը անուններ միրգերու
Բառը քաջութիւն եւ բառը գտնել
Եւ բառը եղբայր եւ բառը ընկեր
Եւ կարգ մը անուններ երկրի եւ գիւղերու
Եւ կարգ մը անուններ կիներու եւ բարեկամներու:

ԲԱՌԵՐ, ՈՐՈՆՔ Կ՚ԱՊՐԵՑՆԵՆ, ՓՈԼ ԷԼԻՈՒԱՐ,
(ֆրանսացի բանաստեղծ) (1895-1952)

Եթէ բառերը չըլլային
Չյուշէին գաղտնիքներ
Սօսիի եղրեւանիի ծիրանի բալի
Անասելի թրթռացումներ
Եթէ խօսքս անոնցմով չիւսուէր
Խօսք երազի ցաւի սիրոյ
Եթէ անոնք չըլլային ի՛մ բառերս
Ոչ փոխ առնուած անհարազատ
Կապկուած սպասպտիր
Ինծի հասած չըլլային կտակի հրաշքով
Լոյսի հրաշիւք իմն
Վարազի վազքով
Տիեզերքի թիւ-թուական չունեցող
Հին եւ միշտ նոր թաւալումներու
Կրակէ ալիքներէ անցած
Ինչպէ՛ս ջուրի ժամանակի
Կամ երազի պէս անցնող աղջկան
Աչքերու մէջն հայելիներուն
Իմ պապկերս պիտի խօսէր
Որ չըլլամ բնութեան տարր
Ինչպէս տարրը ապտերու
Որ ժամանակ չ՚ապրիր
Չունի առաջ ներկայ եւ գալիք...
Մեհենական տառ ու բառ
Մագաղաթի վրայ բառեր
Թոթովող, գոռացող
Բառեր երգուող
Բառեր աշուղի լար
Բառեր պապարագի
Քշոցի թրթիռ
Խունկի գուլայ
Բառեր հուրի սուրի խոցի
Բառեր պարտութեան եւ յաղթանակի
Երգեհոնէն տարածուող
Շեփորէն թունդ հեռու գացող
Սրինգէն հօտաղի սէր պատմող
Բառեր հայու հայ բառեր
Սարէ սար ձայնուած
Շրեմարան անանց ժամանակի
Անցեալի եւ գալիքի
Շշունջ ներկայի
Ժանեակ թափանցիկ
Հորիզոնի օրերու
Տիկնայք փափկասուն

Արի արանց
Կռունկ ուսպի կու գաս
Վարդահեղեղ արշալոյս
Բառեր բուրվառ խորհուրդներու
Ծնծղաներ երգեցիկ
Դրան արքենի Վարուժանի
Խորհուրդին եմ ծնրադիր
Մեծարենցին ունկնդիր
Ընդ եղէգան Խորենացիի
Ծոթրիններու բոյրին մէջ կապարը դէզին
Ընկալ քաղցրութեամբ Նարեկի
Վահագն ծնող
Ծուռ Դաւիթ եւ Վարուժան
Եթէ բառերս չըլլային
Հոգիս կ'ըլլար հովերուն տրուած
Տերեւ գօս եւ անկենդան...
- Վերլէն խօսած է Սիպիլի լեզուով...-
Եթէ բառերս չըլլային
Կ'ըլլայի խլեակ եւ մուրացիկ
Մուրացածոյ տխրութեամբ
Ուրիշի դրան սողնիսող տզրուկ
Ուրիշի արիւնով կեանքի նեխ
Ես եմ բառերս
Բառերս ես եմ
Ընդ եղէգան փող բոց ելանէր
Հուր բիւրեղացման եւ կեանքի...
Եթէ բառերս չըլլային...
Եթէ չըլլան բառերս...
Եթէ չըլլան բառերը հայ
Հայոց շրթներուն
Արարատը կ'ընկղմի կ'ընկղմենք
Ընդերքի ովկիանին մէջ լաւայի...
Եւ Հայկը Բէլի դէմ
Նոր կը պարտուի...

13 Յուլիս 2015 - Պիքֆայա, Լիբանան

ԽԱՉԻԿ ՏԷՏԷԵԱՆ

ԴՈՒՆ ԳԻՏԵՍ

Ես նման եմ շունին յօշոտուած,
Փողոցի մայթեզրին նետուած...

Ձիս տապալեցին օրերը որ չբաժնեցիր,
Սեղանիս թթուած գինիին նման,
Հիմա կը նայիմ անոնց հառաչանքով,
Ամէն գիշեր, երբ օրացոյցիս թերթերը՝
Վարդի մաշած փերթին նման թափին վար,
Կ'ողբամ մթնշաղները որ սուզուեցան հոգիիս մէջ,
Ո՛չ իսկ կայծ մը դրոշմելով անոր խորքին:
Ես հաւատարիմ մնացի հոգիիս ձայնին,
Որ թրթռաց վերջին համբոյրիդ տաք դրոշմով...

Ես նման եմ շունին հաւատարիմ,
Այն ժամանակի օրէնքով՝
Որ գնաց անդարձ, ա՛լ չկայ հետքն անոր՝
Արհեստական այս օրերուն:

Հիմա, երբ կը նայիս վերերէն, չեմ գիտեր ի՞նչ տեսքով,
Գիտես արդէն թէ լռութիւնդ մահաքունս էր.
Իսկ այդ ո՞ր շան տեսակին պիտի բաղդատես իմ տեսակը
Ցիմար ու քոսոտ, որ դեռ կ'որոնէ իր երբեմնի տէրը:

Ես այդ քոսոտ շունն եմ յիրաւի,
Որ կը թափառի փողոցները, գլխահակ,
Մարդոց ծաղրն ու ծիծաղը իր ականջին:

Մնաս բարովի ե՞րգն է միթէ այս տխուր մեղեդին,
Թէ՞ փսփսուքն է ապտղերուն,
Լուսամուտէն ներս սողոսկած:

Ես լքուած շունն եմ՝ անտէր այս ժամանակի:

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ՀԻՆԳ ՆԱՄԱԿՆԵՐ ԹԷՈԴԻԿԷՆ

23էն 24 Մայիս 1928-ի լուսցող գիշերը, հայ բանի անխոնջ սպասաւորը՝ Թէոդիկը (Թէոդորոս Լապճինճեան, 1873-1928), իր մահկանացուն կը կնքէր փարիզեան իր խուցին մէջ: Իր մահախօսականին մէջ, Բաբգէն եպս. Կիւլէսէրեան կը գրէր. «Անվհատ պրպտում եւ հետապնդում, անդուլ պարապմունք, տքնաջան վաստակ եւ զրկանք,- այս եղաւ իր կեանքին վերջին փուլը, մինչեւ որ փուլ եկաւ ինքն ալ, իր տքնութիւններուն մէջ, 1929-ի «Տարեցոյց»ին վրայ աչքի լոյս թափած ատեն»[1]: Երեսնամեակ մը ետք մեծանուն դերասան Վահրամ Փափազեան կը յուշագրէր. «Երբ 32-ին Փարիզ այցելեցի, կարեկից սրտերը պատմեցին ինձ նրա վախճանը: ... Մի առաւօտ էլ գտել էին նրան ցուրտ յատակի վրայ գլորուած՝ անգարթուն քնով քնած»[2]:

«Հայ բանի սպասաւոր»: Կաղապարատիպ դարձած այս բացատրութիւնը իր կաղապարը կը ճաքճքէ, երբ ընթերցողը քիչ թէ շատ վերահասու է «բան»ին՝ խօսք ու գիրին հանդէպ Թէոդիկին պաշտամունքի հասած վերաբերմունքին:

Մահէն քանի մը ամիս առաջ, անոր ողջութեան լոյս տեսած վերջին՝ 1928-ի հատորին առիթով, «Սիոն» ամսագիրը գրած էր. «Այլեւս «տարեցոյց» մը չէ այս գործը, այլ ամբար մը չարաչար յոգնութիւններու եւ անքուն պրպտումներու արդիւնքներուն: Իրական զրկանք մըն է զայն չունենալը»[3]:

Արդարեւ, ուսումնասիրութեան աշխարհը կը կարօտի թէ՛ նախնական տուեալները քով-քովի բերող աշխատողին, թէ՛ զանոնք ճաշակով դասաւորողին, թէ՛ ամբողջութիւնը վերլուծող գիտնականին: Անհրաժեշտ է արժանին մատուցանել ու մատնանշել, որ աշխատող ու դասաւորող Թէոդիկը գիտնականի բարձունքներէն հեռու կը գտնուէր: Բնական է, որ իր տարեցոյցին աւելի քան 8 հազար էջերը չէին կրնար գրականութեան, գեղարուեստի ու գիտելիքներու անվրէպ շտեմարան մը ըլլալ, ինչպէս կրնայ նշմարել, յատկապէս, գրականութեան այսօրուան ընթերցողն ու հետազօտողը: Խիստ քննադատներ չեն պակսած, ինչպէս Կոստան Զարեանը, որ 1930-ական թուականներուն ապրելով Թէոդիկի երբեմնի հանգրուաններէն մէ-

կուն՝ Գորֆուի մէջ, Համասպեղին հասցէագրուած նամակի մը մէջ անցողակի կ'ոգեկոչէր զայն որպէս «գրականութեան վաշխառու, որին պոլսահայերը մեծ ազգային հերոսի վերածեցին»[4], կամ Յակոբ Օշականը, որ Թէոդիկը որակած է «մեր գրականութեան այդ ունայնամիտ, չըսելու համար չարաշուք, դայեակը, դռնապանը (ֆրանսացիներուն concierge-ը)»[5]: Հայ խմբագիրի երերուն կեանքը ապրած Թէոդիկը, այսուհանդերձ, որոշ ճաշակ ցուցաբերող հրատարակիչ մըն էր, որ յաճախ լեզուի ու գիտութեան անյայտ տեղերէ երեւան կը բերէր հազուագիւտ տեղեկութիւններ եւ միաժամանակ էջ կը բանար մշակոյթի ամենապարբեր ներկայացուցիչներուն՝ ջանալով ճոխացնել «ամէնուն» աշխարհը: Անոր քրոջորդին՝ Շահան Շահնուրը, որքան գուրգուրոտ, նոյնքան եւ արդար գնահատականը տուած էր անոր տեղին ու դերին.

«Երկու թուականներ՝ 1907-1967, մեզի կը յիշեցնեն, թէ վաթսուն տարիներ անցած են այն օրէն ի վեր, երբ լոյս կը տեսնէր «Ամէնուն Տարեցոյցը», այդ պզտիկ համայնագիտարանը, որ կորուստէ պիտի փրկէր հայ մշակոյթի անթիւ նշխարներ եւ վաւերաթուղթեր, որ հայ մտքին խօսքը լսելի պիտի դարձնէր, աւելի քան որեւէ հրատարակութիւն, մեր ամէնէն մութ գաղութներուն մէջ իսկ, որ աշխատութեան պիտի մղէր մեր գրիչները զանոնք խրախուսելով եւ հմայելով, եւ պատիւի հարց պիտի դարձնէր խնամեալ եւ ճաշակաւոր տպագրութեան անհրաժեշտութիւնը:

Եթէ եղերական կատակերգութիւն մըն է ազգի մը կեանքը (եւ ուրիշ ի՛նչ բան կրնայ ըլլալ) երկարաձիգ ներկայացումը կը վարեն ոչ միայն *վրդէթները* որ յայտագրին ճակատը կը փայլին, այլ նաեւ հոյլը անոնց որ կը գործեն լռելեա[յ]ն, բեմի առաջամասի կանթեղաշարէն հեռու: Այսպէս է, որ «Տարեցոյց»ի ամէն մէկ հատորը լայն բաժին կը յատկացնէր հայութեան համեստ եւ խոնարհ գործիչներուն, ի գին նոյնիսկ քմծիծաղ պատճառելու մեզմէ անոնց որ բարձրէն կը սաւառնին: Թէոդիկ բնազդաբար հասկցած էր խոնարհները, ինքն իսկ ըլլալով ժողովուրդի զաւակ եւ գրիչ մը՝ երկրորդական:

. . . Թէոդիկ պիտի ըլլար հայ մշակոյթի արժանայարգ դիակապուտը եւ քաջատեղեակ քսակահատը: Միշտ պէտք պիտի չունենար կղպանք կոտրելու եւ գրպան խուզարկելու: Իրենց գերեզմանէն դուրս պիտի գային էֆէնտի եւ ֆեդայի, ամիրա եւ կաթողիկոս, անձնապէս իրեն յանձնելու համար նամակ մը կամ լուսանկար մը, բոլորն ալ հմայուած Թէոդիկի այն երկիւղածութենէն եւ գուրգուրանքէն, որով մեր տարեցուցագիրը կը ծառայէր մշակոյթին: Անտիպի մը գիւտը բաւ էր, որ Թէոդիկ ազատ ասպարէզ տայ իր մանկունակ խանդավառութեան, որուն պսակումը կ'ըլլար որովայնապարը: Այդ պահերուն անկարելի բան էր զինքը չսիրել: Կը հանգրիճէր իր լայնածաւալ գիշերանոցը եւ կը պարէր իմ դէմ»[6]:

2007-2011-ին Թէոդիկի տարեցոյցը հատոր առ հատոր վերատպումի կ'ենթարկուէր Հալէպի մէջ՝ «Կիլիկիա» հրատարակչատան տնօրէն Մաթիկ Էպլիղաթեանի նախաձեռնութեամբ, բանասէր Լեւոն Շառոյեանի աշխատասիրութեամբ եւ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեան հովանաւորութեամբ: Այս վերատպումը, որ դժբախտաբար կիսատ մնացած է Սուրիոյ քաղաքացիական պատերազմի թոհուբոհին մէջ (լոյս տեսած են միայն 1907-1925-ի հատորները), կարեւոր նպաստ մըն էր ամէն խաւի ընթերցողներու: Պարզ ընթերցողը կրկին կը հաղորդուէր Թէոդիկի գործին տարողութեան, իսկ բանասէրը յարգանքով կը նայէր անոր: «Ամէնուն տարեցոյց»ի հրատարակութիւնը, աւելի կամ պակաս մէկ դարու հե-

ռուներէն դիպուած, այլաշխարհային իրագործում կը թուի, իսկ Թէոդիկը՝ պարաշխարհիկ «բան»ուոր մը, որ մեղուաջան կերպով գուեալներ հաւաքած է՝ ընթերցողին մատուցելու նպատակով:

Վ. Փափազեանը գեղեցիկ ու զգացուած գողերով բնորոշած է Թէոդիկն ու իր գործը, եւ կ'արժէ ընդարձակ մէջբերում մը կատարել անոր յուշագրութենէն.

«Այս մէկը թէեւ սեփական կեանք չունեցաւ, բայց վեղարազուրկ միանձնականը եղաւ իր իսկ ստեղծած դաւանանքի, որի ճանապարհին ոչինչ չտեսաւ իր իտէալից զատ, եւ տարիներ ամբողջ իր նպատակի առջեւ ծնրադիր, թէեւ օր չտեսաւ իր չարքաշ կեանքում, բայց բազմայուշ եւ ամենատես գրչի շնորհիւ իր դարաշրջանը ապրեցնելով՝ ինքը ապրեց... համոզուած եմ, չցանկանալով այդ: Գուցէ ոչ ոք մեզանում իր ժամանակի պատմագիրը չի եղել, որքան նա, եւ ոչ ոք ուրիշին պատմելիս այնքան հարազատ ինքնիրեն չի պատմել:

Թէոդիկը խրոնիկագրի իր մեծ համբաւը բեհեզ պատմուճանի պէս ուսերին պահելու փոխարէն, ինչպէս շատերը, անարգ քուրձի նման եփեւը թողեց եւ այս աշխարհից մերկ գնաց, ինչպէս եկաւ մերկ:

Շատերը այս լոյս դէմքերի կարաւանից, աշխարհի մեղքը շալակած եւ կամ կենսապաշտ իշխանի նման, արուեստի աշխարհի շեմքից ներս մտան, բայց Թէոդիկը «անարծաթ բժշկի» նման, ուրիշի վէրքը միայն դարմանեց իր ծեր հասակում եւ օտարութեան մէջ հանգանակութեամբ թաղուելու պատիւը միայն իր հեպը տարաւ:

Եւ ժառանգութիւն թողեց գրածը գալիքին: Ամբողջ մի համայնք, որի նշխարներն իսկ որոնելը ի զուր կը լինէր արեան անյապակ ծովում, կենդանի են այսօր եւ ապրում են մեր զարմացած աչքերի համար միշտ տեսանելի, Թէոդիկի ամենատես աչքի շնորհիւ... եւ նրա գրչի, անշուշտ:

Ո՞ւր կը լինէին նրանք կամ ո՞վ կարող էր հիմա թղթատել արիւնոտ մատեանը կենսուրախ, բեղուն մի միջավայրի, հարազատ մասը այսօրուայ,- եւ ինչո՞ւ միայն այսօրուայ,- հայութեան, եթէ ժամանակն ու նրա խորհուրդը քննող այդ մարդը՝ Թէոդիկը, իր բեղուն կեանքը չդնէր պրպտելու համար այն, ինչ Եղեռնը փորձել էր ծածկել անյուշ խաւարի անթափանց քօղով: Եւ այդ արեան պատմութիւնը պարտք դրեց նրա խղճին՝ պատմել անլուր կատարուածը վաղուայ, երբեմն գբաղուած, երբեմն էլ անտարբեր ականջին, եւ Թէոդիկը լսեց այդ պատգամը եւ լսեց այնպէս եւ այնքան, որ ուրիշ ոչինչ չլսեց, մինչեւ որ մեռաւ»[7]:

Սպորեւ կը ներկայացնենք Թէոդիկի կողմէ 1926-ին Նիկոսիայէն գրուած ու իր մտերիմ բարեկամ Սարգիս Սաքայեանին ուղղուած նամակներու փունջ մը: Թէոդիկ, պարագրութեան մէջ ամբողջովին առանձին մնացած (կինը՝ Արշակուհի Թէոդիկ, 46 տարեկանին մահացած էր 1921-ին, իսկ երիտասարդ զաւակը՝ Վահագն, այդ տարիներուն Միացեալ Նահանգներ կը գտնուէր), միջոց մը հաշուապահի աշխատանք գտած էր Կիպրոսի Մելգոնեան կրթական հիմնարկութեան մէջ, եւ ամէնօրեայ ապրուստը հոգալու կողքին, գիշերն ու ցերեկը իրար խառնած կը շարունակէր տքնիլ՝ իր տարեցոյցը լոյս աշխարհ բերելու համար: Յիշեալ նամակները կը բացայայտեն այդ օրերուն ու ժամերուն մտերիմ խոստովանութիւններու շարք մը՝ ծննդավայրին կարօտով համեմուած ու Պոլսոյ հայավարին գունագեղ ներկայութեամբ օժտուած լեզուով պատմուած:

Այս նամակներէն երեքին լուսապատճէնները գտած ենք Նիւ Եորքի Ամերիկայի հայոց արեւելեան թեմին կից «Գրիգոր եւ Գլարա Զօհրապ» տեղեկատուական կեդրոնին արխիւներուն մէջ, ըստ երեւոյ-

թին, Սաքայեանի կողմէ մէկկտեղուած ձեռագիրներ խմբող թղթակալի մը մէջ: Բնագիրներուն ճակատագիրը անյայտ է: Միւս երկու նամակները, պատահականութեան բերումով (լման հաւաքածոն տեսնելու պատեհութիւնը չենք ունեցած), գտած ենք էջերուն մէջ Բագարատ Թեւեանի «Երջանիկ» տարեգիրքին, որ սկզբնապէս կը կոչուէր «Երջանիկին տարեգիրքը»: Անկարելի չէ, որ թղթակալին երեք ձեռագիրներն ալ լոյս տեսած ըլլան մամուլին մէջ՝ մասամբ կամ ամբողջութեամբ: Ամէն պարագայի, թէ՛ տպագիր, եւ թէ՛ ցարդ անտիպ մնացած նամակները կը հրատարակենք նոյնութեամբ՝ յարգելով հեղինակին ինքնուրոյն լեզուն եւ ուղղագրութիւնը, եւ զանոնք օժտելով մանրակրկիտ ծանօթագրութիւններով, որոնք կրնան աւելի լուսաւորել Թէոդիկի կերպարն ու գործունէութիւնը:

Ա.[8]

10 Փետրվար 1926 Նիկոսիա

Սիրելիդ իմ Սերչօ

Ի ձեռին ունիմ յունվ[ար] 21 թուակիրդ: Անկեղծօրէն անուշ տողերդ որոնք ալիքի պէս սրտիդ ծովէն փրթելով մինչեւ այս ափունքդ էիր ղրկած՝ պաղշկեցուցին հայրենաբաղձ հոգիս: «Ալիք»ի փոխաբերութիւնը միտքս ձգեց «ջուր»ը, եւ ջուրէն՝ մինչեւ «ջուրի պէս ծարաւնալ» շատ հեռու չէ:

... Վերջին ուղեւորութիւնս ի... «վերինն Երուսաղէմ» ըլլալը գիտնալովս հանդերձ, կը զմայլիմ բարի, ամենաբարի սրտիդ արտայայտութեանն ի լուր, որով իս ծննդավայրս կը կանչես: Եթէ պատահի որ Աստուած այդ ճիլվէն ուզէ ընել տառապողիս, գիտցիր որ քրոջս[9] տունը մտնելէս առաջ՝ գաւազանիս վրայ ճորճորալէն նախ քու սեմէդ ներս պիտի մտնամ եւ պարտէզիդ դուռը բանալ տալով՝ պիտի նստիմ աթոռակի մը վրայ զքեզ դէմս առած, շնչելու համար պարտիզակիդ բուրումնաւէտութիւնը, խառնուած ուրիշ բուրումնաւէտութեան մը՝ զոր մայրիկդ պիտի ղրկէ ռունգերուս... խոհանոցէն, տապակմամբը խարակաձուկին, իբր տաք տաք աղանդեր կուլ տալիք «մատնոցիկ»իս: ... Կեանքս, հոս, ուրիշներու համար որքան տանելի, նոյնը չէ ինձ համար, վասնզի մինաւորիմ եմ երազներուս ու տառապանքներուս հետ: Արզուս[10] ան է որ գամ հոդ հանգչիմ հօրս մօրս գերեզմաններուն առընթեր եւ դո՛ւն ըլլաս իմ վրաս չէ՛ թէ խօսող այլ լացող հոնգուր հոնգուր, իմին անուշիկ, բարի եւ ալլըմաններո՛ւն ալլըմանը[11] Սէրչօս: Հա՞ եավրուս[12]:

ԹԷՈԴԻԿ

Բ.

Նիկոսիա 4.5.'26

Սիրելիդ իմ Սէրչօ.

Կը հասնիմ 21 ապրիլ վերջին թուակիրս[13]: -- Սաչափն ըսեմ որ ղրկած թուականներով ցանկդ ինձի շատ օգտակար եղաւ. թէեւ ինչ ինչ սխալներ կային (այսինքն տեսածդ ընդօրինակած էիր), նորէն շատ յարգի անցաւ սակայն. օր մըն եմ յոգներ՝ անոնց մէջը մտնելով եւ սրուգելով մի ըստ միոջէ: Ապրի՛ս: -- Չմոռնաս սա Փէշտիմալճեանի[14] ոտանաւորին մէջը յիշուած արեւել[եան] եղանակներու անուանց բացատրականն ալ, կարելի եղածին չափ ամփոփ եւ մեկին: Անհամբեր կ'սպասեմ: -- Գնա՛ Ս[ա]րգ[իս] Յակոբեան գրավաճառին[15] եւ ինձի համար գնէ՛ (դրամը վճարելով) հետեւեալ գրքոյկը՝ զոր կը քաղեմ իր՝ ինձի ղրկած գրացուցակէն.- Գիւտերու պատմութիւն, էջ 72, Վիեննա, 1874, գին 35 ղր[ու]շ[16]: Այս գրքոյկը շուտ ինձի հասցուր, վրան

"Imprimé"[17] արձանագրելով: Ղրկողչէքով 40 ղր[ու]շ փոխարժէքը կր հաշուակցինք... 1927ի հատորիս հետ որ 'ի տպագրութեան է 'ի Փարիզ (Հրաչ Տէր-Ներսէսեան)[18]: -- Կեանքս մի՛ հարցներ, ես ալ չեմ գիտեր թէ ի՞նչպէս կ'ապրիմ կոր, կամ աւելի ճիշդր՝ կ'ապրի՞մ կոր: Ո՛չ կերածս գիտեմ, ոչ խմածս. երբ ճաշը խուցս բերէ սպասաւորը կր մոռնամ, ցորեկը ճանճերը վրան կր նստին, գիշերն ալ ելեկտր[ական] կտուցին լոյսով՝ լուսաթիթեռներ, ու պաղելէն վերջ արտորնօք կր լպռտեմ, այն յիմար անձկութեամբ որ՝ ավարա կ'ըլլամ[19] գործէս: -- Հեւիհեւ աշխատա՛նք, ալ ա՛յսչափ կ'ըլլայ. այլապէս՝ խաղքին տուած եմ. պէտք է ձեռագիր հասցնել անկաժէ[20] եղած գործիս եւ օրին հրապարակ հանել: 2 ամիս չարաչար տքնելէ վերջ՝ նոր աւարտեցի պատկ[առելի] մէկ ուսումնասիրութիւնս[21]՝ որուն նիւթն է [տե՛ս 1926ի հատորիս 688րդ էջին պատկերին տակի ծանօթագրութիւնը][22]: Հոգիս բերանս եկաւ, բայց յաջողեցայ. գոնէ գիտո՞ւն ըլլամ. մաշեցայ այդ ճիւղին մէջ այլեւ կարծեմ ճերմակերես դուրս ելայ անկէ:

-- Սէրչօ, Պիմէն[23] կ'ըսէ թէ 7 հատ անվաճառ կր մնան քովը, եւ փոխարժէքը չուզեր տալ (1926): Լաւ, իր ապսպրա՛նքն էր որ ղրկեցի: Եթէ չհաճի տալ (Հերմինէին[24] քեզի յանձնելիք մէկ նամակս ալ իրեն կու տաս, բաց) փոխարժէքը, այդ գրքերս բարի եղիր քրոջս տունը փոխադրելու: Հաշիւի մէջ քեզի պէս եմ քիչ մը, կտրուկ, մաքուր:

-- Յետոյ, կ'ըսէ թէ 1913[ը] չէ գտեր (փոխանակութիւն է այս 1926ի հատորովս). թող գտնէ՛ եւ շուտ յանձնէ քեզի, որ նորէն քրոջս տանիս: -- Պ[ա]տ[ա]խ[ա]նիդ ակնդէտ՝ կր ղրկեմ նորէն պօլ պօլ[25] բարեւներ վալիտէիդ, ավռատիդ ու էվլատիդ[26], իսկ քեզի՝ կարօտ անսահման եւ համբոյր:

Քոյդ ԹԷՈԴԻԿ

Պղատոնին[27] մօրը իմ կողմէս ալ ցաւակցութ[իւն] յայտնէիր. շատ ցաւ զգացի անոր մահուամբ:

Գ.[28]

Նիկոսիա, '23 Յունիս 1926

Սիրելիդ իմ Սէրչօ, ի ձեռին ունիմ կարմիր մելանով 4 էջ գրութիւնդ: Ամէն անգամ որ քենէ նամակ ստանամ, իսկոյն կր փոխադրուիմ ծննդավայրս, մինչ դուն նոյն տպաւորութիւնը չես կրնար կրել՝ կղզիիդ դիրքը անծանօթ ըլլալով քեզի: Զարմանալի զուգադիպութեամբ մը, երբ պոլսահայ թերթեր գուժեր էին ողբացեալ Լեւոն Սեմերճեանի[29] մահը, զքեզ միտ բերի, իբր անտեղիտալի հոգեկան պար-

պականութիւն՝ վճարելու համար հարկդ անոր դագաղին, սրտառուչ խօսքերով[30]: Ու որեր ալ ես, որուն համար հոգիս ուրախ է, եթէ կարելի է մահուան առթիւ հոգեկան ուրախութեան խօսք բանալ: Մե՛ղք որ հոդ չէի՝ իմ արցունքներս ալ խառնելու համար ունկնդիրներուդ արցունքներուն, քանզի այդ արցունքներր մեզիպէսներուն հարկն էր միայն ողբացեալին անշունչ մարմինին վճարուած: Յաղթանակդ կր շնորհաւորեմ: Այսպէս, Սէրչօս, փոխ առած ղլլալու համար Գ[րիգոր] Օտեանի[31] խօսքր՝ Հիւկոյի[32] մահուան առթիւ, մեր Սկիւտարի արեւն ալ մարր մտաւ, ու մենք մնացինք փողոցի լապտերներուն լոյսովր[33]: Աստուած լուսաւորած է պատուական հայրենակցիս հոգին, աղերսն առ Երկնաւոր աւելորդ յոգնութիւն մրն է[34]:

Կեանքս՝ նշանախեց մր իսկ չէ փոխուած. կր գրեմ թիւ ու հաշիւ՝ առտուներր, եւ այնուհետեւ 1927ի[35] հատորիս պատրաստութեանր կր տքնիմ տիւ ու գիշեր, շատ ատեն գիշերուան երկուքներր յօրանջելով եւ ակնոցիս ապակիներուն տակէն արցունքներս սրբելով: Երբեմն միտքս կու գայ Սկիւտարր, մանաւանդ լայնանիստ տանդ նախամուտ սրահր՝ որուն միւս դուռր երեւակայութեամբս կր բանամ, շնչելու համար սա գարունին փթթող շահպրակներր բազմաթերթեան...: Երազ օրեր, կեանքր ցորեկն ալ երազ չէ՞ միթէ պանդուխտին համար:

Քոյդ Թէոդիկ

Դ.

Նիկոսիա, 5 Հոկտ[եմբեր] 1926
Théotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Սէ՛ր իմ Սէրչօ,

Ի ձեռին ունիմ 27 օգոստ[ոս] թուակիր ափիկ մր թուղթդ՝ զոր ով գիտէ ի՛նչ տագնապի մէջ մրոտեր էիր, դատելով ո՛չ միայն կարճութենէն, այլ եւ մոռ, կարմիր եւ մոռ-կարմիր մելանէն: Քիչ մր ուշացուցած եղայ պատասխանս, անո՛ր համար որ մէկ շաբաթէ ի վեր հեւիհեւ պատրաստելու եղեւէ էի 50 էջի չափ նոր ձեռագիր՝ [19]27ի հատորիս վերջընթեր եւ վերջին պրակներուն ի սպաս: Ու դուն մօտէն գիտես թէ ի՛նչ ըսել է 8 փունթօ ծայրէ ծայր շարուած հատոր մր լեցնելր, հատո՛ր մր՝ որուն հանգի՛ստ կէսր մատներէս (ի՞նչ կ'ըսեմ, ողեղէս) է ելած, ու մնացեալն ալ մեծ մասամբ նորէն թաթիկէս է ելած, յոկումի, հպանցքի եւ նորէն մաքուրի քաշելու տաղտուկներով: Հիմա կաթէն կտրած եմ երախաս, «թուղթէ 21րդ զաւակս»[36]՝ որ կաթի տեղ՝ պէյնս[37], կէօզիմիւն նուրու[38] եւ քունս ծծեց: Ամիսէ մր երբ... գիրկդ առնես զայն, իր պալապան[39] տեսքր թող յիշեցնէ քեզի թէ զինք երկնոր իր առողջութի՛ւնր գործածեց: Հիմա միտքէդ սա խօսքր պիտի կրկնես, գիտեմ. «Փա՛ռք քեզ Տէր, խալրսեցաւ Թէոդիկ»: Չէ՛, եավրում, չէ՛: Նորէն լծուած եմ գործի, [19]28ի հատորս կերպարանելու համար մէկ կողմէն. ո՞չ ապաքէն իմ թղթեղէն հոգեզաւակներս (այս բառի տառացի իմաստով) դատապարտուած են միամեայ կեանքե՛ր միայն բոլորելու: Եւ որպէս զի ազգատոհմին «ֆիրմա»ն չքէօրնայ[40], պէտք է դատեմ ցմահ: -- Հերուան պէս նորէն 2 օրինակ պիտի ուղարկեմ Տիրէ Տավա[41], առանց Պալեանի[42] երկտող մր ղրկելու եւ իրմէ դրամ ուզելու. իսկ քուկդ կ'սպանաս կա՛մ քուրիկէս եւ կամ Ս[ա]րգ[իս] Յակոբեանէ, 3 հատին փոխարժէքներն ալ վերջնոյն ցնծալով: -- Գանք կարեւորին: Հերմինր քեզի պիտի յանձնէ Պիմէնին ուղղեալ մէկ նամակս. կարդա՛ եւ գոցելով տա՛ր յանձնէ տիրոջր: Հերու այս մարդր 7 հատ եր տուաւ իբր







չծախուած. թող երթայ (խօսքը մէջերնիս) պատիժը քաշէ, [19]27ս ստանալու համար քեզի՛ կանխիկ ցնծալով եւ այնպէս ստանալով ուզածին չափ գիրք՝ քրոջս տէրոյէն[43]: Իսկ Ս[ա]րգ[իս] Յակոբեանի ալ կ'ըսես՝ թէ =30= հապ ամիսէ մը պիտի ստանայ ուղղակի Փարիզէն: Գինն ամէնուրեք 2 դոլար ըլլալով, 20% զեղչը կ'իյնայ եւ օրուան գնով ինձի դոլարի չէք միայն կը խաւրէ Ն[իւ] Եօրքի վրայ[44]: Պիմէնէն ընելիք գանձումներդ ալ քովդ կը պահես մէկ կողմէն, եւ երբ առեւտրոր դադրի, գոյացած գումարը Ն[իւ] Եօրքի վրայ չէքի մը վերածելով ինձ կ'ուղարկես: Այս եղբայրութիւնը կ'սպասեմ սիրելութենէդ: Սաչափն ալ ըսեմ որ, Փարիզ հրահանգեցի՝ ամէն շաբթու մաս մաս ուղարկել Պոլիս, աչքի զարնել չտալու համար[45]. թէեւ ոչինչ կը պարունակէ տարեցոյցս՝ որպէս մուզիրա[46] նիւթ:

Երմոգի[47] անհոգութիւն[ը] զիս չի զարմացներ: Կը ցաւիմ՝ իրեն վստահելու միամտութեանս վրայ: Մեր երկուքին մէնէ՛նտը[48] չկայ. գէշը հոն է որ երկուքս ալ մեր կեանքին մէջ առիթ շատ ունեցած ենք դէմերնիս ելլողը մեր անձին պէս նկատելու եւ տուժելու չարաչար: Բեն-է-բէ՝ խփէ: Նայէ՛ որ օձիքը չթողուս այլ եւս եւ անուշութեամբ փրցնես իրմէ արդար պահանջքս զոր հոտեցուց 3 1/2 տարիէ հետէ[49]: -- Այս առթիւ յիշեցի թէ «Գեղար[ուեստական]» բաժնի մէջ չկրցայ դնել իր յօդուածը, անոր յարակից ոտանաւորին մէջ յիշուած արեւել[եան] եղանակներու անուանց հարազատ մեկնութենէն զուրկ ըլլալուն[50]: Մտադիր եմ հասունցնել զայն՝ Արիստ[ակէս] ք[ա]հ[անայ] Հիսարլեանի[51] (որմէ առած էի արդէն այդ ոտանաւորը) դիմելով անգամ մը ալ: Առ այս՝ յարմարագոյն անձը դո՛ւն ես, Սէրչօս: Առարկես գուցէ թէ ժամանակ չունիս: Լաւ, նիւթը գիտես, նամակ մը գրէ՛ այժմէն՝ այս տէրտիրոջ ուղղեալ, եւ գոց պահարանով ձգէ Պիմէնի, ան կ'ստանայ հոնկէ: Պէտք է այժմէն ճարտարուորիլ, որ վաղը միւս օր սրխրի[52] չգանք:

Երբ Սէրչօն կը ցնցուի Մրմրի[53] մահուամբ, հապա իր Թէոդի՞կն ի՛նչ ըլլար, անոր չափ աղցառիթ եւ Թէոդիկի տարեկից ու սրտակից Շամտանի՛[54] ալ մահուանն ի լուր[55]: Այս 2 մահերը շատ գէշ ազդեցին Թէոդիկիդ վրայ՝ որ տակաւին իր ղարիբի կեանքը քաշկռտելու վրայ է օտար հորիզոնի տակ: Ո՞ղքան ճիշտ կը գտնեմ հեղինակի մը այն մտածումը թէ «մինչեւ որ մահը չտանի մեր սիրելին, մահուան ի՛նչ ըլլալը չենք գիտնար».

իմաստը այս է, բայց ո՛չ բառ առ բառ: [19]27ի մահագրութեանս մէջ խպացուցի գՄրմըրեան՝ իր ներքին երեսակներով ալ. ուշի ուշով կարդա՛ գայն...[56]: Եթէ Զարմայր ք[ա]հ[ա]ն[ա]յէն[57] փոխ ուգես հանգուցելոյն վերջին լուսանկարը (գոր հրատարակեց իր «Հայ խօսնակ»ին[58] մէջ)[59], գոհ կը մնամ էւելօք[60]. այժմէն կաղապարը պատրաստել կու տամ եւ կը վերադարձնեմ:

Տարեցոյցս (1927) իր սկիզբն ունի նորէն կարծիքներ: Քու կարծիքդ ալ՝ ամփոփած՝ դրեր էի: Հրաչը[61] կ'ուզե՞ս որ քուկինդ գեղչէ եւ իր կողմէ նոյնքան տող աւելցնէ իր սպորագրու[թեամ]ք եւ գայն դնէ[62]: Ինչ որ է: -- Ահա քեզի, Սէրչօս, շատ մը տարապա[ր]հակներ: Շալկըռտէ՛ եթէ մեղքերդ քիչ չէին ինքնին: Քոյդ կարօտով՝ ԹԷՈԴԻԿ:

Մտածումներուդ[63] փնջիկը եղա՛ւ[64]:

Մօրդ ու կնոջդ սիրալիր բարեւներ. պգտիկներուդ այտիկները կը համբուրեմ, նաեւ Վաղինակ[65] աղայի[66]:

Ե.

Նիկոսիա, 20-11-26

Théotig, B.P. 295
Nicosia (Cyprus)

Սիրելիդ իմ Սէրչօ,

Կը հասպատեմ Նոյ[եմբեր] 9 վերջին նամակս[67]: Ի ձեռին ունիմ անթուակիր նամակդ՝ որուն թուղթն էր Հերմեսի[68] ճերմակ պահարանին 2 երեսները: Այդ գրութեանդ վերջին բառը մկրատելով՝ ահա կը փակցնեմ հոս: Լուսը փախած են [sic] աչքերուս, ուստի եւ չկրցի կարդալ գայն, ես որ կը յաւակնէի թէ ամէն griffonageի[69] տակէն կրնային ելլել...: Արդեօք «չարչարանքի՞դ» է. բայց բ. «չ»էն վերջ եկող ակռաները երբ համրեմ, կողոմանքս ջուրը կ'իյնայ[70]: -- Տ[էր] Զարմայրի[71] 1927ի տարեցոյցս ղրկած եմ արդէն, ինչպէս նախորդ տարիներունն ալ. այնպէս որ եթէ չաջողի ուգած պատկերս հայթայթել, չկամութեան պիտի վերագրեմ իր արարքը, մանաւանդ որ փոխ է ուգածս[72]: -- Առի՞ր Մնակեանի[73] լուսանկարդ Հերմինէէն[74]: -- Երմոգ... մե՛ղք իր պատմական անունին (Hermogène) որով փայլած են հռետոր մը[75] (180 թ[ուական]), վարպետ գուսան մը[76] (Օգոստոսի[77] ժամանակ), օրէնսգէտ մը[78] (Ոնորիոսի[79] եւ Թէոդոս Բ.ի[80] ժամանակ): Այս տողերս կ'ուզեմ որ կարդաս իրեն անվերապահ եւ... վերջ տաս այլ եւս հեգապնդումիդ, քանի որ ուխտեր է պահանջքս ի մոռացօնս մատնել՝ ձգձգումի քաղաքականութեամբ: -- Սխա՛լ ըրիր «Պալենցի[81] քով՝ ափյափոյ թղթատելով այս տարուան հատոր»ս: Ափյափոյ թղթատումի մը տպաւորութեան տակ յայտնած կարծիքդ, ափսո՛ս, կշիռ չունի իմ աչքիս: -- Պալենց (Ս[ա]ղ[իս] Յ[ա]կ[ո]բե[ա]ն) ծանուցած էր որ Ալփասլանի[82] «Այգեկութք»ը[83] 30 ղր[ու]շ է. գնէ՛ հատ մը եւ ինձ ուղարկէ՛ շուտ: -- Երբ այս գրավաճառը Փարիզէն ուղղակի իրեն ղրկուած 30 հատ տարեցոյցս սպառէ եւ նորէն ուզէ, կրնաս քրոջս քովի սթօքէն[84] առնելով իր խնդրանքը գոհացնել: Փոխարժէքները քովդ կը պահես, ինչպէս եւ Զարդար[եան]ինները[85]: -- Այս վերջինս բաներ մը գրեր էր ինձի, եւ նորէն 30 հատի չափ կ'ուզէ ապառիկ ստանալ: Պատասխանս ներփակ է. կարդա՛, գոցէ՛ (շրթունքը խէժոտ չէ. շատ՝ պահարանին, լաւ գոցէ՛) եւ իրեն յանձնէ՛: Փոխարժէք՝ 4 օսմ[անեա]ն թուղթ, պակաս 20% գեղչ = 320 ղր[ու]շ: Դոլարի հետ գործ չես ունենար այլ եւս: -- Նախորդ նամակաս՝ ժամանակին քու ըրած քիւբիւռներուդ (թերթերէ)[86] մասին էի գրեր. մի՛ մոռնար, որքան ալ գբաղեալ ըլլաս:

Կեանքս երբեք չունի հոս հրապոյր: Աշնանացած ուղղափուշի կեանք մըն է վարածս: Ո՛չ կերածէս համ կ՚առնեմ, ո՛չ խմածէս եւ ոչ ալ խօսածէս ու լսածէս: Քաղքին հետ կապ՝ բնա՛ւ չունիմ. «Ճգնաւորս Անտոն[87], կապարելոց...»: Ո՛ւր պիտի յանգի այս անումէկ կենցաղին վերջին ճոթը: Բարեխօսէ՛ Ասպրնոուդ, եթէ սիրես, որ իս շուտ տանի դարձնէ Սկիւտար, անոր վերջալոյսներուն մէջ անցունելու համար պէգարած[88] կեանքիս վերջալոյսը: Սկսած եմ նորէն 1928ի հատորիս պատրաստութեան: Բայց ի՞նչ սիրտով, Ա[ստուա]ծ ողորմիին բանը, ցորչափ չունիմ շուրջբոլորս իս ներշնչող ո՛չ մէկ էակ ու տեսարան: Նոյեմ[բեր] 14ի «Արեւ»ին[89] մէջ (որու 4 էջերն ալ Ե[ռուանդ] Օտեանի[90] 40ին[91] յատկացուած էին)[92] ունիմ սրտէս բխած՝ քան թէ գրչէս՝ խօսքեր, Հայ Մորակին խորագրով[93]: Երանի՛ թէ կարենայիր այդ թիւը ձեռք ձգել ու կարդալ[94]: Անցեալ օր ալ «[Հայաստանի] Կոչնակ»ի[95] 1927ի յ[ու]նվ[ա]ր 1ի թիւին համար որսորդապատում մը գրեցի ու ղրկեցի[96]: Ա՛տ ալ իցիւ թէ կարդայիր, եւ վերջամասէն լաւագո՛յնս ըմբռնէիր հայրենաբաղձութեանս ուժգնութիւնը: Ե[ռուսա]ղ[է]մ «Սիօն»ը[97] պիտի վերսկսին եղեր. հրաւէր սպացայ: Ո՞ր մէկուն հասնիմ, Սէրչոս, կորնծած ըղեղովս: -- Կարօտի բարեւներ տանդ բոլոր անդամներուն եւ համբոյրներ այտերուդ:

Քոյդ՝ ԹԷՈԴԻԿ

---

(1) Բ.Ե., «Թէոդիկ», *Սիոն,* Յուլիս 1928, էջ 224:
(2) Վահրամ Փափազեան, *Սրտիս պարտքը,* Երեւան, 1959, էջ 125:
(3) Ք., «Տարեցոյցներ», *Սիոն,* Յունուար 1928, էջ 24:
(4) Վարդան Մատթէոսեան, «Կոստան Զարեանի նամակները Համաստեղին», *Բանբեր Երեւանի համալսարանի,* 2, 1996, էջ 152:
(5) Յակոբ Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան,* ութերորդ հատոր, Անթիլիաս, 1980, էջ 487:
(6) Շահան Շահնուր, *Բաց դռնմարը,* Փարիզ, 1971, էջ 84-85, 106:
(7) Փափազեան, *Սրտիս պարտքը,* էջ 120-123:
(8) «Անտիպ նամակներ մեր հին մտաւորականներէն», *Երջանիկ դարեգիրք,* 1940, էջ 162-163: Երկու պարբերութիւններուն միջեւ կախման կէտերու առկայութենէն կ՚ենթադրենք, որ բնագիրը ինչ-ինչ պատճառներով կրճատուած է:
(9) Թագուհի Լապճինճեան-Քէրէսթէճեան՝ Շահան Շահնուրի մայրը:
(10) Փափաքս (թրք.):
(11) Աննման (թրք.):
(12) Ջաւակս (թրք.):
(13) Այս նամակը մեզի հասած չէ:
(14) Գրիգոր Պատուելի Փէշտիմալճեան (1773-1837)՝ պոլսահայ գրագէտ:
(15) Մաքզիս Յակոբեան (՞-1938), պոլսահայ գրավաճառ, «Պալենց» գրատան սեփականատէրը 1923էն ետք:
(16) Այս գիրքը հետեւեալ հատորին վերահրատարակութիւնը կը թուի ըլլալ. *Գիւտերուն պատմութիւնը հին ժամանակներէն մինչեւ մեր ատենները,* Վիեննա, տպ. Մխիթարեան, 1854, 71 էջ:
(17) Տպագիր (ֆրանս.):
(18) Հրաչեայ Տէր Ներսէսեան (1881-1960)՝ պոլսահայ դպրանատէր, ապա Ֆրանսա հաստատուած:

(19) Ուշադրութիւնս կը շեղի (թրք.):
(20) Յանձնառու (ֆրանս. engagé):
(21) Տե՛ս Թէոդիկ, «Երկինք եւ ասպեղք», *Ամէնուն պարեցոյցը,* 1927, էջ 7-65: Ուսումնասիրութիւնը թուագրուած է 24 Ապրիլ 1926:
(22) Վերոյիշեալ էջին մէջ տպուած է հիւսիսային եւ հարաւային կիսագունդերու ասպեղային քարտէսը՝ «Երկինք եւ ասպեղք» խորագրով, որուն ներքեւ գրուած է. «Ասպեղագիտական ծանօթութիւնք՝ 1927ի հատորով»:
(23) Պիմէն Զարդարեան (1881-1957)՝ պոլսահայ գրավաճառ եւ բանաստեղծ:
(24) Հերմինէ Քէրէսթէճեան-Լեմոնճեան (1902-1962)՝ Թէոդիկի քրոջ աղջիկը, Շահան Շահնուրի քոյրը:
(25) Առապ-առապ (թրք.):
(26) Մօրդ, կնոջդ ու զաւակիդ (թրք.)
(27) Այս անձին ինքնութիւնը չկարողացանք պարզել:
(28) «Վերջին նամակ մը ողբացեալ Թէոդիկէ», *Երջանիկին պարեցոյցը,* 1931, էջ 178-179:
(29) Լեւոն Սէմէրճեան (1860-1926)՝ առեւտրական: Թէոդիկ գրած է պարեցոյցի մահախօսականներու բաժնին մէջ. «Առաքինազարդ Սկիւտարցի, 66 տարու, դասընկեր Եղիշէ Արք. Դուրեանի, աղքատիկ սան ճեմարանի՝ զոր 1911ին ի հիմանէ վայելչապէս կառոյց... Մանչեսդր դիրք շինելէ վերջ, եւ ուսուցչաց թոշակները մշտապէս ապահովեց իր քսակէն» («Մահագրական», *Ամէնուն պարեցոյցը,* 1927, էջ 625):
(30) Սաքաեան դամբանական խօսած է Սեմերճեանի (մահացած՝ Մայիս 30, 1926ին) թաղման: Ան նաեւ ճառ խօսած էր Սկիւտարի ճեմարանի բացման հանդէսին՝ Օգոստոս 21, 1911ին (Մարգիս Սաքաեան, «Սկիւտարի նոր “ճեմարան”ը», *Ամէնուն պարեցոյցը,* 1912, էջ 194-198):
(31) Գրիգոր Օտեան (1834-1887)՝ արեւմտահայ գրագէտ:
(32) Վիքթոր Հիւկօ (1802-1885)՝ ֆրանսացի գրագէտ:
(33) Իր «Մահ Վ. Հիւկոյի» գրութեան մէջ, Օտեան գրած էր. «Ուղեկորոյս մարդկութեան աղէտքը կատարեալ եղաւ, վերջին նաւահանգստին լապտերն ալ մարեցաւ» (*Գրիգոր Օտեան. սահմանադրական խօսքեր ու ճառեր, դամբանականներ, մահերու առթիւ գրուածներ,* հրատարակիչ Միքայէլ Կազմարարեան, Կ. Պոլիս, 1910, էջ 186):
(34) Թէոդիկ խօսուն կերպով աւելցուցած է մահախօսականին մէջ. «Փառաշուք յուղարկաւորութիւն, սիրտցաւ ազգայինք՝ դամբանախօս, Սկիւտարցիք ի սուգ» («Մահագրական», էջ 625):
(35) Տպուած՝ «1917ի»:
(36) Կ’ակնարկէ 1927ի հատորին:
(37) Ուղեղս (թրքերէն):
(38) Աչքիս լոյսը (թրքերէն):
(39) Զօրաւոր (թրքերէն):
(40) Չկուրնայ (թրքերէն):
(41) Տիրէ Տավա (Dire Dawa)՝ Եթովպիոյ քաղաք:
(42) Այս անձին ինքնութիւնը չկարողացանք պարզել:
(43) Ամբար (ֆրանս. depot):
(44) Այդ թուականներուն, Թէոդիկի որդին՝ Վահագն, Նիւ Եորք կ’ապրէր:
(45) Ակնարկութիւնը թրքական հնարաւոր սեղմումներէն խուսափելու մասին է:
(46) Վնասակար (թրք.):
(47) Երմոգ Գույումճեան (1868-1945)՝ պոլսահայ երաժշտագէտ, երգիծագիր: Նոյն թղթակցին մէջ պահպանուած է Գույումճեանէն 27 Մայիս 1927 թուակիր նամակ մը Ս. Սաքաեանին:
(48) Նմանը, զոյգը (թրք.):
(49) Ամենայն հաւանականութեամբ, խօսքը դրամական պարտքի մը մասին է:
(50) Յօդուածն ու յարակից նիւթերը լոյս տեսած չեն «Ամէնուն պարեցոյցը»ին մէջ:
(51) Արիստակէս Ա. քհնյ. Հիսարլեան (1856-1937)՝ պոլսահայ կրօնաւոր ու երգահան:
(52) Նեղութիւն (թրքերէն):

(53) Յարութիւն Գ. Մրմըրեան (1860-1926)՝ արեւմտահայ մտաւորական:
(54) Միքայէլ Շամտանճեան (1874-1926)՝ արեւմտահայ մտաւորական, Մեծ Եղեռնի վերապրողներէն:
(55) Տե՛ս «Մենէ անդարձ մեկնողներ», *Ամէնուն տարեցոյցը,* 1927, էջ 631-632: 1928ի թիւին մէջ լոյս տեսած է Շամտանճեանէն գրութիւն մը՝ «Վերջին գրութիւնը» վերտառութեամբ, հանդերձ լուսանկարով (Միքայէլ Յ. Շամտանճեան, «Մտածումներ», *Ամէնուն տարեցոյցը,* 1928, էջ 404-405):
(56) Տե՛ս «Մենէ անդարձ մեկնողներ», *Ամէնուն տարեցոյցը,* 1927, էջ 628-630: Մրմըրեանէն անտիպ մը լոյս տեսած է նաեւ 1928ի հատորին մէջ (էջ 374-375):
(57) Զարմայր Ա. քինյ. Կէզիւրեան (1865-1955)՝ պոլսահայ կրօնաւոր եւ խմբագիր: 1930ական թուականներուն շուշտակ վարդապետ ձեռնադրուած է ու 1938ին արդէն յիշուած՝ իբրեւ ծայրագոյն վարդապետ (*Ժողովրդական տարեգիրք,* կազմեց՝ Սահակ Մխիթարեան, Գ. տարի, Իսթանպուլ, 1938, էջ 70):
(58) «Հայ խօսնակ»՝ կրօնական ամսաթերթ (Պոլիս, 1924-1939): 1941ին լոյս տեսած է համանուն տարեգիրքին միակ թիւը, որուն յառաջաբանին մէջ, Զարմայր Ծ. վ. Կէզիւրեան գրած է. «Ամբողջ 14 տարի հոգեսէր ու գրասէր ընթերցողներու ամսէ ամիս սրտի ու մտքի սնունդ հայթայթելէ ետք, այս տարի *Հայ Խօսնակ* կը ներկայանայ *տարեգիրքի* ձեւով...» (*Հայ խօսնակ տարեգիրք,* պատրաստեցին՝ Զ. Ծ. Վ. Կէզիւրեան եւ Թ. Ազատեան, Ա. տարի, Իսթանպուլ, 1941, էջ Գ):
(59) Լուսանկարը տե՛ս Զ.Ա.Ք. [Զարմայր Ա. քինյ. Կէզիւրեան], «Անհետացած դէմք մը», *Հայ խօսնակ,* Օգոստոս 1926, էջ 236-237:
(60) Աւելիով:
(61) Կ'ակնարկէ Հրաչեայ Տէր Ներսէսեանին:
(62) Ըստ երեւոյթին, պատասխանը դրական եղած է: Տե՛ս «Ընթերցողներս ու ինքս», *Ամէնուն տարեցոյցը,* 1927, էջ 6, որուն վերջին կարծիքը ստորագրած է Հրաչեայ Տէր Ներսէսեանը:
(63) Տե՛ս Մարգիս Մաքաեան, «Գաղափարի քանդակներ», *Ամէնուն տարեցոյցը,* 1927, էջ 352-353:
(64) Նախադասութիւնը գրուած է նամակի առաջին էջին ձախ եզերքը:
(65) Վաղինակ Փափազեան (մահ. 1930)՝ Սկիւտարի Թաղական Խորհուրդի, դպրոցի հոգաբարձութեան եւ զերեզմանատան յանձնաժողովի բազմամեայ անդամ ու ատենապետ:
(66) Նախադասութիւնը աւելցուած է երկրորդ էջին ձախ եզերքը:
(67) Այդ նամակը պահպանուած չէ:
(68) Թուղթի մակնիշ:
(69) Անընթեռնլի ձեռագիր (ֆր.):
(70) Մ.Մաքաեանի դժուար ընթեռնլի բառը ամենայն հաւանականութեամբ «չարչարանքիդ» է, ինչպէս ենթադրած է Թէոդիկ:
(71) Կ'ակնարկէ Զարմայր քինյ. Կէզիւրեանին:
(72) Կ'ակնարկէ նախորդ նամակով խնդրուած Մրմըրեանի լուսանկարին: Վերջինիս նկարը, անտիպ գրութեամբ հանդերձ, լոյս տեսած է 1928ի տարեցոյցին մէջ (Յարութիւն Գ. Մրմըրեան, «Անմահութիւնը փիեգերքի մէջ», *Ամէնուն տարեցոյցը,* 1928, էջ 336):
(73) Մարտիրոս Մնակեան (1837-1920)՝ պոլսահայ դերասան ու բեմադրիչ:
(74) Տե՛ս Սմբատ Դաւթեան, «Օսմանեան թատրոն (1882-1908). Մնակեան վարչութիւն», *Ամէնուն տարեցոյցը,* 1927, էջ 416-423, ուր Մնակեանէն երկու լուսանկար կայ: Մնակեանի մասին նիւթեր եւ լուսանկարներ լոյս տեսած են նաեւ «Ամէնուն տարեցոյցը»ի 1928ի (էջ 344-355) եւ 1929ի (էջ 352-355) հատորներուն մէջ:
(75) Հերմոգենէս Տարսոնացի (Ք.Ե. Բ. դար)՝ յոյն նշանաւոր հռետոր, որ Մարկոս Աւրելիոս կայսեր ուշադրութիւնը գրաւած է, սակայն 25 տարեկանին, թերեւս հիւանդութեան մը պատճառով, կորսնցուցած է իր մտային կարողութիւնները:
(76) Մ. Տիգելիոս Հերմոգենէս՝ հռոմէացի երաժիշտ, երգիչ եւ արուեստներու հովանաւոր:
(77) Օգոստոս (Ք.Ա. 30 - Ք.Ե. 14)՝ Հռոմի առաջին կայսր:

(78) Հեղինակ՝ «Հերմոգենեան օրէնսգիրք» անունով հաւաքածոյին, որ կազմուած է 38 բաժիններէ, եւ որ Ջ. դարուն «Յուստինիանոսի օրէնսգիրք»ին հիմերէն մէկը կազմած է:
(79) Ոնորիոս՝ Հռոմի (393-395) եւ ապա Հռոմէական Արեմտեան Կայսրութեան (395-423) կայսր:
(80) Թէոդոս Բ. (408-450)՝ Հռոմէական Արեւելեան (Բիւզանդիոնի) կայսր:
(81) Պալենց՝ պոլսահայ գրավաճառատուն, հիմնուած՝ 1867ին (փակման թուականը անյայտ է): 1928ին ծանուցուած է անոր փարիզեան ճիւղին բացումը (*Ամէնուն Տարեցոյցը,* 1928, էջ 629), որ սակայն կարճատեւ գոյութիւն ունեցած է, քանի որ անոր պահեստի գնումով, 1930ին Հրանտ Սամուէլ բացած է «Արեւելեան գրատուն»ը Փարիզի մէջ:
(82) Ալփասլան (Աղեքսանդր Փանոսեան, 1858-1919)՝ պոլսահայ բանաստեղծ:
(83) Աղեքսանդր Փանոսեան, *Այգեկութք. Առաջին քաղ,* Պոլիս, տպարան «Ճիհան», 1908:
(84) Պահեստ (անգլ. stock):
(85) Կ'ակնարկէ Պիմէն Ջարդարեանին:
(86) Կտրածոյ, կտրօն (ֆրանս. coupure):
(87) Մուրբ Անտոն ճգնաւոր (251-356)՝ անապատականութեան հիմնադիր:
(88) Յոգնած (թրք.):
(89) «Արեւ» (1915)՝ եգիպտահայ օրաթերթ, պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան:
(90) Երուանդ Օտեան (1869-1926)՝ արեւմտահայ երգիծաբան:
(91) Օտեան մահացած է Գահիրէ, 3 Հոկտեմբեր 1926ին («Երուանդ Օտեան ոչ եւս է», *Արեւ,* 4 Հոկտեմբեր 1926): Մահուան լուրը տե՛ս «Վերջին պահուն», *Ամէնուն Տարեցոյցը,* 1927, էջ 640, իսկ մահագրութիւնը՝ *Ամէնուն Տարեցոյցը,* 1928, էջ 635-638:
(92) Թուականը եւ էջերու քանակը յիշողութեան վրէպներու պէտք է վերագրել: «Արեւ»ի Օտեանին յատկացուցած է 13 Նոյեմբեր 1926ի թիւին առաջին, երկրորդ եւ չորրորդ էջերը:
(93) Տե՛ս Թէոդիկ, «Հայ «մոլորակ»ին», *Արեւ,* 13 Նոյեմբեր 1926: Յօդուածին ամբողջական հրապարակութեան համար, տե՛ս նոյն, «Հայ «մոլորակ»ին», *Ամէնուն տարեցոյցը,* 1928, էջ 468-471: Մոյն հատորին մէկ բաժինը (էջ 458-471) յատկացուցած է Օտեանին, ուր գրութիւններ ստորագրած են Լեւոն Բաշալեան («Անհետացող դէմք մը»), Վահան Թէքէեան («Դազաղին առջեւ»), Միքայէլ Ս. Կիւրճեան («Իր յիշատակին»), եւ Յովհաննէս Ասպետ («Բօթին տպաւորութեան տակ»՝ Թէոդիկին ուղղուած նամակէ մը քաղուածք): Տպուած են Օտեանի «Ասուլիս» երկխօսութենէն հատուած մը եւ տարեցոյցի 1916-1920ի հատորին հրապարակութեան առիթով կարճ գրութեան մը ձեռագիրը, եւ «Արեւ»ի յատուկ թիւէն արտատպուած են Թէքէեանի «Առ Երուանդ Օտեան» քերթուածը, Յակոբ Օշականի «Նիշեր» գրադատականը եւ Միքայէլ Ս. Կիւրճեանի «Իր յիշատակին» յուշագրութիւնը:
(94) «Արեւ»ի յատուկ թիւին մէջ լոյս տեսած են հետեւեալ նիւթերը. «Գրիգոր Օտեանէն առ Երուանդ Օտեան (անտիպ նամակ մը)» (Վ.Թ.), «Օտեանի յիշատակին» (Միքայէլ Ս. Կիւրճեան), «Առ Երուանդ Օտեան» (Վահան Թէքէեան), «Երուանդ Օտեան (նիշեր)» (Յ. Օշական), «Քանի մը խորհրդածութիւններ ողբացեալ Երուանդ Օտեանի անհետացման առթիւ» (Յ. Մեթեան), «Հայ մամուլը Երուանդ Օտեանի մասին անոր մահուան առթիւ», «Կուսակցական եւ անհատական հանգամանքներու թէորիան» (Երուանդ Օտեան), «Հայ "մոլորակ"ին» (Թէոդիկ), «Օտեանի դպրոցը» (Ռաուլ-Բօնշօն):
(95) «Հայաստանի Կոչնակ» (1900-1968)՝ ամերիկահայ շաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ, աւետարանական ուղղութեամբ:
(96) Թէոդիկ, «Տաւրոսի լեռներուն մէջ», *Հայաստանի Կոչնակ,* 1 Յունուար 1927, էջ 23-25:
(97) «Սիոն»՝ պաշտօնաթերթ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան: Առաջին շրջան՝ 1866-1877: Երկրորդ շրջանը սկսած է Յունուար 1927ին եւ կը շարունակէ լոյս տեսնել մինչեւ այսօր:

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐԵԱՆ

ԵՐԳԻՇԱՆՔԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄԸ ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ երգիծանք, հեգնանք, փոխաբերացում, անձնաւորում, ծիծաղ:

Իտալացի յայտնի փիլիսոփայ Բ. Կրոչեն սրամտօրէն նկատել է, որ երգիծականի բոլոր բնորոշումներն իրենց հերթին երգիծական են եւ օգտակար այնքանով, որ առաջացնում են այն զգացմունքը, որը փորձում են վերլուծել:

Երգիծական երկ ստեղծելը հեշտ չէ, պակաս դժուար չէ նաեւ այն վերլուծելը:

Ըստ Ն. Հարթմանի՝ երգիծականը գեղագիտութեան ամենաբարդ խնդիրներից է: Իսկապէս, ծիծաղը սնդիկի նման է, այն դուրս է սպրդում տեսաբանի ձեռքերից: Սա է երգիծականի բնոյթի ուսումնասիրութեան դժուարութիւնը:

Կատակերգութիւնը զարգացող քաղաքակրթութեան արդիւնքն է, հասարակութեան բարձրագոյն ձեւերից մէկը:

Վ. Գ. Բելինսկին գրել է. «Կատակերգութիւնը քաղաքակրթութեան գոյնն է, զարգացած հասարակութեան պտուղը»:

Ասել է, թէ երգիծականը պահանջում է մտքի զարգացման առաւել բարձր աստիճան:

Գրականագիտական բառարանը տալիս է երգիծական գրականութեան հետեւեալ բնորոշումը. «Գեղարուեստական այն ստեղծագործութիւնները, որոնց մէջ ծաղրւում են հասարակական կեանքի արատներն ու մարդկանց թերութիւնները»:

Երգիծական ստեղծագործութեան հիմքում դրւում են կեանքի կատակերգական կողմերը, այսինքն՝ այնպիսի երեւոյթներ, որոնց բացասական էութիւնը ծածկուած է խաբուսիկ արտաքինով: Բացայայտելով բովանդակութեան ու ձեւի այդ հակասութիւնը՝ գրողը հասնում է երգիծական տպաւորութեան:

Երգիծաբանը կեանքի կատակերգական երեւոյթները ցայտուն, սուր եւ արտայայտիչ ձեւով պատկերելու համար միտումնաւոր ձեւով խտացնում, չափազանցնում է գոյները՝ դրա համար օգտագործելով երգիծանքի տարբեր միջոցներ»:

Ի. Բորեւը դիպուկ կերպով երգիծաբանին համեմատել է հասարակական մարմինն առանց ցաւագրկման վիրահատող բժշկի, իսկ երգիծանքը՝ հատու նշտարի հետ, որը պէտք է օգտագործել առանձնակի հմտութեամբ:

Շահան Շահնուրը հրաշալի է տիրապետում այդ գործիքին: Նա երգիծական պատկերների հասնում է տարբեր հնարքներով:

Երգիծանքն ինքնին միանշանակ չէ, այն ունի դրսեւորման տարբեր աստիճաններ՝ հումոր, կատակ, դառն հեգնանք: Հեղինակից մեծ հմտութիւն է պահանջւում երգիծական պատկեր ստեղծելիս, քանի որ ծիծաղի եւ ծաղրի սահմանը հեշտ է խախտել եւ դա պայմանաւորուած է նաեւ հանգամանքներով, որոնցում արւում է կատակը: Սա շատ որոշակի ներկայացնում է Շ. Շահնուրի հերոսը. «Ան ի՞նչ գէշ բան եղաւ,- կ՚ըսէր [Տիրան] ու կը պնդէր, թէ ոեւէ մէկն ալ իրեն պէս պիտի խնդար եղածներուն վրայ՝ առանց վարպետը [Տագէս] ծաղրելու դիտաւորութեան: Թէ մեղաւորը դէպքերն էին միայն, որոնք դժնդակ էին, անտարակոյս, բայց միաժամանակ ծիծաղելի էին անվիճելիօրէն» («Դերձակ մը, իր երկու հիւրերը եւ գանագան դէպքեր»):

Լեգուն ինքնին երգիծական չէ, այն երգիծական է դառնում, երբ արտացոլում է խօսողի հոգեւոր կեանքի որոշ գծերը, նրա մտածողութեան անկատարութիւնը:

Վերը յիշատակուած պատմուածքի («Դերձակ մը...») հերոս Տիրանը պատմում է իր ուսուցիչ Տագէս աղայի մասին եւ ընթերցողը նրա մտքի «փայլատակումից» փոթկացնում է. «Գործի մտած օրս մայրիկս մատնոց մը նուիրեց ինձ եւ, խառնուածքս գիտնալով՝ ըսաւ, թէ պէտք է ջանամ խելքս կարին տալ եւ աչքը մտնալ հայրիկիդ: Եւ առաջին օրն իսկ, երբ որ երեկոյին տուն դարձայ, մայրիկիս վիգը նետուելով ըսի, թէ *անմիջապէս աչքը մտած էի վարպետիս* (ընդգծումները մերն են-Լ.Ս.): *Խանութին մէջ մուկ մը սատկացուցած էի:* Մի՞տքդ է, վարպետ...»: Իսկ պատմութեան շարունակութիւնը աւելի գաւեշտալի է դարձնում պատկերը. «Իրաւ է, որ *մեծ դանակը կոտրուեցաւ, բայց սատկեցաւ նաեւ մուկը:* Ասչափ մուկ մը»:

«Մանուկ մը տարեցներու մէջ» պատմուածքի հերոս Սրապիոն աղան ուզում է բողոք ներկայացնել իր լուսամուտներին քար նետած հարեւանուհու դէմ: Եւ ոստիկանատուն գնալուց առաջ հաշուարկում է վնասը. «Երկարօրէն զումարեց ու բազմապատկեց պատուհանները, ապակեգործները, օրուան սակը եւ *իր տասը մատները*: Բայց յաջորդ առաւօտեան հիւանդ էր: Սրտին բաբախումները

սաստկացած էին, մէջքը կը ցաւէր, գլուխը կը դառնար, ծունկերը կը կոտրրտէին... Օր մը վերջը Սրապիոնին վիճակը որեւէ փոփոխութիւն չէր կրած, *միայն բարձրացած էր կորրած ապակիներուն արժէքը*»:

Շահնուրի երգիծանքն այստեղ միահիւսւում է հեգնանքին, բայց այնպէս, որ չի վիրաւորում, այլ մատնացոյց է անում արատներն ու թերութիւնները՝ շտկման ակնկալիքով:

Սրապիոն աղան երգիծւում է ոչ առանց պատճառի, եւ այդ պատճառը թաքնուած է նրան բնորոշող մէկ հատիկ բառում՝ «մարդուկ»: Այս փոքրոգի ու չնչին մարդը խիստ մանրախնդիր է: Բայց նաեւ հաշուենկատ է: Այս յատկանիշները հեգնելու համար Շահնուրը դիմում է հետաքրքիր հնարքի՝ կրկնութեան. «Աղմուկով կը բացուին դռները: Սրապիոն աղա եւ Ճանտառմայ միաժամանակ կը սլանան դէպի թարմ նպատակակէտը, աղբակալներն ու աւելները կարկառած՝ *կամ գրեթէ*. մուճակները քարշ տալով՝ *կամ գրեթէ*: Ո՞վ պիտի հասնի ամէնէն առաջ: Ալեմտաղցին երբոր չհասնի, կը վերադառնայ հայհոյելով *կամ գրեթէ*: Բայց մարդուկ Սրապիոնին համար մեծխօսիկութիւնն ու հպարտացումը անհրաժեշտ պահանջներ են: *Հոս գրեթէ չկայ*: Կ'ուզէ անպայման քաղել յոգնութեան պտուղը եւ յաջողութիւնը փողահարել»:

Շ. Շահնուրը բառօգտագործման մեծ վարպետ է, բառի եւ միջավայրի անհամապատասխանութիւնն օգտագործելով, նա հասնում է չափազանց նուրբ, գրեթէ անտեսանելի հեգնախառն հումորի: Երկու ծերունիների *սլանալը* դէպի *թարմ նպատակակէտը* (գոմաղբ)՝ գործիքները *կարկառած* ստեղծում է անհեթեթ պատկեր, եւ այդ անհեթեթը դառնում է զուարճալի:

Երգիծանքի ստեղծման շահնուրեան միջոցներից մէկն էլ իրերի փոխաբերացումն է, նրանց այնպիսի արժէք վերագրելը, որը յանգեցնում է ծիծաղի:

«Լողացող լուացքատունը» պատմուածքի հերոսը այսպէս է նկարագրում իրենց հիւանդասենեակի իրերը. «Պատի հին ժամացոյց մը կար մեր հիւանդասենեակին մէջ, բայց աւելի քան շնչահեղձ էր եղած: Երբ գործելէ կը դադրէր, մատուցարարուհին աւելի կոթով չոր հարուածներ կը հասցնէր անոր կողերուն: *Աւելին կոթը երբեմն կը տեսնէր իր գործը, եւ նորէն կը լսէինք թիք-թաքը*»:

Կամ. «Շէնքը չափազանց հին ըլլալուն համար փոր տուած էր բակին կողմը, իսկապէս վտանգաւոր կերպով: Եւ *որպէսզի չփլի*, անոր կոթենեցուցած էին փոքրիկ աւել մը, որ իր կանաչ կոթին վրայ կը կրէր դեռ Գալրրի Լաֆայէթի պիտակը» («Դերձակ մը, իր երկու հիւրերը եւ զանազան դէպքեր»):

Շահնուրը կարող է երգիծել նաեւ մարդու եւ իրերի փոխյարաբերութիւնը: Դա պարզորոշ երեւում է «Դերձակ մը, իր երկու հիւրերը եւ զանազան դէպքեր» պատմուածքում. «...պատին վրայ ելեկտրականութիւն հաշուող հին գործիք մը, զոր *Տիրան կոթած էր*: Ան կը հաշուէ, երբ որ Տիրան պատշաճ նկատէ, եւ կը դադրի գործելէ, երբ որ Տիրան անհրաժեշտ չտեսնէ»: Իսկ կարգաւորումը կատարւում է «մէկ քանի ճարտար ապտակներով»:

Շատ յաճախ զաւեշտականի հիմք ծառայում են Շահնուրի հերոսների միամտութիւնը, անտեղեակութիւնը, անկեղծօրէն ասուած մի արտայայտութիւնը, որոնք, իրավիճակին անյարիր լինելով, ծիծաղ են առաջացնում:

Այսպէս՝ աղջիկը զայրանում է իր սիրեցեալի վրայ.

- Խելք ըսիմ՝ չունիս. զարգացում ըսիմ՝

չունիս. հարստութիւն ըսիմ՝ չունիս. գեղեցկութիւն ըսիմ՝ չունիս. *մէկ որդ մը ունէիր*, որ քեզ նուրբ կը պահէր, հիմա ան ալ չունիս...

Բոլորովին սմքած գինուորը կակագեց.

- Ան ալ չունիմ... մեղքը ի՞մս է... *Ապրուած պու

ՄԱՐԻՆԷ ՂԱՁԱՐԵԱՆ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ. ԳԻՒՂԻ ՀԵՔԻԱԹԸ

Հեքիաթը շինուած ըլլալու է մարդերէն շատ առաջ...
Յ. ՕՇԱԿԱՆ

Բանալի բառեր - *Հեքիաթ, գիւղաշխարհ, հայրենի տուն, տօներ, բարքեր, սովորոյթներ, աւանդազրոյց, իրական կեանք, ազգային ցաւ*

Օշական արուեստագէտի աշխարհընկալումը եւ գեղարուեստական մտածողութիւնը արտայայտուած է նաեւ նրա «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուում, որն առաջին անգամ լոյս է տեսել 1922 թուականին Կ.Պոլսում: Թէպէտ գրուածքների մեծ մասը վերնագրուած է «Հեքիաթ», այս գործերը, սակայն, անվերապահօրէն հեքիաթ համարելը այնքան էլ ճիշդ չէ, քանի որ գիտական գրականութիւնից մեզ յայտնի է, որ հեքիաթը, արկածային-երգիծական բնոյթի ստեղծագործութիւն է, որը, չնայած հիմնւում է իրականութեան վրայ, սակայն պատմում է ոչ որպէս իրականութիւն: Օշականը նոյնպէս իր «Երբ պատանի են», «Երբ պզտիկ են», «Հինէն ու նորէն», «Կայսերական Յաղթերգութիւն», «Վկայութիւններ», «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուները համարում է վիպակներ եւ «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուն գնահատելիս գրում. «Առանձին եղանակ մը, իրենց մեծ մասին մէջ, հեքիաթ մը շատ մօտիկէն յիշեցնող, որ նոյն ատեն կը քսուի համբաւաւոր արձակ քերթուածին, վտանգելու չափ պատումին հիմնական առաքինութիւնը, թուելով զառածիլ դէպի արձակ նկարագրումը, բայց մնալով վտանգէն ասդին»: Գրականագէտները նոյնպէս այս ժողովածուին գրական սեռի տարբեր բնորոշումներ են տալիս: Կիմ Աղաբէկեանը Օշականի «Խորհուրդներու մեհեանը» համարում է հեքիաթ-պատմուածքների շարք եւ նշում, որ հեքիաթ եւ պատմուածք բառերը օգտագործուում են թէական, ոչ ճշգրիտ իմաստով: Նա կարծում է, որ ներքին բովանդակութեամբ եւ գեղարուեստական կատարման առումով պատմուածքների այդ շարքերը կազմում են հատուածայնութեամբ գրուած վիպական մի ամբողջութիւն: Վ. Գաբրիէլեանը գրում է, որ յիշեալ երկերը հեռանում են պատմուածքի գրական սեռից՝ հակուելով դէպի տպաւորապաշտ արձակ բանաստեղծութեան սեռը: Ինչեւէ, մեր նպատակը ոչ թէ այս ժողովածուի գրական սեռի խնդիրներին, այլ նրանում առկայ աւանդազրոյցներին՝ գիւղի հեքիաթին անդրադառնալն է:

Ժողովածուն ունի «Մահուան ծաղիկներ» վերնագրուած շարք, որի առաջաբանում Օշականը պատմում է իր կեանքի ողբերգական դրուագները, այն տարիները, երբ թուրքական իշխանութիւնից խոյս տալու համար թաքնւում էր նոյնիսկ անծանօթների տներում եւ մի հնարքով փրկւում:

Ինչպէս հեքիաթն է ընդհանրապէս ժողովրդի մտքի, հոգեկան աշխարհի, երազանքների ու ձգտումների արտայայտութիւն, այնպէս էլ Օշականի այս երկերը դարձան գրողի աշխարհայեացքի եւ նե-

բաշխարհի արտայայտութիւն: Յիշելով տարիներ առաջ իրեն եւ «իրպէսներուն» հեքիաթներ պատմող կոյր հօրաքրոջը՝ Օշականը «Կաղանդի հեքիաթ» երկում գրում է. «Ան հովերուն թեւ կու տար, ամպերուն՝ ձայն ու կրակ»: Եւ Օշականը պատմում է իր գիւղի հեքիաթը՝ թեւ տալով հովերին, ձայն ու կրակ ամպերին: Նա պատմում է «... շատ մը հեքիաթներ, որոնք իրական ու անիրական կեանքին մէջտեղը կը ծփան»:

Որպէս ընդհանուր երեւոյթ նշենք, որ Օշականի յիշեալ գործերը հիմնականում ունեն որոշակի սկիզբ, որը բուն հեքիաթին նախորդող հատուածն է: Դրանցում Օշականը խօսում է իր գիւղի որեւէ տեղանուան մասին (Աղուընակ-քար, Իգնիկի լիճ, Աւեղում-աղբիւր, Աւագանի անտառ եւ այլն), կամ նկարագրում տարածուած որեւէ տօն, ապա հօրաքրոջ, ձկնորսի, բարի պառաւի կամ «մամերի» բերանով պատմում է դրանց առնչուող աւանդութիւններ՝ մտքով եւ գնալով դէպի հայրենի Սէօլէօգ գիւղ:

Օշականի հեքիաթները՝ փիլիսոփայական հարցադրումներով, կը պատմեն կեանքի եւ մահուան փոխյարաբերութեան, յաւերժական սիրոյ, մարդկային արժէքների եւ յարաբերութիւնների, կնոջ առեղծուածի, ազգային ցաւի մասին: Եւ եթէ փորձենք ըստ նիւթի խմբաւորել դրանք, ապա կարող ենք առանձնացնել մի քանի խումբ՝ խոհափիլիսոփայական, գիւղի տօների, բարքերի ու սովորոյթների մասին պատմող, հայ ժողովրդի ճակատագիրը քննող հեքիաթներ:

Օշականն իր հեքիաթներում անդրադարձել է աշխարհստեղծման պատմութեանը («Ինչո՞ւ կը մեռնինք»), փորձել գեղարուեստօրէն պատկերել այդ ընթացքը: Աստծու եւ սատանայի երկխօսութիւնների, նրանց խոհերի միջոցով գրողը փորձում է գտնել շատերին յուգուղ հարցերի պատասխանները. ի՞նչ է կեանքը, ինչո՞ւ են մարդիկ մեռնում, ինչո՞ւ է մարդն իր ունեցածը գնահատում այն կորցնելուց յետոյ միայն, ո՞րն է մարդ արարածի կոչումը, ինչի՞ համար են ցաւն ու տառապանքը, ինչո՞ւ է սէրը գուգորդւում մահուան հետ, ո՞րն է ամենածանր կսկիծը, ի՞նչ է պէտք առհասարակ մարդուն, եւ այլն: Գտնելով այս հարցերի պատասխանները՝ գրողը պատգամում է ապրել Աստծոյ պատուիրաններով. «Սիրի՛ր մերձաւորիդ այնպէս, ինչպէս քո անձը»:

Մարդկային բախտի եւ ճակատագրի հարցերը քննելիս («Ինչո՞ւ կը մեռնինք», «Արեւն ու լուսնկան») Օշականը կարծում է, որ մարդը չի կարող փոխել իր ճակատագիրը, բայց կարող է ազդել նրա վրայ: Գրողը հակադրւում է այն տեսակէտին, որ վրայ հասած բոլոր դժբախտութիւնները պայմանաւորուած են մարդու ճակատագրով: Նա կարծում է, որ բոլոր աղէտները ճակատագրի անունից գործում են մարդիկ. «Կ'ըսեն, թէ ճակատագիրը երբեմն աչքերը կը բանայ իր ահաւոր քունէն ու փայլակի մը մէջ կ'աշխատի դարմանել աղէտները, որոնք իր անունով, իր կամքովը, բայց առանց իր գիտնալուն գործուեցան մարդերուն մէջ»:

Յաւերժական սիրոյ հարցը հայ եւ համաշխարհային շատ գրողների հոյակապ ստեղծագործութիւնների նիւթ է դարձել: Յիշենք Յովհ. Թումանեանի «Անուշը» բանաստեղծական երկը, երբ սիրահար գոյգը մահից յետոյ ձուլւում է բնութեանը, վերածնւում մի այլ ձեւի մէջ՝ երկնակամարում իրար միացող աստղերի գոյգի: Նոյն գաղափարն են արտայայտում Աւ. Իսահակեանի «Յաւերժական սէրը» ասքը, Վ. Հիւգոյի «Փարիզի Աստուածամօր տաճարը» վէպը եւ այլ ստեղծագործութիւններ: Այս հարցին անդրադարձել է նաեւ Օշականը («Աղուընակ-քարը»)՝ ընդգծելով յատկապէս սիրոյ տուած ցաւի մեծութիւնը. «Այնքան իրար ամուր փակած սիրողները, գերեզմանին խորը իրենց մոխի-

րին մէջ ալ պիտի շարունակէին տառապիլ ու ողբալ» (էջ 350):

Օշականը, ինչպէս ուրիշ շատ գրողներ, փորձել է հասկանալ կնոջ հոգու անյապակ խորութիւնը, բացայայտել նրա առեղծուածը: Նա կատարում է հռետորական մի քանի հարցադրումներ, որոնց նպատակը ոչ թէ պատասխան ստանալն էր, այլ դրանց միջոցով կին-առեղծուածի էութեան մեկնաբանումը. «Ինչո՞ւ անոնց աչքերը աւելի շուտ ու շատ կը խօսին, քան անոնց սիրտերը», «Ինչո՞ւ, ինչո՞ւ անոնք միշտ մետաղը (ոսկի - Մ.Ղ.) փնտռեցին», «Ինչո՞ւ անոնք վախցան հոգիին մերկութենէն ու խենթի պէս, խենթի պէս փնտռեցին պաշտպանութիւնը բեհեզին» (էջ 393): Այնինչ՝ երիտասարդ աղջնակի սիրտը անտես աղաւնու նման պիտի թեւածի երկնքի լազուրներում, սիրած էակի հոգու մէջ պէտք է մնայ ինչպէս առաւօտուայ ցօղը, ինչպէս թեթեւ շնչից խուսափող վայրի վարդը: Կնոջ մեծագոյն առաքելութիւնը պէտք է լինի զաւակներ լոյս աշխարհ բերելը, կեանք պարգեւելը, որովհետեւ զաւակները մարդու կեանքում տունջեան ու գիշերային լուսատուներ են՝ արեւ ու լուսին: Օշականը փորձում է պարզել նաեւ մօր ու զաւակի միջեւ եղած անբացատրելի ու գերբնական կապը, փորձում է գտնել այն անտեսանելի թելերը, որոնք, չնայած բազում անջրպետների, միանում են իրար («Արեւն ու լուսնկան»):

Իր տարբեր գործերում Օշականը բազմիցս յիշել է մարդու՝ կեանքում երազ ունենալու կարեւորութեան մասին: Հեքիաթներում, սակայն, գրողը յանգում է այն մտքին, որ երազ ծնում է մարդկային տկարութիւնը: Հակասական են նաեւ ամուրի աղջիկներին տուած բնութագրումները: Նա երբեմն փորձում է արդարացնել, երբեմն էլ մեղադրել նրանց: «Պառաւին անէծքը» պատմուածքում նա գրում է, թէ ամուրիների ցաւն ու տառապանքը խորունկ են: Իսկ «Արեւն ու լուսնկան» հեքիաթում խտացնում է «տունմնայ» (չամուսնացած) կամ մերժուած աղջիկների նախանձի զոյները: «Նախանձը կուպրէ ծաղիկ մրն է, որ աղջիկներուն հոգիին մէջ շատ անգամ կը ծաղկի» (էջ 394): Չար նախանձի ահաւոր հետեւանքները ցոյց տալու համար որպէս հեքիաթի գործող անձինք Օշականը ընտրում է երեք քոյրերի՝ կարծես ընդգծելու նրանց հոգու սառնութիւնը:

Պէտք է նկատենք մի փաստ. չնայած այն հանգամանքին, որ Օշականի «Խորհուրդներու մեհեան» ժողովածուում զետեղուած գործերը որպէս հեքիաթ են ընկալւում «թէականօրէն», ունեն հեքիաթին բնորոշ ինչ-ինչ առանձնայատկութիւններ: Սակայն ժողովածուում կայ երկու պատմուածք՝ երկուսն էլ «Հին պատմութիւն» վերնագրով, որտեղ հեքիաթին ամբողջութեամբ փոխարինելու է գալիս գիւղի դաժան իրականութիւնը: Ցեղադարձ հայեացք ձգելով դէպի իր գիւղը, մանուկ օրերի իր տպաւորութիւններին գումարելով հասուն տարիքի իր դատողութիւնները՝ Օշականը քննում է իր գիւղի մարդկանց սովորոյթները, բարքերը, մարդկային յարաբերութիւնները եւ գնահատական տալիս դրանց: Ինչպէս «հին օրերու գիրք մը» կամ «հին օրերու բերան մը», Օշականը պատմում է մի աշխարհի մասին, որը նրա գիւղն է: Եւ ամէն անգամ, երբ մտքով յետ է գնում «դէպի աւրուած երջանկութիւնը մեր գեղին» (էջ 411), ցաւ է ապրում խեղուած ճակատագրերի ու կործանուած գեղեցկութիւնների պատճառով, որոնք զոհ են գնացել սնահաւատութեանը՝ ողջ կեանքն անցկացնելով դառնութեան եւ միայնութեան մէջ, զրկուած լինելով սիրած մարդկանցից, սիրած զբաղմունքից, բնութեան գեղեցկութիւնները վայելելուց: Բայց կեանքի ոչ մի անարդարութիւն այնքան ցաւ չի պատճառում նրան, որքան գիւղի բացառիկ գեղեցկութիւնների կորուստը:

Աւանդութիւնն արմատաւորուած էր դարեր ի վեր: Օշականը պատմում է գրոյցներ, որոնք չի էլ յիշում, թէ երբ եւ ումից է լսել: Բայց պատմողն ով էլ լինի, գուտ պատմող է եղել եւ անտարբեր «գոհերի»՝ հոգի կրծող ցաւի նկատմամբ. «Ի՞նչ միամիտ են թուղթերը եւ որքա՜ն անխելք են պառաւները» (էջ 418): Այս մարդկանց տառապանքն այլ էր, կարելի է ասել՝ կրկնակի, քառակի: Իր կեանքը փոխելու համար մարդը կարող է տարբեր միջոցներ ձեռք առնել, չհամակերպուել իրավիճակին, ըմբոստանալ մարդկանց դէմ, պահանջել: Սակայն Օշականի հերոսներից շատ-շատերը, որոնք հիմնականում իրական անձինք են եղել, սրիպուած էին հոգում լռեցնելու ոչ միայն սովորական մահկանացուին բնորոշ ցանկութիւնները, իղձերն ու փափաքները, այլեւ ըմբոստութեան ալիքը, որը նրանց ի վերջոյ վերածում էր խեղճ, կամագուրկ արարածների: Նրանք մտած էին մի կաղապարի մէջ, որ գիւղի աւանդութիւն էր կոչւում: Դրանից չէին խուսափում յատկապէս աղջիկները, որոնց տառապանքի ու կսկիծի խորութիւնը անչափելի է: Եւ այն աղջիկը, ով համարձակուել էր շրջանցել գիւղի բարքերը, դատապարտուած էր մահուան. «Ո՞ր աղջիկը մորթեց իր հոգիին մէջ տարփանքին աղաւնին ու օր մը անոր արիւնոտ վերադարձը չսպասեց» (էջ 420):

Գիւղում հիմնականում հարսանիքների ժամանակ պատմուող մի հին պատմութիւն բացայայտում է հայ գիւղի ամենասուրբ աւանդոյթները: Այն նպատակ ունէր աղջիկներին եր պահելու «աղջիկ օրերուն» գործելիք մեղքից: Աւանդութիւնը դաժան էր այն հարսների նկատմամբ, որոնք ամուսնական առագաստ էին մտել՝ «իրենց այտին վրայ օտար բերնի մը կրակովը»: Հեքիաթը պատմում է հարսների, նրանց խեղուած ճակատագրերի մասին, որոնք «Ծոցի-գիշերին» կիսամերկ ու բոպիկ դուրս են արւում ամուսնու տնից եւ ինքնասպան լինում՝ «չուանի մը հասակին յանձնելով իրենց մեղքը» (էջ 406): Գիւղի կարծիքով աղջիկը մեղապարտ էր. նա մեղանչել էր գիւղի ամենասուրբ աւանդոյթի դէմ ու պէտք է կեանքով վճարէր: Բայց Օշականի կարծիքով աղջկայ՝ սրբազան ծաղկի նմանուող մեղքն արդարացուած էր: Ակնյայտ է, որ Օշականը չի մեղադրում այդ աղջիկներին, այլ գովերգում է ամենակարող սիրոյ երազը («Հին պատմութիւն», «Կանանչ-կիրակի»):

Գիւղը տարբեր աղբիւրների շուրջ տարբեր հեքիաթներ էր հիւսել: Գիւղացին միշտ ինչ-որ մի պատմութիւն է կապել աղբիւրների հետ: Դրանք եղել են կեանքի եւ մահուան խորհրդանիշներ: Աղբիւրը կարող էր աւետաբեր լինել, կարող էր գարհուրելի մահուան խորհուրդ ունենալ: Այդ աղբիւրների մօտ բագում աղջիկներ երգել են իրենց բախտի երգերը («Աւետում-աղբիւր», «Կաղանդի պատմութիւն»):

Հայ ընտանիքներում գաւակ ունենալն ամենամեծ ուրախութիւնն էր, այդ իսկ պատճառով էլ աղբիւրը կոչւում էր «Աւետաբեր»: Տեսնում ենք նաեւ «Վիճակին Աղբիւրը» «ծաղիկներ փեսրտելու, բախտ կարդալու, կաթ ու կարագ ուտելու» գնացող աղջիկների, որոնց ուխտն աւարտւում էր՝ հաւաքուած ծաղկեփնջերը ջուրը նետելով՝ որպէս նուիրատուութիւն աղբիւրի ոգուն («Աւետում-աղբիւր»):

Աղբիւրների հետ կապուած էին բագում տխուր պատմութիւններ եւ դժբախտ պատահարներ: Նրանց «տիրուհիները» ժողովրդի շրջանում յայտնի էին «ծովի աղջիկ» անունով: Ամէն մի դժբախտութիւն ունէր որոշակի բացատրութիւն: Երբ մէկը «տղաբերքի արիւնոտ անկողինին մէջ խեղդուէր», ասում էին, որ նա «ցերեկուան ամայի ու չար ժամերուն» տեսել է «ծովի աղջիկ»: Այդ ոգիները ընտրում եւ կորստեան էին մատնում ամենագեղեցիկ աղջիկներին: Օշականը նրանց համեմատում է օտար հողում աճող ծաղիկների

հետ, որոնք թառամում են շատ շուտ՝ սպառելով իրենց գեղեցկութիւնը, խաբուելով աղբիւրից բարձրացող հարսի քօղով ու ոսկիներով զարդարուած մէկ այլ աղուորից:

Մարդիկ հաւատում էին, որ աղջիկները խաբւում էին տարբեր ոգիներից, որոնք այցելում էին յատկապէս «Ծնունդի գիշերին»: Այդ ոգիներն անտարբեր չէին կարողանում անցնել նորահարս ունեցող տների կողքով: Այն տները, որոնք պաշտպանուած էին ձիթենու ճիւղով կամ փայտէ խաչով, կարծես մնում էին անվնաս: Սակայն, այնուամենայնիւ, ոգիները ծանօթ մարդու ձայնով կանչում էին հարսներին ու տանում մահուան գիրկը:

Օշականի մանուկ օրերի տպաւորութիւններից անբաժան են Կաղանդի տօնը, նրա հետ կապուած աւանդոյթները, որոնց անդրադարձը կայ Օշականի գրեթէ բոլոր շարքերում: Հեքիաթներում («Կաղանդի պատմութիւն», «Կաղանդի հեքիաթ», «Կաղանդ գիշերով») նոյնպէս մեկնաբանւում է մանուկների այնքան սիրուած ու սպասուած տօնը: Մեր կարծիքով, նշուածներից առանձնանում է «Կաղանդի հեքիաթ» վերնագիրը կրող երկը, որտեղ ընթերցողը աւանդոյթներից զատ հաղորդակից է լինում գիւղի մանուկների հոգեբանութեանը, տեսնում գիւղի գեղնափոր տները, Օշականի բառերով ասած՝ «հողէ մեծ սենեակ մը», գերանով ծածկուած առաստաղից կախուած սերկեւիլի եւ խնձորի չորացրած շարանները, ամբողջ մարմնով զգում անգութ ձմրան սառնութիւնը: Տարիների հեռուից Օշականը անբացատրելի քաղցրութեամբ է յիշում Նոր տարուայ գիշերները, երբ կոյր հօրաքոյրն արգելում էր իրենց «պիլիթի ու պասպեղ» ուտել, մինչեւ հայրը «խաչ ու աղօթք ընելու, հոգու դդում ուտելու» համար «մեռելտնից» չվերադառնար: Երեխաներին զսպելու համար սկսում էին հօրքուրի՝ բարու եւ աշխատասիրութեան մասին պատմուող հեքիաթները, որոնք ամէն տարի պատմւում էին մէկ այլ ձեւով՝ կարծես նոյն հեքիաթի փոփոխութեամբ շեշտելով անցնող տարին, փոփոխուող կեանքը: Ու հեքիաթը խառնւում էր իրականութեանը, արթնացնում մանուկների երեւակայութիւնը:

Սովորաբար հեքիաթներն ունենում են խրատական բնոյթ: Թէպէտ Օշականն իր «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» աշխատութեան մէջ գրում է, թէ ինքը փորձել է զերծ մնալ ընթերցողին խորհուրդներ ու խրատներ պարտադրելուց, այնուամենայնիւ «Խորհուրդներու մեհեանը» ունի բազում այդպիսի հատուածներ:

Ինչպէս իր պատմուածքներում, Օշականն իր հեքիաթներում էլ մնաց հայի հետ, իր ցեղի ու նրա կրած տառապանքների հետ: Նրանցում արտայայտուած են հայ մարդու ոչ միայն տառապանքները, այլեւ ցանկութիւնները, երազանքները: Օշականը պատմական անդրադարձ է կատարում եւ գնահատում պատմութեան ընթացքը: Գրողին յուզում է հայ ժողովրդի քաղաքական բախտի խնդիրը: Նրա կարծիքով հայ ժողովուրդը համակերպուել էր իր բախտի հետ՝ անտեսելով վաղուց հաստատուած մի ճշմարտութիւն՝ ազատութիւնը տրւում է պայքարի ու արեան գնով: Հայ ժողովրդի գլխին կախուած վտանգների պատճառն Օշականը համարում է անտարբերութիւնը, անիրաւութիւնը, միասնական պայքարի բացակայութիւնը: «Ինչո՞ւ կը մեռնինք» հեքիաթում գրողը հետեւեալ միտքն է արտայայտում. «Ու տակաւին Աստուած չի գիտէր, թէ հոս մարդը կը մեռնի, ազգեր սուրէ կ'անցուին, մանուկները ողջ-ողջ կը թաղուին ու կիներու արգանդէն կենսաւորուող միսերը դանակներու ծայրը կը գամեն» (էջ 354): Օշականի կարծիքով մեր անտարբերութիւնից էլ ծնւում է Աստծոյ անտարբերութիւնը: Մեզ բաժին էր ընկել այս ճակատագիրը, «որովհետեւ այնքան կը զբա-

ղինք մենք մեգմով» (էջ 354):

Օշականը պարգորոշ լսեց «ցեղին սրտի» բաբախը, հասկացաւ նրա ցաւը ու նաեւ այն, թէ ինչը կ'ապրեցնի ֆիզիքական բնաջնջման վտանգի մէջ գտնուող իր ժողովրդին: «Կաղանդ գիշերով» հեքիաթը պատմում է այն Աստծոյ մասին, որին բաժին էր ընկել տառապած ցեղի «մեռելները հովուելու» անփառունակ ցաւը: Եւ մեր ցեղն էլ դարեր շարունակ կամեցել է այդ Աստծոյ մէջ տեսնել «ցեղին չմեռնող հոգին»: Այսպէս են կամեցել «մեր ցեղէն անոնք, որոնց նայուածքը լեռներէն ի վեր քալել է սիրած» (էջ 381): Եւ Օշականն էլ, որը մէկն էր այն հայրենասէրներից, ովքեր ուզում էին ցեղի չմեռնող հոգին տեսնել, հասկացաւ, որ ազգին պահողը նրա արթուն երազն է: Նոյն աւանդութիւնը պատմում է, որ Աստծոյ աչքի առջեւ ամէն Կաղանդի գիշեր երեւում են մեր երկրի բոլոր անկիւնները եւ պայքարը այն մարդկանց դէմ, ովքեր ցանկացել են սպաննել մեր երազը: Եւ ամէն տարի՝ Կաղանդ գիշերով, հայ մեռելները վերակենդանանում են, այցելում իրենց տները եւ նորից ճանապարհւում դէպի սրբազան լեռը՝ լսելու այնքան շատ սպասուած խաղաղութեան աւետիսը: Ցիրաւի, կարող ենք ասել, որ սա տառապած ժողովրդի տառապած գաւակի երազն է՝ տեսնել իր հնամենի ժողովրդի ազատ ու խաղաղ երկինքը: Պարզ է, որ սա նաեւ երկար տարիներ խաղաղութիւն եւ ազատութիւն երազող ժողովրդի ցանկութիւնն է, «անպարագիր գերեզմանատուն» համարուող երկրի գաւակների արդար ցանկութիւնը: Հեքիաթի՝ «Կու գան մեռելները» մի քանի անգամ կրկնուող տողը աւելի է սաստկացնում այդ երազանքն ի կատար ածուած տեսնելու ցանկութիւնը: Ու ամէն անգամ՝ Կաղանդ գիշերով, մեռելները վերադառնում են իրենց գերեզմանները՝ «կանխահաս ու անբացատրելի հաւատքով արբեցած»:

Օշականի «Խորհուրդների մեհեանը» ժողովածուն տարբեր մտքերի, տեսակէտների, հարցադրումների տեղիք կարող է տալ: Գրականագէտ Վ. Գաբրիէլեանը գտնում է. «Այդ պատմուածքները, գիւղի մարդկանց մասին հեքիաթային, բանահիւսական պատմութիւնները բնաշխարհի քնարական պատկերներն էին, որ հաւաքուեցին «Խոնարհները» (1921) եւ «Խորհուրդներու մեհեանը» (1922) ժողովածուներում: Իսկ Կիմ Աղաբէկեանը գրում է. «Օշականը պատրանք է ստեղծում, թէ ինքը յեսպադարձ հայեացքով վերապատմում է մանկութեան օրերին լսած հեքիաթները: Թւում է նաեւ, թէ հեքիաթների միջից ստեղծում է իր հեքիաթները: Մինչդեռ իրականում նա ուղեգծում է իր հոգեխառնութեան կազմաւորման ընթացքը»: Ի վերջոյ ո՞րն է գրողի նպատակը՝ վերապատմե՞լ մանուկ օրերի իր լսած գրոյցները, գրե՞լ իր խոհերի մասին, գնահատե՞լ գիւղի կեանքը, թէ'...: Մի բան վստահ կարող ենք ասել, որ գրողի գլխաւոր նպատակը իր գիւղի համապատկերը, բարքերն ու սովորոյթները, գիւղի մարդկանց հոգեկան ներաշխարհը բացայայտելն է: Մի խօսքով՝ հայրենի գիւղի ու հայրենի տան յիշատակները վառ պահելը:

Թէպէտ Օշականի «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուում երբեմն կան իրարամերժ մտքեր, գրուածքների նիւթը միագիծ չէ, պատումը երբեմն խրթին է, ինչը դժուարացնում է հիմնական ասելիքի տարբերակումը, այնուամենայնիւ, դրանք հայ գիւղի տօների, բարքերի ու սովորոյթների մասին պատմող հրաշալի երկեր են: Եւ ուսումնասիրելով Յ. Օշականի «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուն, նրա առանձնայատկութիւնները՝ կարող ենք ասել, որ գրողի «հեքիաթների» աղբիւրը միայն բանահիւսութիւնը (աւանդազրոյցները) չէ, այլեւ ժողովրդի պատմութիւնը, իր կեանքի պատմութիւնը, իրական կեանքը:

ՍԻՐՈՒՆ ԵՐԷՅԵԱՆ ԳԵՂԱՄԱԿԱՐԻՉ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԵՐՈՒ ԳՈՅՆԻ ՔՐՄՈՒՀԻ

Տեւաբար ինքզինք կատարելագործող արուեստագիտուհի մըն է Սիրուն Երէցեան (ծնած 1951-ին, Լիբանան, յաճախած է Վահան Թէքէեան եւ Դարուհի Յակոբեան վարժարանները):

Տաղանդ մը, որ Պէյրութի մէջ արուեստ ուսանելէ ետք, ինքզինք կատարելագործած է ամերիկեան համալսարաններու մէջ: Զարդարուեստ՝ գեղագէտի շնորհով, եւ դպաւորապաշտի վրձինով ղէմքեր, մարդիկ, գիծերէն եւ գոյներէն անդին զգնուող աշխարհներով, որոնց հետ զրոյցի կը հրաւիրէ Սիրուն Երէցեան:

Հարկ է նախ իմանալ, թէ ի՞նչ կայ այս արուեստագէտ հայ կնոջ հոգեկան մղումներուն մէջ: Իր գործերը միշտ կարելի է մեկնաբանել, մեկնաբանողներ եղած են: Ինչո՞ւ ան զարդարուեստէն կ՚անցնի գեղանկարչութեան, ինչո՞ւ այնքան սէր ունի հայ դարերուն նկարմամբ, կարծէք զանոնք կ՚ուզէ դեռնել համաշխարհային արուեստին մէջ, որպէս ոգեկանութեան պարկեր, խօսուն, անցեալը ներկային բերող:

Սիրուն Երէցեանի հետ բանաւոր զրոյցը դժուար դարձած է, անկարելի: Կը լսէ, չի պատասխաներ: Կը պատասխանէ համակարգիչին ընձեռած բարիքով, անոր հետ կը խօսի եւ անոր միջոցով կը գրէ՝ նայուածքով:

Սիրուն Երէցեան (երբ դեռ կրնար նկարել)

Հարցումները պէտք է գրել, որոնց ինք կը պատասխանէ քիչ մը անդին զգնուող համակարգիչի նշաններով, նայուածքը կը թելադրէ զանոնք, զորս խօսքի վերածողներ կան, այս արուեստագէտ հոգին չբանտարկելու համար բնախօսական չարիքի պատրի ետին:

Պիտի խօսինք արուեստի, անով ապրելու, անով հաղորդակցելու եւ անով մեր մէջ եղող, բայց յաճախ քնացող մարդկայինին մասին:

Սեւեռող սիրամարգներ

«ԲԱԳԻՆ».- Սիրուն Երէցեան, կ՚ուզէի, որ մեր զրոյցը ըլլար ջերմ, ուղղակի, մտրածումներ արթնցնելով: Հակառակ դժուարութեան, որ ձեզի համար պառապանք է, պիտի ուզէի, որ զրուցենք, հոգ չէ թէ միջնորդութեամբ, արուեստով հաղորդուելու եւ առօրեայէն անդին տարբեր բան տեսնելու եւ նուաճելու ազնիւ եւ ազնուացնող փորձին մասին: Ե՞րբ դրսեւորուած է «նկարելու» ձեր հակումը, շրջապատի ազդեցութիւնը ի՞նչ եղած է:

ՍԻՐՈՒՆ ԵՐԷՑԵԱՆ.- Ծնած եմ Լիբանանի «Թիրօ» կոչուած գաղթականը, ուր արթնցած է իմ հետաքրքրութիւնս արուեստին հանդէպ: Հասայ եմ այն եզրակացութեանս, թէ՝ «Չքաւորութիւնս հարստութեանս մէջ է»:

Մեր փայտաշէն «քանդակ» բնակարանը կառուցուած է հարուստներուն կողմէ աղբանոց դրուած երաժշտական գործիքներով, հօր՝ Տիգրան Վասիլեանի կողմէ, որ վեց տարեկանին՝ 1915-ին, անցած է Սուրիոյ անապատով, հասնելու համար որբանոց:

Ան ինքնուս արուեստագէտ, երաժիշտ եւ գրող էր, եւ մեր բնակարանը կառուցեց իր հերոսական մէկ աչքով, քանի որ իր միւս աչքը կորսնցուցած էր որբանոցին մէջ, Ցեղասպանութեան որպէս հետեւանք:

Ան ինծի ամէն բան սորվեցուց. իմ երաժշտական խեղճ բնակարանիս մէջ եւ հայրս եղաւ միակ անձը, որ գիս ներշնչեց՝ ինծի սորվեցնելով երաժշտական տարբեր գործիքներ նուագել, նկարել եւ նոյնիսկ գրել:

Ամուսինիս՝ Յարութ Երէցեանի մահէն ետք, հանրածանօթ Լոս Անճելէսի Ապրիլ Գրապան տէրը, հինգ տարիէ ի վեր կը տառապիմ ALS Lou Gehrig հիւանդութենէն, բայց հակառակ ասոր, գրեցի երեք գիրք՝ բացառիկ տեսողութեամբ աչքերովս:

«Բ.».- Պէյրութի մէջ հետեւած էք զարդարուեստի, Art Déco, շատեր այդ մէկը ըրած են, բայց ինչպէ՞ս եւ ինչո՞ւ հոն կանգ չէք առած: Այդ տարիներուն Պէյրութի մէջ գեղանկարչական արտակարգ մթնոլորտ կար: Որո՞նք ձեզ քաջալերած են, որ զարգացնէք ձեր բնական հակումը, շնորհը: Ձեզի սերնդակից, թերեւս ոչ տարեկից կիներ ալ ընթացած են նոյն ձեւով, ինչպէս Լէոնի Փիլաւճեանը, Միրէյ Գոկիկեանը եւ ուրիշներ՝ զարդարուեստէն անցնելով գեղանկարչութեան:

Ս. Ե.- Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն եկայ Լոս Անճելէս, երբ 26 տարեկան էի: Կ՚ուսանէի Լիբանանի երաժշտանոցը, կը պատրաստուէի

օփերայի երգչուհի ըլլալ, մեց-
go-սոփրանօ: Միաժամանակ
Ապրոյեանի հագուստի գոր-
ծարանին մէջ կ'աշխատէի,
երբ դասնութ դարեկան էի:
Մեծ գործարանի տէրերը
նկատեցին արուեստներու
հանդէպ իմ դաղանդս, զիս
դրկեցին Beirut University
College ուսանելու համար հա-
գուստի նորաձեւութիւն: Բայց
դժբախտաբար երկու ուսում-
նարաններէն ալ չվկայուեցայ
քաղաքացիական պատերազ-
մին պատճառով:

Հասկցայ, որ Միացեալ Նա-
հանգներուն կը պատկանիմ, եւ
նախ յաճախեցի UCLA համա-
լսարանը, ապա Otis Parson Art
Center, չորս տարի լրջօրէն
նկարչութիւն ուսանեցայ եւ
դարձայ յայտնի նկարչուհի,
միաժամանակ հիմնեցի Ռոս-
լին արուեստի ցուցասրահը՝
Լոս Անճելրսի հանրածանօթ եւ
երկար ատենէ ի վեր գործող
գեղարուեստի կեդրոնը:

«Բ.».- Ձեր նկարներուն մէջ կայ արտակարգ յուզում, տխրութիւն՝ ի տես ցաւին: Աղբամաններու կողքին մանուկներ, որոնք կարծէք չեն գիտակցիր իրենց թշուառութեան, ունին մանուկի անմեղութեան ուրախութիւն: Ի՞նչ զգացած էք եւ ի՞նչ կ'ուզէք փոխանցել:

Ս. Ե.- Երբ Լոս Անճելրս եկայ եւ տեսայ անտուն ու աներդիք մարդիկը մերկ ճամբեզրին յաճախուած փողոցներու մէջ, խորապէս ցնցուեցայ այդ վիճակէն, եւ այդ՝

Մուրացիկները (1989)

Աղբամանները (1989)

աշխարհի ամէնէն հարուստ երկիրներէն մէկուն մէջ: Բազմաթիւ կապեր հաստատեցի անտուն վեթերաններու եւ թշուառ կիներու հետ՝ անոնց տալով սնունդ, ռմպելի, եւ բարեկամներ դարձանք, քանի որ ես հասկցայ, թէ ի՞նչ կը նշանակէր ան-

Եթէ Ապանայի մէջ ըլլայի

Ինքնանկար

տուն ըլլալ: Նկարեցի անտուն վեթերան բարեկամս իր «բնակարաններ»ուն մէջ, աղբանոցի տոպրակներ, եւ նկարեցի անտուն բարեկամուհիս, որ սովորութիւն ունէր քնանալու աղբի սեւ տոպրակներու մէջ: Ձեր բոլորէն, այս տողերը ընթերցողներէն կը խնդրեմ, որ օգնէք կարիքաւոր ընտանիքներուն եւ յոյս տաք անտուն մարդոց, քանի որ մենք ալ կրնանք գտնուիլ իրենց վիճակին մէջ: Կուրօրէն մի անցնիք անոնց քովէն: Օգնեցէ՛ք անոնց, որքան որ կրնաք:

«Բ.».- Ի՞նչ կ՚ուզէք փոխանցել մարդկային կուրակուող դէմքերով, կամ կիներու ուրուագիծերով, որոնք գումարուելով կը դառնան խորհրդաւորութեան թելադրութիւն (Evalution, 2008): Իրապաշտ-դպաւորապաշտ պատկերներ:

Ս. Ե.- Ես իմ գեղանկարներս կը կոչեմ իմ գաւակներս կամ սիրականներս: Իւրաքանչիւր գեղանկար տարբեր ոճի է, եւ ամէն մէկը կը փորձէ փոխանցել տարբեր պատգամներ, օրինակ, գեղանկարներս կը վերաբերին Հայոց ցեղասպանութեան եւ Հրէական ողջակիզման, նաեւ համայն աշխարհի մէջ պատահող վայրագութեանց, որոնք կը գործադրուին ասպուածներու անունով գինեալներու կողմէ, ինչպէս է պարագան այսօր ՏԱՀԵՇի, եւ որոնք նոյնիսկ մարդ կը գլխատեն ու իրենք գիրենք կը սպաննեն:

Գեղանկարներս կը խօսին կիներու մասին, որոնք կը խաչուին ու տառապանքի կ՚ենթարկուին իրենց ամուսիններուն կողմէ՝ կրօնական կամ պահպանողականութեան պատճառներով: Միւս գործերս կը վերաբերին բնաշրջման, զարգացման, եղափոխութեան: Ամբողջ կեանքիս ըն-

թացքին հաւատացած եմ մարդասիրութեան, այլասիրութեան եւ հաւասարութեան գաղափարներու, եւ որպէս agnostique (մարդ՝ որ կ'ընդունի, թէ անգէտ է կեանքի եւ բնութեան գաղտնիքները ամբողջութեամբ իմանալու), կ'ապեմ կրօնները, որոնք աշխարհի պատերազմներուն պատճառ են:

«Բ.».- Ձեր ինքնանկարը (Autoportrait, 1989-2005) ինքնակենսագրութիւն է: Ի՞նչ կ'ուզէք ըսել այդ անյաց աչքերով:

Ս. Ե.- Կ'ուզէի ջնջել իմ պարզ ինքնանկարս ուրիշ մը նկարելու համար, բայց աչքերս սեւեռեցան իմ վրաս, ըսելու համար որ կանգ առնեմ, եւ 1985-էն մինչեւ 2005 ամէն ամիս յաւելում մը ըրի ինքնանկարիս վրայ, եւ ան կը ցոլացնէ իմ պատմութիւնս, բազմաթիւ աչքերով, եւ իմ լաւագոյն ընկերներս, սիրամարգներ գլխուս վրայ, (ես կը կոչուիմ Տիկին Սիրամարգ, քանի որ նկարած եմ երկու հազարէ աւելի սիրամարգներ) իմ խորհրդաւոր ինքնանկարս կ'առնչուի կեանքիս տարբեր հանգրուաններուն, քանի որ այդ ինքնանկարս կը պատկանի Ֆրանսայի Լուվրի թանգարանին, եւ պէտք է կախուի Լէոնարդօ դա Վինչիի Մոնա Լիզայի կողքին, եւ ան նուազ արժէքաւոր չէ Մոնա Լիզայէն:

«Բ.».- Գեղարուեստական եւ մարդկայնական այս որոնումները կը պսակուին հայերէն «սիրուն» զարդագիրներով: Մեր դասերը զարդանկարի վերածելու այս երկարաշունչ աշխատանքը զարդանկարային ըլլալէ աւելի է: Աւելի քան երկու հարիւր էջ: Ի՞նչ բան ձեզ կը մղէ այդքան երկար մտորելու մեր դասերու հետ. դարերու խորքէն եկող խորհո՞ւրդ, սէ՞ր, կորսուելու վտա՞նգ:

Մալվինա մեդրաքսի վրայ

Ս. Ե.- Իմ նախասիրած «Սիրուն Տառեր» գիրքս կեանքիս քսան տարիները կ'ընդգրկէ, քսան տարուան որոնումներ, նկարազարդելու համար հայկական տառերը, իւրաքանչիւրը իմ ստեղծագործութիւնս է, քանի որ ես կը ցանկամ, որ իւրաքանչիւր հայ սերունդ, ներկայի եւ ապագայի, ունենայ իմ գիրքս, եւ ընդօրինակէ իմ գծագրութիւններս եւ զանոնք գունաւորէ:

«Բ.».- Հայերէն արտակարգ նրբութեամբ «ձայնանիշ»ները իրե՞նք կը թելադրեն գոյները, քիչ մը մեր ինք-

նութեան եւ պատրմութեան որպէս համանուագ, քիչ մըն ալ Թորոս Ռոսլինի հետքերով:

Ս. Ե.- Իմ գեղանկարչական ցուցասրահս կոչած եմ Թորոս Ռոսլինի անունով, քանի որ ան իմ կուռքս է, ես հետեւած եմ իր քայլերուն եւ իր գոյներու երանգներուն: Երբեմն նոյնիսկ կը խորհիմ, որ ես Թորոս Ռոսլինի վերամարմնաւորումն եմ:

«Բ.».- Հայադրոշմ գեղանկարչութիւնը կրնա՞յ համաշխարհայնանալ: Հայ գեղանկարիչը հայ դրոշմէն հրաժարելով եւ ձուլուելով ընդունելի ընդհանրականին մէջ, նմանելով ուրիշի, կրնա՞յ իրապէս մեծնալ:

Ս. Ե.- Հայ գեղանկարչութիւնը կրնայ միջազգայնանալ, բայց ատոր համար ալ հայ հարուստները պէտք է գնեն նկարները եւ գանոնք նուիրեն հռչակաւոր թանգարաններու, որպէսզի հայ գեղանկարիչները միջազգային ճանաչում ունենան, քանի որ հայ արուեստագէտները արժէքաւոր են նոյնքան, որքան աշխարհի ոեւէ արուեստագէտ: Ես կը կարծեմ, թէ հայ ժամանակակից արուեստագէտները կրնան հռչակաւոր դառնալ, քանի որ Հայաստան ազատագրուած է համայնավարութենէ, եւ սփիւռքի բոլոր արուեստագէտները կրնան տիրական կերպով մեծ ըլլալ, եթէ իրենց գործերը նուիրեն թանգարաններու:

«Բ.».- Ի՞նչ են կեանքի նուաճումներդ:

Ս. Ե.- Հակառակ անոր որ 64 տարեկան եմ, սակայն ապրած եմ 200 տարի, ԿԵԱՆՔի աւագ միլիոնատէր եմ, կեանքիս մէջ ոչ իսկ վայրկեան մը կորսնցուցած եմ, այլ գիշեր-ցերեկ աշխատած եմ, ունիմ արեւալոյսի եւ լուսինի շողարձակման արուեստ: Առաջինը կը մշակեմ առաւօտները, անոնք կը վերաբերին հայկական լուսաւորութեան, իսկ լուսինի լոյսի արուեստով կը գբաղիմ գիշերները, առանց քնանալու, որովհետեւ կը հաւատամ, թէ քնանալը կեանքի վատնում է:

Անձնական սեփականութիւն

Սիրուն Երէցեան, նոյեմբերի օր մը, իր սայլակին վրայ նստած, հաղորդակից դարձաւ իր ցուցասրահին մէջ ներկայացուած գեղանկարներու, լսեց ինչ որ ըսուեցաւ, բայց գարմանք պատճառող հաստատակամութեամբ, հակառակ իր անօրինակ հիւանդութեան պարտադրած բանտին, մասնակից էր արուեստին եւ արուեստագէտներու աշխարհին:

Նոյեմբեր 2015 - Լոս Անճելըս

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

ԶԱՐԵՀ ԽՐԱԽՈՒՆԻ
Արթօ Ճիւմպիւշեան Հոկտեմբեր 1926 - Նոյեմբեր 2015

«Բանաստեղծութիւնը գերազանցապէս իմացական արուեստ մրն է, որ կը խօսի ուղղակի մտքին: Ի՞նչ ըսեր են Անդրէ Պրրթոն եւ Փօլ Էլուար. բանաստեղծութիւնը պէտք է իր մէջ այն չափով գաղափար պարունակէ, որքան խնձորը՝ սնունդ: Օր պիտի գայ, որ բանաստեղծութիւնը միայն գլուխով պիտի կարդացուի»:

Եղեռնի յաջորդած պոլսահայ բանաստեղծութեան աւագ դէմքերէն հանդիսացաւ Զարեհ Խրախունի, շարունակողը Եղեռնի զոհ արեւմտահայ գրականութեան արուեստագէտ սերունդին: Մխիթարեան վարժարանէն շրջանաւարտ, Պոլսոյ համալսարանին մէջ հետեւած է իմաստասիրութեան ճիւղին: Ապա՝ Փարիզ, գրականութեան եւ արուեստի: Անխոնջ աշխատող մը, որ վկայեց հայու հոգիի անմահութեան մասին: Երկրորդ աշխարհամարտէն ետք հրապարակ կու գայ իր ինքնատիպ ստեղծագործութիւններով, Պոլսոյ մէջ վերստին ծաղկող հայ գրականութեան բերելով իր ինքնատպութեան նպաստը: Պոլսահայ գրականութեան գլխաւոր դէմքերէն եղաւ Զահրատի հետ:

Հատորով լոյս տեսած գործեր՝ «ՔԱՐ ԿԱԹԻԼՆԵՐ», «ԵՍ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ», «ԼՈՒՍՆԱՊԱՐՏԷԶ», «ՍՏՈՒԵՐ Է ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳ», «ՏՕՆԱԿԱՐԳ», «ՍՐՏԻ ԽՕՍՔ»:

Խմբագրած է ՄԱՐՄԱՐԱ թերթի գրական բաժինը: Գրած է իմաստասիրական յօդուածներ եւ կատարած է թարգմանութիւններ:

ԼԵՒՈՆ ՄՈՒԹԱՖԵԱՆ
Թատերագէտ, գրող, արուեստաբան
Ռուսիա, 7 Հոկտեմբեր, 1954 - Երեւան, 11 Նոյեմբեր, 2015

Լեւոն Մութաֆեան թատերական գործիչ էր, բեմադրիչ, խմբագիր, արուեստաբան, գեղարուեստական հանդէսի խմբագիրի տեղակալ, դասախօս տարբեր համալսարաններու մէջ, Հայաստան եւ արտասահման, եղած է Հայաստանի թատերական գործիչներու միութեան վարչութեան քարտուղար:

Արժանացած է «Արտիստ» մրցանակի եւ զանազան շքանշաններու: Հեղինակ է թատերական երկերու. «Ուրախ ճամբորդութիւն», «Աղաւնին», «Օրօրօցային երկուսի համար», որոնք բեմադրուած են տարբեր թատրոններու մէջ: Ուշագրաւ է «Պատուոյի Վաղոն» երկը: Հայերէնի թարգմանած է Չեխովի, Լորկայի, Միւսէի, Բուլգակովի, Գոլդմանի, Գորկիի գործերը: Հեղինակ է տպագրուած 25 գիրքի, գրած է 20 գիտական յօդուածներ:

«ՄԱՐԱԾ ԿԱՄ ԳԵՐՄԱՆԻԿ ԵՒ ՀԵՐՈՍ ԶԷՅԹՈՒՆ»
Երկասիրեց՝ **Գրիգոր Հ. Գալուստեան (Կիլիկեցի)**
Անթիլիաս, 2015

«ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ՝ ԱՌԱՆՑ ՀԱՍՑԷԻ»
Հեղինակ՝ **Շահանդուխտ**
Պէյրութ, 2015

«ԲԱՐԻ՛ ԼՈՅՍ, ՄԱՐԴԻԿ...»
Հեղինակ՝ **Անդրանիկ վրդ. Կռանեան**
Պէյրութ, 2015



«ԲԺԻՇԿԻՆ Գ. ԽՕՍՔԸ» - «ԲԺԻՇԿԻՆ Դ. ԽՕՍՔԸ»
Հեղինակ՝ **Բժիշկ Կարպիս Հարպոյեան**
Անթիլիաս, 2015



«ԳԱԲԷԹ ԱՐԵԳ»
Հեղինակ՝ **Պէպօ Սիմոնեան**
Պէյրութ, 2015

«ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑԸ- Դէպքեր, դէմքեր, վկայութիւններ 90-ամեայ ճանապարհին»
Հեղինակներ՝ **Սարգիս Նաճարեան**
Պէյրութ, 2015

ԿԱՐԵՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼԸ.

ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՉՂՐԿԵԼ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ,
ՈՐՈՆՔ ՆԱԽԱՊԷՍ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ ԳԻՐՔՈՎ, ՄԱՄՈՒԼՈՎ ԿԱՄ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ